

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

Նվիրվում է Խ. Արովյանի անվան Հայկական
Պետական Մանկավարժական Համալսարանի
հիմնադրման 100 ամյա հիթեղանին

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

Հոդվածների ժողովածու

Երևան
Լուսակն
2022

ՀՏԴ
ԳՄԴ
Ս

**Ժողովածուն երաշխավորվել է Խ. Աբովյանի անվան
ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի խորհրդի կողմից**

Խմբագիր՝ Մայա Գրիգորյան

Մայր Աթոռ Ս.Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու

Նաղաշ Հովնաթան: Հոդվածների ժողովածու.- Երևան:
Լուսակն, 2022.- 101 էջ:

Ժողովածուն նվիրվում է ուշ միջնադարի մեծ բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի հիշատակի 300-ամյակին: Նրանում զետեղված հոդվածները ներկայացնում են բանաստեղծի, նկարչի, աշուղի ստեղծագործության տարբեր թեմաները:

Ժողովածուն օգտակար է հայ միջնադարով հետաքրքրվողների, դպրոցի ուսուցիչների, բանասիրական ֆակուլտետների ուսանողության համար:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN 978-9939-899-35-0

Լուսակն, 2022

Նվիրվում է
Նաղաշ Հովնաթանի
հիշատակի 300-ամյակին

ՆԱԽԱԲԱՆ

Այս տարի լրանում է հայ միջնադարյան հարուստ քնարերգության խիստ ինքնատիպ և անմոռաց դեմքերից մեկի՝ Նաղաշ Հովնաթանի(1661-1722) հիշատակի 300-ամյակը:

Նա հայտնի է եղել ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում: Վրաց Վախթանգ Վեցերորդ թագավորի պալատական աշուղն ու նկարիչն էր: Մեծ կենսասերը հայ քնարերգությունը հարստացրել է նոր ժանրերով՝ խնջույքի, ուրախության երգերով ու երգիծական ոտանավորներով, որոնք խիստ քննադատում են մարդկային կյանքում մշտապես տեղ գտած ազաւիւթյունը, ծուլւթյունը, խաբէւթյունը, տգիտւթյունը, նախանձը, անբարոյականւթյունը: Այդ տաղերն ունեն ճանաչողական մեծ արժեք:

Նաղաշ Հովնաթանը, հատկապես սիրո երգերում, հանճարեղ Սայաթ-Նովայի նախորդ է. վերջինս ծանոթ է եղել Հովնաթանի երգերին, նույնիսկ ազդվել է դրանցից:

Հովնաթանն աշխարհիկ անձնավորություն էր: Բանաստեղծի և նկարչի համար կարևոր են եղել իր ազգի առաջադիմելը, լուսավորյալ լինելը, աստվածաշնչային պատվիրաններով ապրելը:

Իրական կյանքի գեղեցկւթյունը, մարդկային ջերմ փոխհարաբերւթյունները, բնության գեղեցիկ տեսարանները, կյանքը մտածված ու չափավոր ձևով վայելելու պատգամները նրա կենսասեր տաղերի բովանդակւթյունն են:

Հովնաթանը կնոջը նայում է հավասարի իրավունքով: Նրա սիրելի էակը գրագետ է, նամակներ է գրում, ցանկանում է ունենալ իր նկարը, որը ռեալիստական լինի, ոչ թե սրբապատկերային:

Նաղաշը այնպիսի պատգամներ ունի իր խոհախրատական տաղերում, որոնք ասվել են բոլոր ժամանակների համար: Նա պահանջում է երբեք չվիրավորել մարդուն, մարդկային լեզուն գերծ պահել հայհոյանքներից, ծերացած ծնողներին խնամել այնպես հոգատար, ինչպես խնամում են տնային բույսերին: Մրանք պահանջներ են, որոնք մշտապես պետք է ուղեկցեն մարդկային հասարակւթյանը:

Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությամբ զբաղվել են շատ նշանավոր բանասերներ, գրողներ: Դրանցից են Ներսես Ակինյանը, Արշակ Զոպանյանը, Հովհաննես Թումանյանը, Մանուկ Աբեղյանը, Ասատուր Մնացականյանը: Նաղաշ Հովնաթանը հիմնադիրն էր Հովնաթանյան նկարչական գերդաստանի, որի ներկայացուցիչների կերտած դիմանկարներն այսօր ցուցադրվում են Հայաստանի ազգային պատկերասրահի առանձին դահլիճում:

Նրա որդին՝ Հակոբը, հոր մահվան առիթով գրել է չափածո ողբ, որը եզակի կենսագրական փաստեր է պարունակում հասարակական ու մշակութային մեծ կշիռ ունեցող Նաղաշ Հովնաթանի մասին: Պատահական չէ, որ Սերո Խանզադյանն իր հիանալի «Մխիթար Սպարապետ» վեպում գործող անձ է դարձրել Հակոբ Հովնաթանյանին:

Նաղաշ Հովնաթանի հիշատակի 300-ամյակին նվիրված այս ժողովածուն Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների և բանասիրական ֆակուլտետի դեկանատի հիացական նվերն է՝ ուղղված հայ միջնադարի մեծ տաղերգուի հիշատակին:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյան

ПРЕДИСЛОВИЕ

В этом году исполняется 300 лет со дня памяти Нагаша Овнатана (1661-1722), одного из самых самобытных и незабываемых деятелей богатой армянской средневековой лирики.

Он был известен не только в Армении, но и в Грузии. Он был дворцовым трубадуром и живописцем грузинского царя Вахтанга VI. Великий жизнелюб обогатил армянскую лирику новыми жанрами, такими как песни застолья, радости и сатирическими стихами, в которых резко критикуются жадность, лень, обман, невежество, зависть и безнравственность, всегда имевшие место в жизни человека. Эти стихи имеют большую познавательную ценность.

Нагаш Овнатан является предшественником гениального Саят-Новы, особенно в песнях о любви. Последний был знаком с песнями Овнатана, даже находился под их влиянием.

Овнатан был мирским человеком. Для поэта-художника было важно, чтобы его народ мог прогрессировать, просвещаться, жить по библейским заповедям.

Красота реальной жизни, теплые человеческие отношения, красивые пейзажи природы, наказы наслаждаться человеческой жизнью вдумчивым и умеренным образом - вот содержание его жизнелюбивых стихов.

Овнатан смотрит на женщину, как на равную. Его возлюбленная грамотна, пишет письма, хочет иметь свой портрет, и чтобы он был реалистичным, а не иконой.

В поучительных стихах у Нагаша есть такие наставления, которые сказаны на все времена. Он требует никогда не оскорблять человека, беречь человеческий язык от нецензурной брани, заботиться о престарелых родителях, как о комнатных растениях. Это требования, которые всегда должны сопровождать человеческое сообщество.

Творчеством Нагаша Овнатана занимались многие известные филологи и писатели. Среди них Нерсес Акинян, Аршак Чопанян,

Ованес Туманян, Манук Абебян, Асатур Мнацаканян. Нагаш Овнатан был основателем семьи живописцев Овнатанянов, портреты, созданные которыми сейчас выставлены в отдельном зале Национальной галереи Армении.

Его сын Акоп написал по случаю смерти отца стихотворный плач, в котором собраны уникальные биографические факты о представляющем большое социальное и культурное значение Нагаше Овнатане.

Не случайно Серо Ханзадян сделал Акопа Овнатаняна действующим лицом своего замечательного романа «Мхитар Спарапет».

Этот сборник, посвященный 300-летию памяти Нагаша Овнатана, является превосходной данью преподавателей Кафедры древней и средневековой армянской литературы и методики ее преподавания, и Деканата филологического факультета АГПУ им. Х. Абовяна памяти великого армянского средневекового поэта.

Профессор Аэлита Долуханян

FOREWORD

This year marks the 300th anniversary of the commemoration of Naghash Hovnatan (1661-1722), one of the most original and unforgettable figures of the rich medieval Armenian lyric poetry.

He was known not only in Armenia, but also in Georgia. He was the palace troubadour and painter of the Georgian king Vakhtang VI. The great life lover enriched the Armenian lyrics with new genres, such as feast and joy songs, as well as satirical poems, which sharply criticize greed, laziness, deceit, ignorance, envy and immorality, which have always taken place in human life.. These verses are of great educational value.

Nagash Hovnatan is the forerunner of the genius Sayat-Nova, especially in love songs. The latter was familiar with Hovnatan's songs and was even influenced by them.

Hovnatan was a worldly man. For the poet-painter, it was important that his people could progress, be enlightened and live according to the biblical commandments.

The beauty of real life, warm human relationships, beautiful landscapes of nature and instructions to enjoy human life in a thoughtful and moderate way: these are the contents of his life-loving poems.

Hovnatan looked at the woman as an equal. His beloved was literate, wrote letters, wanted to have her portrait, and that it be realistic, not an icon.

In his instructive verses, Nagash has such instructions that are said for all times. He demands never to offend a person, to protect the human language from obscene terms, to take care of elderly parents like houseplants. These are demands that must always accompany the human community.

Many well-known philologists and writers were engaged in studying the works of Nagash Hovnatan. Among them are Nerses Akinian, Arshak Chohanian, Hovhannes Tumanian, Manuk Abeghian, Asatur Mnatsakanian. Nagash Hovnatan was the founder of the Hovnatanian family of

painters, whose portraits are now exhibited in a separate hall of the National Gallery of Armenia.

On the occasion of his father's death, his son Hacob wrote a lament in verse, which contains unique biographical facts about Nagash Hovnatan, who was a man of great social and cultural significance.

It is no coincidence that Sero Khanzadian made Hacob Hovnatanian the protagonist of his wonderful novel *Mkhitar Sparapet*.

This collection of works, dedicated to the 300th anniversary of Nagash Hovnatan commemoration, is an excellent tribute by the lecturers of the Chair of Ancient and Medieval Armenian Literature and the methods of its teaching, and the Dean's Office of the Faculty of Philology of the ASPU after Kh. Abovian in memory of the great Armenian medieval poet.

Professor Aelita Dolukhanyan



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԸ ՆՈՐԱՐԱՐ

*Հե՛յ ազաի մարդ, հե՛յ անգոռի մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ,
Քանի՜ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ,
Ի՛նչ են տարել նրբանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվա էս ճամփեդ:
Հովհաննես Թումանյան*

Ուշ միջնադարի հայ բանաստեղծության երևելի դեմքն է Նադաշ Հովնաթանը՝ կենսասեր, աշխարհիկ կյանքը գովերգող, Աստվածաշնչի պատվիրաններով ապրելու պարտադիր պահանջը բոլոր հայերին ներկայացնող աշուղ-բանաստեղծն ու նկարիչը:

Նադաշ Հովնաթանի քնարերգությունն առաջինը գնահատել է Արշակ Չոպանյանը, որը 1906 թ. Փարիզում հրատարակել է “Les Trouvères Arméniens” ժողովածուն՝ ֆրանսիացի ընթերցողի սեղանին դնելով իր թարգմանած «Հայ տրուբադուրներ» գիրքը՝ սկսելով Առաքել Բաղիշեցուց և հասնելով մինչև Ջիվանի: Այս ժողովածուն հետագայում լայնորեն ու շնորհակալ ձևով օգտագործելու է հայ քնարերգության բացառիկ գնահատող ու թարգմանիչ Վալերի Բրյուսովը՝ 1916 թ. Մոսկվայում լույս տեսած “Поэзия Армении” գրքում: “Les Trouvères Arméniens” գրքում Չոպանյանը գետեղել է Նադաշ Հովնաթանի երկու սիրային և մեկ խնջույքի տաղ՝ դրանց կցելով խիստ համառոտ տեղե-

կություն հեղինակի մասին: Ըստ այդ տեղեկության՝ Նաղաշ Հովնաթանն ապրել է XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին: Ստույգ հայտնի է նրա մահվան թվականը՝ 1722: Այդ մասին հայտնել է բանաստեղծի որդին՝ Հակոբը, հոր մահվան առիթով գրված չափածո ողբում: Հովնաթանը եղել է ն՝ բանաստեղծ, և՛ նկարիչ: Նա Նաղաշ է կոչվել, ինչպես Ամիդի եպիսկոպոս Մկրտիչը: Նաղաշ Հովնաթանը նկարագարել է Էջմիածնի Կաթողիկե եկեղեցին¹: Չոպանյանը տեղեկացնում է, թե ֆրանսերենի թարգմանած Հովնաթանի երեք տաղերը ինքը քաղել է Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի թիվ 57 ու 369 ձեռագրերից:

1910 թ. Չոպանյանը Փարիզում հրատարակել է Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունները՝ «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» գրքում:

Այս գիրքն արժանացել է Հովհաննես Թումանյանի ջերմ գրախոսությանը (Թիֆլիս, 1911 թ.): Թումանյանի հողվածը կոչվում է «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը»: Մեծ բանաստեղծը հիացած է Չոպանյանի գրքով և նկատում է. «Ա. Չոպանյանը, որ էնքան սեր ունի դեպի մեր հին գեղարվեստը և նուրբ ճաշակով ու հոտառությամբ միշտ հետամուտ է որոնելու, գտնելու մեր մեռած տաղանդների կենդանի գործերը և հանդես դնելու

¹ Les Trouvères Arméniens, traduction française avec une introduction par Archag Tchobanian, Paris, 1966, p. 241: Հետագայում, հատուկ զբաղվելով Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությամբ, Չոպանյանը Հ. Շահխաթունյանի ընձեռած փաստերի հիման վրա ճշգրտել է, որ Էջմիածնի Կաթողիկե եկեղեցին որմնանկարել է ոչ թե Նաղաշ Հովնաթանը, այլ Հովնաթան Հովնաթանյանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցու (1780-1799) պատվերով: Նկարագարողումը իրականացվել է 1786 թ.: Հակոբ Ա Կարնեցին ռուսական ցար Պավել Առաջինին խնդրել է իր հովանավորության տակ վերցնել հայ ժողովրդին և ճանաչել Էջմիածնի հոգևոր իշխանությունը Ռուսաստանի հայերի նկատմամբ: Նրա այդ խնդրանքը կատարվել է: Ա. Կարնեցու հորդորով է, որ Հ. Շմավոնյանը 1794-ին Մաղրատում հրատարակել է հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը» (տե՛ս «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ», խմբագրությամբ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 236):

ամենայն զգուշավորությամբ ու խնամքով, Նադաշ Հովնաթանի վերաբերությամբ էլ արել է նույնը»²:

Թումանյանն այնքան տպավորված է Հովնաթանի կենսասիրությամբ, որ 1913 թ. գրված «Զատկի առթիվ» հոդվածում բնության զարթոնքի ու Հիսուսի հարությունը իրար միացնելով՝ այդ տոնը համարում է հայ քրիստոնյաների սիրելի տոնը ու հիշում Հովնաթանի հետևյալ տողերը.

*Վերանայ ձըմենն և գայ ամառն,
Կանաչի խոտըն և ծաղկի ծառն
Տերևախառն...³*

Վալերի Բրյուսովը “Поэзия Армении” գրքի առաջաբանում գրեթե նույնությամբ կրկնում է Չոպանյանի “Les Trouvères Arméniens” գրքում գրվածը բանաստեղծի մասին: Բրյուսովն իր ժողովածուում զետեղել է Հովնաթանի երեք սիրո տաղերը, որոնցից միայն մեկը կա Չոպանյանի ֆրանսերեն ժողովածուում: Ներկայացնենք այդ տաղի առաջին տունը՝ հայերեն, ֆրանսերեն և ռուսերեն.

*Ասել ես, թե՛ Գարնան վախտն,
Միրեկա՛ն, ամա՛ն, ամա՛ն,
Որ բացվի մեր պաղչին վարդն,
Նազելի՛, մեր պաղչին վարդն,
Քեզ ցոյց կու տամ ծոցիս զարդն,
Նազելի՛, ամա՛ն, ամա՛ն.
Եկ պաղչէն, այս է լաւ վախտն,
Միրեկա՛ն, այս է լաւ վախտն,
Բացուել է վարդն⁴:*

² Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հտ. VI, Երևան, 1994, էջ 329:

³ Հովհ. Թումանյան, նշվ. աշխ., հտ. VII, Երևան, 1995, էջ 50:

⁴ Նադաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 61: Այսուհետև այս գրքից բերվող տաղերի մեջբերման էջերը կնշվեն վերևում – Ա.Դ.:

Tu m'as dit: "A l'arrivée du printemps,

-Bien-aimée ! Grâce ! –

Lorsqu'en notre jardin la rose s'ouvrira,

Je te montrerai la parure de mon sein".

Bien-aimée ! Grâce !

Grâce! viens au jardin ! voici le beau temps !

La rose s'est ouverte⁵.

Ты мне сказала: "Настала весна.

-Милая, сжалься! –

В час, когда розу осветит луна,

Выйду я в сад, грудь открыв и одна".

-Милая сжалься!-

Вечером выйди в сияющий сад!

Розы струят аромат⁶.

Նաղաշ Հովնաթանին բարձր է գնահատել Մանուկ Աբեղյանը՝ ձեռքի տակ ունենալով Չոպանյանի 1910 թ. Փարիզում տպագրած վերոնշյալ գիրքը: Նա իր «Հայոց հին գրականության պատմության» մեջ մատնացույց է արել Հովնաթանի տաղերի նորարարական բնույթը: Բանաստեղծն ապրել և ստեղծագործել է Հայաստանի պատմական մի շրջանում, երբ երկիրը համեմատաբար խաղաղ վիճակում էր և «կրում էր պարսկական բանաստեղծության ազդեցությունը, ոչ միայն բառերի և պատկերների, այլև ոտանավորների վրա. նրա գործածած չափն արդեն երբեմն տարբերվում է մեր հին բանաստեղծական մաքուր շեշտական չափից, և երբեմն դարձել է զուտ վանկական, մոտիկ ֆրանսերենին: Նրանով իսկապես փակվում է մեր հին երգիչների

⁵ Les Trouvères Arméniens, p. 243.

⁶ “Поэзия Армении” с древнейших времен до наших дней, под редакцией со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова, Ереван, 1987, с. 241.

շարքը, և սկսվում է նոր աշուղների շրջանը: Նաղաշը միջին տեղն է բռնում հնի և նորի»⁷:

Խորհրդային շրջանում Նաղաշ Հովնաթանի տաղերի քննական բնագիրը կազմել է քաջահմուտ միջնադարագետ և ձեռագրագետ Ասատուր Մնացականյանը՝ Շուշանիկ Նազարյանի հետ՝ կցելով ընդարձակ առաջաբան և ծանոթագրություններ⁸:

Նաղաշ Հովնաթանի առավել հավաստի կենսագրականը վերականգնել է Չոպանյանը՝ հենվելով որդու՝ Հակոբի ողբի վրա: Հովնաթանը ծնվել է Սիսական մեծ նահանգի Շոռոթ ծաղկուն գյուղաքաղաքում 1661 թ., վախճանվել է նույն գյուղաքաղաքում՝ 1722 թ.:

1961 թ., երբ Ասատուր Մնացականյանը Մաշտոցի անվան Մատենադարանի մի խումբ աշխատակիցների հետ բանաստեղծի ծննդյան 300-ամյակի առթիվ մեկնում են Ադրբեջանին հանձնված Շոռոթ գյուղը, այլևս չեն գտնում բանաստեղծի գերեզմանը, որը պահպանված է եղել մինչև 1920-ականների վերջը. «Վերստին պետք եղավ մխիթարվել այն ճշմարտությամբ, թե իսկական հուշարձանը հորելյարի թողած ժառանգությունն է»⁹:

Ասատուր Մնացականյանը Հովնաթանի տաղերի թեմատիկ բաժանումը առավել հարուստ է ներկայացնում:

Չոպանյանը բանաստեղծի տաղերը տպագրել է հետևյալ թեմատիկ խմբերով.

1. Կրոնական և խրատական տաղեր
2. Երգիծական քերթվածներ
3. Սիրո և խրախճանքի երգեր

Ասատուր Մնացականյանի մոտ տաղերի քանակն անհամեմատ մեծ է և ներկայացված է հետևյալ բաժանմամբ.

1. Սիրո տաղեր
2. Խնջույքի տաղեր

⁷ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, Երևան, 1970, էջ 511:

⁸ Տե՛ս Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, ժողովածուն պատրաստեցին Ասատուր Մնացականյան, Շուշանիկ Նազարյան, Երևան, 1951, 334 էջ:

⁹ Նաղաշ Հովնաթան, Նշվ. աշխ., էջ 6-7:

3. Երգիծական տաղեր
4. Խոհա-խրատական տաղեր
5. Այլ տաղեր:

Մնացականյանն իրավացիորեն նկատում է. «Նաղաշ Հովնաթանի չափածոն ինքնատիպ անակնկալ է իր ժամանակի հայ գրականության ոսկե ֆոնդում: Թվում է, թե գործ ունենք ոչ թե ուշ միջնադարի, այլ նոր ժամանակների ստեղծագործությունների հետ: Այս երևույթը պայմանավորված էր մի կողմից բանաստեղծի անհատականությամբ, իսկ մյուս կողմից՝ քաղաքային այն միջավայրով, որի միջով անցավ նրա կյանքը՝ հայրենի Շոռոթից ու Ագուլիսից մինչև Թավրիզ ու Թիֆլիս, գուցե և «Ֆոանգստան» ու «Հոռոմանց տուն»¹⁰:

Հովնաթանը հայ բանաստեղծության մեջ գրական կայուն թեմա դարձրեց խնջույքի, ուրախության և երգիծանքի տաղերը: Ինչպես հստակ հասկացվում է Հակոբ Նաղաշի ողբից, հայրը Հայաստանում ու Վրաստանում եղել է հեղինակավոր ու ճանաչված անհատականություն: Նա եկեղեցիներ է որմնանկարել.

*Ո՛ւր է շնորհալից վարպետն իմաստուն,
Որ միշտ զարդարեր բազում սրբոց տուն... (էջ 225):*

Հովնաթանը լուսավորչալ անձնավորություն էր. բազում վարդապետներ, աստվածաբանությամբ զբաղվող մարդիկ զանազան հարցերով դիմում էին Հովնաթանին ու ստանում պատասխաններ.

*Լցեալ շնորհիւ աղբիւր գիտութեան,
Հմուտ ընթերցմանց քերականութեան,
Եղեր արժանի բազում գովութեան,
Հանճարեղ վարպետ, Նաղաշ Յովնաթան (էջ 226):*

Հովնաթանի որդու ողբը սրտաշարժ է ու փաստահարուստ: Այդ ողբից նաև երևում է Հովնաթանի օրինակելի ու սիրված ծնող լի-

¹⁰ Նաղաշ Հովնաթան, Նշվ. աշխ., էջ 7:

նելը, միաժամանակ որդու անսահման սերը դեպի իր արժանավոր հայրը: Ահա Հակոբի այս հատկանիշները հաշվի առնելով՝ Սերո խանգաղյանն իր հիմնալի «Մխիթար սպարապետ» պատմավեպում նրան դարձրել է հայրենիքին նվիրված գրական կերպար:

Ի՞նչ նորություն բերեց Նաղաշ Հովնաթանը հայ միջնադարյան սիրերգությանը: Առաջին հերթին նրա սիրո էակը հայտնի է դառնում տաղերից: Նա գեղեցիկ սյունեցի հայուհի է, երիտասարդ այրի է, որն ապրում է բանաստեղծի տան հարևանությամբ: Այդ կինը կրթված է, նամակագրական կապի մեջ է բանաստեղծի հետ: Նրանց սերը ջերմ է ու փոխադարձ: Նա միակն է բանաստեղծի կյանքում, այդ կնոջը հուզում են բանաստեղծի նկարները, նա պատրաստ է նկարչի արվեստանոցում նստել իր դիմանկարն ունենալու համար: Ավելին, հայկական ավանդույթին համաձայն, իր սերն արտահայտելու համար բանաստեղծին խնձոր է ուղարկում՝ որպես սիրո առհավատցյա: Համեմատելով Սայաթ-Նովայի խաղերում, Քուչակյան հայրեններում ու Հովնաթանի սիրո տաղերում պատկերված սիրո դրսևորումները՝ Թումանյանը բոլորովին նոր որակ է տեսնում Հովնաթանի տաղերում, որը բացակայում է մյուս երկու բանաստեղծների մոտ: Թումանյանը Հովնաթանի սիրո քնարերգությունը մեկնաբանում է հետևյալ ձևով. «Եթե երբեմն տխուր ձայներ ունեն (խոսքը Հովնաթանի սիրո երգերի մասին է-Ա.Դ.), նրանք էլ սիրված բախտավորի տրտունջներ ու քմահաճույքներ են: Ազահ է սերը, անվերջ են նրա պահանջներն ու տրտունջները և տարօրինակ»¹¹:

Հովնաթանի սիրերգությունը նախերգանքն էր հանճարեղ Սայաթ-Նովայի անգուգական սիրո խաղերի՝ թեպետ նրանք բոլորովին տարբեր սիրահարներ են: Առաջինը վայելել է սերը, նույնիսկ ոչ գոեհիկ լիբիդոյի տեսարաններ ունի, իսկ երկրորդի սերը պլատոնական է ու անպատասխան: Երկուսի մոտ էլ տեսնում ենք արաբական Լեյլի ու Մեջլումի սիրո համեմատական գուգահեռներ:

¹¹ Հովհ.Թումանյան, նշվ. աշխ., հտ. VI, էջ 324:

Հովնաթանի «Ուստի՞ կու գաս, քաղցր բլբուլ» տաղը գրեթե իր նույն սկիզբն ունի Սայաթ-Նովայի սիրո մի խաղում:

Նաղաշ Հովնաթան

*Ուստի՞ կու գաս, քաղցր բլբուլ,
Քեզի բարև, ես քեզ եմ դուլ,
Լեզուդ շարքաթ, սագդ սմբուլ,
Քաղցր լեզվովդ ջուր տուր ինձի (էջ 26):*

Սայաթ-Նովա

*Ուստի՞ գու քաս, դարիբ բլբուլ,
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու.
Դու վարթ պըտոռե, յիս գոզալին,-
Դու մի՛ լաց լի, յիս իմ լալու¹²:*

Այնքան ազատ է զգում Հովնաթանն իրեն սիրո զգացմունքներն անկեղծ խոստովանելու մեջ, որ սիրո էակին համարձակորեն առաջարկում է.

*Արի՛ միմյանց գիր ուղարկինք...
Ցուրտ է, արի՛ մեկտեղ պատկինք,
Որ տաքանանք
Գինովանանք...(էջ 40-41):*

Երկու բանաստեղծների համար վարդը իրենց սիրելիի ամենակրկնվող խորհրդանիշն է, սակայն ոչ թե սիրո գաղտնիության կամ այլաբանական իմաստով, այլ վարդի գեղեցկության, թարմության ու բուրմունքի նշանակությամբ: Երկու բանաստեղծների համար սիրելիի հանդիպման ամենացանկալի վայրը այգին է.

Նաղաշ Հովնաթան

*Եկ գնա՛նք բախչեն, նստեմք չորս բոլորն շարած վարդի
Ամա՛ն, ամա՛ն, քո սիրոյդ եղեր եմ դալու դիւանայ...(էջ 88):*

¹² Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասարայան, Երևան, 1963, էջ 19:

Մայաթ-Նովա

*Բաղըն զարթարած, բըլբուլըն քնած վարթի սաջարին,
Մո՛ւտ բաղչեն նազով, քիզ գովիմ սազով,
յա՛ր, իլթիմազով:¹³*

Հովնաթանը հաճախ է իր սիրելի էակին համեմատում ոչ միայն վարդի, այլև գարնան ծաղիկների, հատկապես ծաղկած նոնենու հետ ու շարունակ երազում է նրան տեսնել, խոսել, սեր խոստովանել.

*Մայիլ եմ, մայիլ եմ, սիրուդ եմ մայիլ,
Զալո՜ւմ, չեմ կարիլ գեղեցիկ երեսդ հայիլ,
Սիրտս ետրալու է, տխուր եմ լալուլ,
Մեռա քո սիրուն կարօտ մնալով...(Էջ 33):*

Հայ քնարերգության համար բոլորովին նոր հնչեղություն ունեն բանաստեղծի խնջույքի տաղերը: Արդեն նկատված է, որ դրանք ներկայացնում են խնջույքը որպես մարդկային գեղեցիկ հարաբերություններ հաստատելու, կյանքը յուրօրինակ խմբային ձևով վայելելու գեղեցիկ արարողություն:

Նախ պետք է խնջույքը լինի բնության գրկում՝ ծաղկած ծառերի տակ, սառն աղբյուրի կողքին: Խնջույքի սեղանին պետք է դրվեն ծաղիկներ, մարդիկ այդ ծաղիկները միմյանց նվիրեն:

Խնջույքի սեղանն առիթ է միմյանց նկատմամբ ջերմությանը լցվելու, սրտանց ուրախանալու համար: Մարդը ծնվում է աստվածային անմեղությամբ և այդպես էլ մաքուր էությանը պետք է հեռանա կյանքից.

*Ապա ում սրտի քեն ունի՝ հանէ՛, հաշտութեամբ մնայ,
Լաւ մարդն այն է, ինչպէս եկեալ է՝ այնպէս գնայ...
Թասերն չինի՝
Կարմիր գինի՝
Ձեզ անուշ լինի (Էջ 78):*

¹³ Մայաթ-Նովա, Նշվ. աշխ., էջ 44:

Գարունը կյանքի զարթոնքն է, և մարդը պետք է ընկերովի վայելի գարնան թարմությունը, որովհետև ոչ ոք չգիտի, թե երբ է հեռանալու այդքան ցանկալի կյանքից.

*Վաղիւն ոչ գիտես, թե զի՞նչ ծնանի,
Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,
Որ այսօր բացուեալ է, վաղիւն անցանի.
Խմե՛նք, եղբա՛րք զինի,
Բանն աստուած շինի (Էջ 83):*

Խնջույքի ժամանակ հաճելի է լսել բլրուլի ու տատրակի դայլը: Կերուխումը պետք է լինի չափի մեջ, պարկեշտությունն ու սիրով լիքը զվարճանքը ուղեկիցն են իսկական խնջույքի: Դրա համար էլ բանաստեղծը մերժում է խնջույքի ժամանակ հարբելը, կռիվը.

*Այլ և խաղաղութեամբ խմելն է հալալ,
Ո՛չ հարբիլ, ո՛չ կռուիլ և ո՛չ բարկանալ,
Պարկեշտութեամբ ըմպել, սիրով զուարճանալ,
Խմե՛նք, եղբա՛րք զինի,
Բանն աստուած շինի (Էջ 84):*

Բանաստեղծը ոտանավորներ է ձոնել նաև բուն Բարեկենդանի տոնին, որը եղել է հայերի սիրելի տոնակատարություններից: Բարեկենդանին նվիրված երգերն ունեն ազգագրական եզակի արժեք:

Բարեկենդանի տոնի առթիվ հայերը զարդարում էին իրենց սենյակները, նաև դարպասները, հանում ու սեղանին էին դնում արծաթե սպասք ու ընտիր ճենապակի: Բոլորը հագնում էին տոնական զգեստներ, այցելում էին միմյանց ու միասին էին տոնում այդ ուրախ տոնը: Բարեկենդանին հայի սեղանը բաց էր բոլորի համար: Սեղանին դրվում էին գառան միս, տապակած հավ ու կաքավ և ընտիր զինի.

*Այսօր ընկերներ և հարեան,
Ամենքն միմյանց տուն գնան,
Ձեռացներն կուժ, ճաշի աման (Էջ 88):*

Բարեկենդանին նվիրված ուրախ տաղերում երևում են բանաստեղծի կրոնական գիտելիքները: Տոնի ժամանակ սնվելը պարտադիր է համարել նաև Դավիթ մարգարեն.

*Որպէս որ մարգարէն Դավիթ ասէ բան վրկայական,-
Գինի ուրախ առնէ, իւղ գուարդ, հաց հաստատէ սիրտ
մարդկան (եջ 91):*

Բավականին մեծ թիվ են կազմում հայկական այդ տոնին նվիրված Հովնաթանի երգերը, որոնցում շարունակ նշվում է կյանքի անցողիկությունը, մեղքեր չգործելու պատվիրանը, խաղաղությամբ և ուրախ սրտով զվարճանալու հաճույքը.

*Չլնի շատ խմէք, դառնաք բոց,
Եւ սահմանէք կոփւ, տնկոց,
Գլուխ ծակէք՝ արիւն ի ծոց,
Ձեր ծնողաց սիրտն շինէք խոց (եջ 97):*

Նաղաշ Հովնաթանը մեծ նորարար է իր երգիծական տաղերով: Դրանք բավականին շատ են, սակայն դրանցից ընդամենը մի քանիսն է Չոպանյանն ընդգրկել իր ժողովածուում՝ ակնարկելով դրանցում եղած որոշ գոեհիկ արտահայտությունները¹⁴:

Իհարկե, երգիծական բոլոր ոտանավորները հավասարաթեք չեն, սակայն ճանաչողական իմաստով կարևոր են: Մուտ մեռեալ կատվի և մկների մասին պատմող տաղը խորիմաստ է: Կատուն հզոր անհատն է, որին փոքր մարդուկները շատ են նախանձում ու շարունակ երագում են նրա անկումը.

*Կատուն մեռաւ, ափսոս ~ ու վա ~ ի,
Մկներն այսօր խիստ են ուրախ.
Թէ որ յանկարծ վեր կենայ սաղ,
Մկներն կանէ արիւնշաղախ (եջ 98):*

¹⁴ Ա. Չոպանյան, Նշվ. աշխ., էջ 13:

«Գովասանութիւն Երեւանայ քաղաքին» տաղում պատկերված է Երևան քաղաքի շուկան, որը կեղտոտ է, աղքատիկ, առևտուրն անազնիվ: Երևանի հայ բնակիչները խիստ նեղված են արդեն նստակյաց դարձած քոչվոր թուրքերից.

*Ո՛չ աղբիւր կա և ո՛չ վտակ,
Թուրքի յահէն դռներըն փակ (Էջ 100):*

Երևանն այդ ժամանակ գտնվում էր Պարսկաստանի կազմում, ինչպես ողջ Արևելյան Հայաստանը: Թուրքիան մշտապես ցանկացել է գրավել նաև Արևելյան Հայաստանը ու թուրքերին ուղղորդել է ապրել Հայաստանի պատմական տարածքում ու բազմանալ:

Եվրոպացի ճանապարհորդները, որոնք XVIII դարի վերջին ու հատկապես XIX դարի սկզբին գալիս էին Հայաստան, չեն էլ խոսում այնտեղ ապրող թուրքերի մասին: Նրանք Երևանը ներկայացնում են որպես անտիկ ժամանակներից եկող Հայաստանի մայրաքաղաք:

Անգլիացի նշանավոր ճանապարհորդ, ազնվական Ռոբերտ Կեր Պորտերը 1817, 1818, 1819 և 1820 թթ. այցելել է Վրաստան, Պարսկաստան, Հայաստան, հին Բաբելոն և թողել հետաքրքիր ուղեգրական տեղեկություններ: Ուշագրավ է, որ չնայած այդ շրջանում Արևելյան Հայաստանը պարսկական լծի տակ էր, սակայն այն մնում էր որպես առանձին երկիր՝ Հայաստան: Դա գրված է խիստ ծավալուն գրքի շապիկին (գիրքը բաղկացած է 882 A4 ֆորմատի չափով էջերից-Ա.Դ.):

Պորտերը եղել է նախ Անիում, որը ներկայացնում է որպես հայ Բագրատունիների շքեղաշուք մայրաքաղաք և X դարի համար աշխարհում եզակի ճարտարապետություն ունեցող¹⁵: Ինչ վերաբերում է Երևանին, ապա Պորտերն այն ներկայացնում է որպես հնագույն հայկական քաղաք, որը հիմնել է Հայաստանի թագավորներից մեկը՝ Երվանդը: Նա ապրել է Հիսուսի դարաշրջանից վաթսուհինգ տարի առաջ և ամենայն հավանականությամբ իր անունն է տվել նա-

¹⁵ Robert Ker Porter, Travel in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, during the years 1817, 1818, 1819 and 1820, in two volumes, Vol. I, London, 1821, p. 173.

հանգին ու հիմնած քաղաքին¹⁶ («...that it owes its dignity as a city to one of the Armenian kings, called Ervandus, who lived sixty-five years before the Christian era, and who in all probability gave his name to the province, and founded city»):

Այս տեղեկությունները հարկավոր են հայերին իրենց պետական շահերը մշտապես փաստական հզոր կոմաններով պաշտպանելու համար:

Սպանիչ ծաղր ենք տեսնում «Վարք հաւասար մոնթերուն Շոռթուն» տաղում, որում զգուշացում կա հոգևոր դասի բարքերի անկման, հոգևորականների շահամոլության, հոգևորական դառնալու մեծաքանակ մարդկանց ցանկության.

*Բնչպես որ լոկ աշխարհական,
Ո՛չ գիտեն սաղմոս, շարական* (Էջ 119):

Այս նույն մտահոգությունը XV դարում արտահայտել է Ամիդի մեծ թեմի առաջնորդ, բանաստեղծ, նկարիչ Մկրտիչ Նաղաշը՝ նույնպես ծաղրելով հոգևորականների շահամոլությունը՝ կաթողիկոսից մինչև երեցներ.

*Երիցանին յիրար կռուան, բիր վերուցին և գաւազան,
Փետեն մորուք, կոտրեն բերան, ամենն վասն ազահութեան*¹⁷:

Լինելով լուսավորության ջերմ պաշտպան՝ Հովնաթանը կամենում է, որ հայ մանուկները դեռ փոքր հասակից գրել-կարդալ իմանան: Զավեշտալի ձևով պատմում է, թե Ագուլեցի Թումանը քառասուն տարեկանում անգամ ճիշտ կարդալ չգիտի.

*Գրինք «Կարապետ»,
Կու կարդայ «կարպետ»* (Էջ 132):

Սպանիչ ծաղր կա նաև «Ոտանաւոր ի վերայ Շահվերտունց տէր Աբրահամին ի Նաղաշ Յովնաթանէ» տաղում: Ակնհայտ է, որ բա-

¹⁶ Robert Ker Porter , Նշվ. աշխ., էջ 196:

¹⁷ Մկրտիչ Նաղաշ, աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 119:

նաստեղծը թշնամական հարաբերությունների մեջ է եղել Շահվերտունց տեր Աբրահամի հետ, որը խոջայական դասից էր և միաժամանակ հոգևորական էր: Տեր Աբրահամն իր որդու նյութական միջոցներով գնացել է Ֆռանգստան ու այնտեղից վերադառնալուց հետո այլևս ոչինչ տեղական չի հավանում: Բավական է հիշել, որ այդ անբարո մարդը, որն այցելել է Ֆռանգստանի անառակատները, դեռ երգիծական ոտանավոր է գրել Հովնաթանի մասին: Բնականաբար բանաստեղծն էլ նույն ոճով պատասխանում է նրան:

Նա մտերմական ձևով ծաղրել է նաև հայ որոշ կանանց ծուլությունը՝ միաժամանակ ցավով նշելով, թե երբեմն ընտանիքի հոգսն ընկնում է կնոջ թույլ ուսերին: Մասնագետները չեն նկատել, որ կանանց ուղղված ոտանավորներում կան ազգագրական փաստեր:

Խոհախրատական տաղերում, որոնք առավել մեծ ընդհանրություն ունեն միջնադարի պաշտոնական հայ գրականության հետ, տեսնում ենք Հովնաթան-հայրենասերի մտահոգությունը իր երկրի ճակատագրի հետ կապված: Նրան մեծապես անհանգստացնում է հայ ժողովրդի կախյալ վիճակն ուրիշ ազգերից, նա տեսնում է հայերի մտավոր առավելությունները, խոջայական դասի նյութական ապահովությունը, սակայն ազգի ապագայով մտահոգ անհատներ չի տեսնում.

*Մանավանդ հայոց ազգն է հար նըկուն,
Որ չունին իշխան, թագաւորութիւն,
Պատուական մարդուն կուտան նեղութիւն,
Խօճայքն խմեն միմեանց ողջութիւն (էջ 168):*

Պատմական կարևոր փաստ է պարունակում Շոռթ զյուզաքաղաքում 1707 թ. կառուցված բարձրաբերձ Կաթողիկե եկեղեցին, որի շինարարության համար նյութական նպաստ են բերել բոլոր բնակիչները.

*Նույն ժողովուրդք զամենեսին
Յօժար սիրով հանդէս մտին,
Ի վերայ յայնմ տաճարին
Կաթուղիկէ բարձրացուցին (էջ 204):*

Հովնաթանի հոգևոր թեմաներով գրված տաղերը կրոնական գաղափարները կապում են իրական կյանքի հետ:

«Տաղ ի վերայ Զատիկին Հայոց» երգն իրականում հոգևորի ու իրական կյանքի միաձուլման գեղեցիկ ձևն է.

*Թռչունքն խայտան, խօսի բլբուլըն,
Փայլի մանուշակ, բացուի սրմպուլըն,
Սերմանիք ցանեն, աշխատի ցուլըն՝
Բոլոր աուրըն.
Առատ գարուն է Զատիկըն հայոց,
Գովեսք Զատիկըն Հայոց (Էջ 219):*

Նաղաշ Հովնաթանը մի որոշ շրջան եղել է Վրաստանի արքա Վախթանգ Վեցերորդի պալատական աշուղն ու նկարիչը: Նա հիմնադիրն է Հովնաթանյան նկարչական գերդաստանի, որի ներկայացուցիչների նկարները հիմա Հայաստանի ազգային պատկերասրահում ունեն առանձին դահլիճ: Պատահական չէ, որ Հովնաթանյան գերդաստանը գրավել է հանճարեղ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ուշադրությունը, և նա վավերագրական ֆիլմ է նկարահանել Հակոբ Հովնաթանյանի մասին (1968 թ.): Այդ ֆիլմը ցարդ ցուցադրվում է միջազգային կինոփառատոններում:

Բարեբախտաբար մեր օրերում երգվում է աշուղի Վրաստանի, ավելի շուտ Թիֆլիսի, բարձր դասի գեղեցիկ կանանց նվիրված երգը: Պատմությունից հայտնի է, որ Հովնաթանի ապրած օրերին և նրանից հետո՝ մինչև 1920-ական թվականները, Թիֆլիսի բնակչության մեծամասնությունը եղել են հայեր: Այդ և հայերի՝ Վրաստանում ունեցած կարևոր դիրքի մասին փաստացի վկայություններ ունի ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը, որը 1909 թ. այցելել է Թիֆլիս¹⁸: Հովնաթան Նաղաշը թիֆլիսահայ մշակույթը առաջ մղողներից մեկն է եղել իր ապրած տարիներին:

¹⁸ F. Macler, Rapport sur une mission scientifique en Arménie Russe et en Arménie Turque (juillet-octobre 1909), Imprimerie nationale, 1911, p. 94.



ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի դեկան,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ

Նաղաշ Հովնաթանի կյանքն ու գործունեությունը հայ բանասիրության ուշադրության կիզակետում է: Նաղաշագիտության հարցերով զբաղվող նախակարապետը նշանավոր հայագետ Արշակ Չոպանյանն է, որն առաջին անգամ ուսումնասիրել է նրա կյանքն ու գրական-մշակութային գործունեությունը: Ա. Չոպանյանի 1910 թ. Փարիզում հրատարակած «Նաղաշ Հովնաթանի աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» աշխատությունը¹, որը ցայսօր պահպանում է իր թարմությունը, արտացոլում է նաղաշագիտության էական հարցադրումներ: Սակայն սխալ կլիներ, եթե ընդգծեինք, որ Նաղաշ Հովնաթանի կյանքով ու գործունեությամբ ընդհանրապես առաջինը Ա. Չոպանյանն է հետաքրքրվել: Նրա կյանքի մասին առաջին տեղեկություններն, ըստ էության, տվել է իր որդին՝ Հակոբ Նաղաշը, իսկ հոր և որդու տաղարանի առաջին քննությունը կատարել է Հ. Տաշյանն իր կազմած ձեռագրաց ցուցակում²:

¹ Ա. Չոպանեան, Նաղաշ Յովնաթանի աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, 128, 1 չ. էջ:

² Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 1008-1010:

Գրեթե Ա. Չոպանյանի հետ միաժամանակ Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններով զբաղվել է նաև Ա. Ակիկյանը: Նա «Հանդես ամսօրեայ»-ի 1911 թ. համարներում հրատարակել է «Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց աշխատութիւնք» ուսումնասիրությունը, որը, կարելի է ասել, որոշ առումներով լրացնում է Ա. Չոպանյանի նշված աշխատությունը:

Ն. Հովնաթանի կյանքով ու ստեղծագործությամբ զբաղվել են նաև Աս. Մնացականյանը, Շ. Նազարյանը, Մ. Մկրյանը, Ա. Դոլոխանյանը և ուրիշներ: Բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունն անհրաժեշտ չափով լուսաբանված են Մ. Աբեղյանի կողմից³:

Տաղանդավոր տաղասաց-բանաստեղծ և նկարիչ Նաղաշ Հովնաթանը ժամանակի ուսյալ, զարգացած և գիտուն մարդկանցից էր: Նրա խորհուրդներին ու խրատներին դիմում էին շատ-շատերը, որոնց թվում նաև Բարձր իշխանավորներ:

Լուսավորյալ մարդ էր Նաղաշ Հովնաթանը: Նա շրջագայել է, եղել է օտար երկրներում «...և այդ աշխարհի աշխարհ թափառումներով՝ իր մտքին պաշարը ճոխացուցած, իր երանգապանակին ու քնարին ուժն ու այլազանությունը բազմապատկած է», - գրում է Ա. Չոպանյանը⁴:

Հովնաթանը թողել է գրական հարուստ ժառանգություն: Նրա բանաստեղծությունները պահպանվել ու մեզ են հասել բազմաթիվ ընդօրինակություններով: Միջնադարյան տաղերգուն երկխոսում է ժողովրդին մատչելի աշխարհաբարով՝ բարբառային երանգներով համեմված: Հետևելով իր նախորդներին՝ Ն. Հովնաթանը օգտվել է հայ ժողովրդական բանահյուսությունից⁵:

Թարմ են բանաստեղծի տաղաչափական հնարանքներն ու պատկերները: Նա կարողացել է ազգային ավանդական տաղաչափա-

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հտ. IV, Երևան, 1970, էջ 473-480:

⁴ Ա. Չոպանեան, Նշվ. աշխ., էջ 10:

⁵ Ա. Դոլոխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 8:

կան ձևերին վարպետորեն ներդաշնակել աշուղական բանարվեստի նվաճումները և ստեղծել նորատիպ ու գրավիչ երգեր:

Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ սիրո և ուրախության, գարնան, հոգևոր, խոհախրատական, երգիծական: Այդ տաղերն իրենց աշխարհիկ թեմաներով և ազնիվ գաղափարներով շատ են սիրվել ու տարածվել:

Սույն հոդվածը Հովնաթանի տաղերի լեզվական միջոցների գործածությանն ու ոճավորմանը նվիրված մի փորձ է, որի ուսումնասիրության առարկան, տաղերի լեզվի շերտերից մեկն է՝ գրաբարյան բառերը, վերջիններիս գործածության հաճախականությունը:

Հայտնի է, որ 10-րդ դարից սկսած՝ գրաբարը դասավանդվում էր դպրանոցներում ոչ իբրև ժողովրդին հասկանալի լեզու, այլ իբրև հայ հին մատենագիրների լեզու: Ավելին, գրաբարը մնում էր իբրև գրականության որոշ ժանրերի լեզու⁶:

Գրոց լեզուն շարունակվեց օգտագործվել մինչև XVIII դարը որոշ գործերում, որոնց հեղինակներն ամեն կերպ ձգտում էին պահպանել հայ մատենագրության լավագույն ավանդույթները, տարբեր աղիթներով փորձում էին իրենց ստեղծագործություններով շատ չհեռանալ այն երկերից, որոնք սիրվել էին հայ ժողովրդի կողմից:

Ա. Չոպանյանն առաջինն էր, որ համեմատում է Հովնաթանի, Մայաթ-Նովայի ու Քուչակի քնարերգությունը, նշում տարբերություններն ու ընդհանուր հատկանիշները, լեզվական զուգահեռներ է անցկացնում նրանց միջև: Նա բարձր է գնահատում ժողովրդի կյանքի մասին ժողովրդի լեզվով ստեղծագործելը, դա համարում է նրանց սիրտը գրավելու կարևոր միջոցը: Ա. Չոպանյանն այդ մասին գրում է. «Ժողովրդական կամ աշուղական բանաստեղծության ամենին գեղեցիկ ու կատարեալ էջերը անոնք են, զոր արտադրած են ժողովրդական կեանքին, լեզուին ու ճաշակին ներշնչուող աշուղներ»⁷:

⁶ Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 192:

⁷ Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԺԷ:

Նաղաշ Հովնաթանի տաղերի նախադասությունների կառուցվածքին անդրադարձել է Ն. Հովհաննիսյանը⁸: Հեղինակը քննում է տաղերի լեզվի քերականությունը, շարահյուսությունը, կատարում մի շարք նրբին դիտարկումներ: Հիմնարար է շարահարությամբ բարդ նախադասությունների հարցի հետաքրքրական դիտարկումը, ըստ որի՝ տաղերում գերակշռում են այդպիսի կառուցատիպերը:

Չնայած Նաղաշի լեզուն միջին հայերենն է, պարզ և մատչելի, բայցևայնպես տաղերի բառուբանը միատարր չէ. դրանք հյուսված են նաև գրաբարյան միավորներով: Բնության և սիրո պատկերներում գործածական են գրաբարյան բայեր, այսպես՝ «Չէ՛ս թողուլ հեռանամ իմ տանեն...» (էջ 17), «Ինձ կարօտ մի՛ թողուլ...» (էջ 37), «Այսօր եղև պայծառ արև, Իմ նազելի...», «Ձգել ես գօտկիդ...» (էջ 31), «Նստեմք չորս բոլորն...» (էջ 28), «Լուսնի նման պայծառ երես բոլորած» բանաստեղծության մեջ քառատողերի վերջին հատվածներում գրաբարյան բառակերպերի գործածությունը վառ պատկերներ է ստեղծում: Կրկնակ տողերում փոխվում է միայն մի բառ, որն էլ հենց տվյալ հատվածի բովանդակության հետ է կապվում, իսկ մնացյալը՝ «Ես մնացի կարօտ՝ ...համար» ամբողջ տողի գաղափարական հիմքում է դրված⁹:

...Ես մնացի կարօտ՝ ետ տալոյ համար:

...Ես մնացի կարօտ՝ տեսնելոյ համար:

... Ես մնացի կարօտ՝ ձեռք տալոյ համար:

... Ես մնացի կարօտ՝ գրկելոյ համար:

... Ես մնացի կարօտ՝ խմելոյ համար¹⁰:

⁸ Ն. Հովհաննիսյան, Նաղաշ Հովնաթանի տաղերի շարահարությամբ բարդ նախադասությունները, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1985, թ. 2, էջ 138-144:

⁹ Վ. Եղիազարյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2021, էջ 628:

¹⁰ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 14-15: Այսուհետև այս գրքից բերվող տաղերի մեջբերման էջերը կնշվեն վերևում – Ա.Գ.:

Նաղաշը մի շարք տաղերում դրել է իր ապրած կյանքն ու սիր-
տը և զարգացրել դրանք: Միրո տաղերում կիրառական է *սիրտ* միա-
վորի գործիական հոլովի գործածությունը՝ սրտիւ. «Գովեմ *սրտիւ*
ուրախական...» (էջ 19), «Ամա՛ն-ամա՛ն, զքեզ գովեմ *սրտիւ* լիական ...»
(էջ 27):

Տաղերում ակտիվ են *զ* նախդրավոր կառույցները. «Նախշուն
քաղցրախօս քան *զկաքան...*» (էջ 30), «Ուրախութեան *զքեզ* գովեմ,
պատկեր գովելի...» (էջ 27), «Աչքերդ ինձ այրեց *զհնչ* ամռան արև... » (էջ
30), «Ինձ հետ մի՛ կենար զինչպէս դան-աղան...» (էջ 50):

Տաղերում երևում են պանդխտության մեծ վիշտն ու թշվա-
ռությունը: Թեման մեր ժողովրդի տխուր լարերից է, որ բանաստեղծն
զգացել է իր հոգու խորքով.

Չդարիպին հալն զհտեմ, օր վա՛յ կուտամ...

Չդարիպութիւնն յորժամ յիշեմ քան զուր դողամ:

Նկատելի է, որ բանաստեղծական բնագրերում դեռևս պահ-
պանվում են *ն* վերջնահնչյուն ունեցող գրաբարյան բառամիավորնե-
րը՝ նուոն «...Դու ծաղիկ քաղէ, ես՝ *նուոն...*» (էջ 45), ծովն «...Ընկայ քո
մեղաց *ծովն...*» (էջ 29), դուռն «...Երթամ, աղաչեմ, բալքի ըռահմ անի,
դուռըն բանայ...» (էջ 29), քաղաքն «...Թիֆլիզ *քաղաքն* պատուական...»
(էջ 19), ծառն «...Նոր ծաղկեցաւ *ծառն...*» (էջ 29) և այլն:

Տաղերում առկա են նաև *ն*-ի անկումով գրաբարյան բառեր,
որոնց թիվը հասնում է շուրջ երեքտասնյակի:

Որոշ միավորներում ձայնեղ հպականները վերածվել են՝

ա. խուլերի՝ խաբար-խապար, խնձոր-խնձոր, բաղչա-պաղչայ,
բ. շնչեղ խուլերի՝ վարդ-վարթ, հոգի-հոքի:

Տաղերում գործածական են հետևյալ հնչյունակապակցույթ-
յամբ վերջավորվող բառեր՝

ա. այ-կայ, կուգայ, մնայ, կուլայ, նստայ, բուսայ, հովանայ, տե-
սայ, սուրմայ, խարայ, ողջացայ, մեռայ, Վրաստանայ, Գուրջստանայ
վրայ,

բ. ոյ-խմելոյ, սիրոյ:

Ոյ երկբարբառը միջին հայերենում սովորաբար պահպանում է գրաբարի շրջանին բնորոշ առանձնահատկությունը՝ «Դու աչացս լոյս հաւասար» (էջ 35), «Գարուն որ եղև ամսոյն ապրիլի» (էջ 49), «Պայծառագոյն արեգական, լուսնի նման ես» (էջ 46):

Իւ երկբարբառը սովորաբար պահպանել է իր առանձնահատկությունը, փոփոխությունն ընթացել է մեկ ուղղությամբ. վերածվել է ու-ի. «Ունքերդ՝ եաղի, արիւնահեղ հարամի» (էջ 42):

Նաղաշ Հովնաթանի տաղերի գրաբարյան բառաշերտի սակավ բառերում կատարվել է մեկ հնչյունի (մենահնչյուն) դրափոխություն՝ «սիպտակ բուխախ, բոլոր շամամ» (էջ 20):

Երբեմն գրաբարյան միավորի մեկ հնչյունը վերածվել է հավելյալ հնչյունի՝ հմմտ. պայծառագոյն *արեգական* (էջ 36) - շող *արեգական* (էջ 27):

Տաղերում սակավ են գրաբարյան հոգնակիի կազմության ձևերը՝ «խալերըդ՝ պայծառ *աստղունք*» (էջ 29), «Բոլոր *նուներ* ծոցեդ հանես (էջ 31), *ծաղկանցն* (էջ 35), *աչացս* (էջ 35):

Հայտնի է, որ արդի հայերենի ներգոյական հոլովի իմաստը գրաբարում արտահայտվում է *ի* նախդրով՝ հոգնակի հայցական հոլովի հետ. «Գովելի ծաղիկ ես դու ի մէջ ծաղկանցն...» (էջ 35):

Ուսումնասիրելով Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզվական հիմքերը՝ թվում է՝ գործ ունենք նոր ժամանակների ստեղծագործությունների հետ: Ինչ վերաբերում է տաղերի լեզվի գրաբարյան բառաշերտին, պետք է նկատել, որ այդ կարգի մի շարք բառեր փոփոխության են ենթարկվել՝ հիմքում ունենալով գրաբարի շունչը: Նման բառերը Նաղաշ Հովնաթանի տաղերում ունեն զգալի տարածում: Գրաբարյան միավորների հետ հաճախ հանդիպադրվում են բառեր, որոնք ունեցել են բաղաձայնների անկում բառամիջում և բառավերջում: Առկա են նաև տարբեր դիրքերում հանդիպող բաղաձայնների հավելումով բառեր:

Բերված օրինակներից դժվար չէ նկատել, որ մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող բնագրերը կառուցված են մաքուր գրաբարյան բառաշերտից, ինչպես նաև որոշ միավորների միաստիճան հնչյունափոխությամբ:

Արշակ Չոպանյանը Նաղաշ Հովնաթանի լեզուն բնորոշում է «պարզ» և «միատարր», ոճը՝ «փափուկ» և «նուրբ», երբեմն էլ՝ «աւելի ծանր, խոր ու վեհ» որոշիչներով:

Բանաստեղծը, հոգու խորին կարեկցությամբ լցված, իբրև վարդապետ՝ չի մոռանում քարոզելու և աղոթելու մարդկանց համար և իր մշտամնա տաղերով զարդարում է հայ միջնադարյան գրականությունը:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասականդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտաշխատող,
Բանասիրական գիտությունների
թեկնածու*



ՀԱՍՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասականդման
մեթոդիկայի ամբիոնի մագիստրանտ*

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Նադաշ Հովնաթանի (1661-1722) տաղերը նոր շունչ են միջնադարյան քնարերգության մեջ և սիրված հայտնի դառնալու պահից ի վեր: Այդ հյուսվածքները մեզ հասել են աշխարհի տարբեր մատենադարաններում պահպանվող ձեռագիր ընդօրինակություններով, որոնց նկարագրություն-քննությունը սույն հոդվածի նյութն է: Թվում է՝ նման քննությունն այլևս հետաքրքրություն չի կարող ներկայացնել, երբ արվել են մեկը մյուսին լրացնող Ա. Չոպանյանի, Ն. Ակինյանի, Մ. Մկրտչյանի, Մ. Աբեղյանի ուսումնասիրությունները, և տպագրված է

տաղանդաշատ հայագետ Աս. Մնացականյանի և Շ. Նազարյանի կազմած Նաղաշ Հովնաթանի տաղերի քննական բնագիրը¹, այնուամենայնիվ բանաստեղծի տաղերի ձեռագիր ընդօրինակությունների քննությունը հնարավոր է դարձնում լուծել հեղինակի ձեռագրերի, տաղերի բնագրերի հետ կապված հարցերը, քննել բնագրի պատմության առանձին հատվածները, վեր հանել գրական գործընթացին առնչվող խնդիրները.

ա. Հայերեն ձեռագրերի ո՞ր հավաքածուներում են պահպանված Նաղաշ Հովնաթանի տաղեր պարունակող գրչագրերը և ի՞նչ առանձնահատկություններ ունեն: Դրանք տաղերի ամբողջակա՞ն, թե հատվածական ընդօրինակություններ են: Եթե դրանք մեկ ամբողջություն կազմող Տաղարաններ են, ի՞նչ տրամաբանությամբ են հյուսված: Տաղարանի կառուցվածքը հեղինակայի՞ն, թե գրչական միջամտության արդյունք է, այդպիսի բնագրի իրավունք ստացած բաժանում:

բ. Արդյո՞ք պահպանված են Նաղաշ Հովնաթանի ինքնագրերը: Եթե այո, ապա գիտական ի՞նչ արժեք են ներկայացնում:

ա. 1860-ական թթ. Նաղաշ Հովնաթանի տաղեր պարունակող ձեռագրերն սկսում են գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Պարբերական մամուլում ի հայտ են գալիս մեկ ձեռագրի հիման վրա հրատարակված հատուկենտ տաղեր: 1861 թ. «Ճռաքաղ» ամսագրում լույս է տեսնում 1 («Տաղ ուրախութեան ասացեալ ի Նաղաշէ»)², 1885 թ. «Մասիս» շաբաթերթում «Գիներգութիւնք Նաղաշ Հովնաթանի» խորագրի ներքո՝ 4 («Յորժամ եղել գարուն արել ծագեցաւ...», «Այսօր

¹ Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Շ. Նազարյանի, Երևան, 1951, 336 էջ (այսուհետև՝ Նաղաշ Հովնաթան, Տաղեր):

² Տաղ ուրախութեան ասացեալ ի Նաղաշէ, Ճռաքաղ, Մոսկվա, 1861, թ. ԺԳ, էջ 216: Մխալմամբ վերագրվել է Մկրտիչ Նաղաշին: Աղբյուրն անհայտ է: Հմմտ. Նաղաշ Հովնաթան, Տաղեր. «Տաղ Շուռութեցի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ ի վերայ ուրախութեան սեղանոյ» հյուսվածքի ծնթ., էջ 275:

ցնծամք պարելով...», «Եկայք այսօր ժողովեցէք, ընկերք միաբան», «Ի միասին ամենեքեան, եկայք, եղբա՛րք իմ սիրական»³, 1899 թ. «Լու-մայ»-ի Ա. համարում՝ 3 տաղ («Ջուղայեցոց հայրենի պարզ լեզուն այ, զոր կու պարծենան», «Վասն Վարդան ժամահարին...», «Գովասանք Գուրջստանայ»)⁴: Նշվածները (բացի «Լումայ»-ում լույս տեսածներից) առավելապես հանրամատչելի բնույթ ունեին, քան գիտական:

Նաղաշ Հովնաթանի տաղերի գիտական ուսումնասիրու-թյունն սկսվեց Ա. Չոպանյանի կողմից Վիեննայի Մխիթարյան միաբա-նության մատենադարանում պահվող Նաղաշ Հովնաթանի տաղեր պարունակող ձեռագրերից⁵, որոնք ընկան «Նաղաշ Յովնաթան աշու-

³Նաղաշ Յովնաթանի գինեգութիւնները (Գաւառական բանաստեղծութիւն), Մասիս, Կ. Պոլիս, 1908, թ. 12-13, 16 փետրուարի, էջ 244: Հեղինակ Հ. Հարութ-յունյանն աղբյուրի մասին հիշատակում է. «Փշուր մը ասոր երգածներէն ձեռք բերինք **հին ձեռագիր երգարանէ մը**, որ կարծենք դեռ լոյս չէ տեսած տպա-գրութեամբ կամ մասնաւոր հրատարակութեամբ հայ բանասիրաց կողմէ», էջ 658:

⁴Լումայ, Թիֆլիս, 1899, թ. Ա., էջ 275-282: Աղբյուրը **Հովհ. քահ. Մկրտանին պատկանած ձեռագիրն է**, որի համառոտ նկարագրությունը տալիս է խմբա-գիր Գ. Աղանյանը (էջ 282, ծնթ. 1): Ձեռագիրը 1832 թ. մտել է Անթիլիասի մա-տենադարանի հավաքածու, այժմ կորած է. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձե-ռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց Անուշավան վրդ. Դանիէլեան, Անթիլիաս, 1984, էջ ԺԱ-ԺԲ, ծնթ. 6; Ս. Սիմոնեան, Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի, Ուսումնասիրութիւն եւ տաղեր, Յաւե-լուած՝ Նաղաշ Յովնաթանի եօթը անտիպ տաղերը, Պէյրութ, 1981, էջ 77-105: Մատենադարանի ձեռագրերում այս տաղերի օրինակներ բացակայում են, և Աս. Մնացականյանի համար հիմք են ծառայել «Լումայում» հրատարակված-ները:

⁵Պատճառը Հ. Տաշյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (Վիեննա, 1895) աշխատությունն էր՝ գիտական սխառնք, որի միջոցով բացահայտվեցին և հանրայնացվեցին հայերէն ձե-ռագրերի բացառիկ նմուշներ: Ա. Չոպանյանն իր ուսումնասիրության հիմք դարձրեց Վիեննայի (537, 647, 156, 412, 493, 514, 369), Վենետիկի (470, 730), Էջ-միածնի (604, այժմ՝ ՄՄ 3229) ձեռագրերը: Պահպանված են Ա. Չոպանյանի խնամքով ընթրօրինակություններն այդ ձեռագրերից. տե՛ս ԳԱԹ, Ա. Չոպան-յանի ֆոնդ, 74ա, ք, XI բաժին:

ղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» (Փարիզ, 1910) ուսումնասիրության հիմքում. թվով արդեն ԽԶ. տպագիր տաղերով ու Նաղաշ Հակոբ որդու հեղինակած «Ողբերգություն յաղագս մահուան Նաղաշ Յովնաթանի» քերթվածով Նաղաշ Հովնաթանը ներկայացավ գիտական աշխարհին և իր պատվավոր տեղը գրավեց միջնադարյան հայտնի տաղասացների կողքին⁶. ուսումնասիրողներն շարունակեցին նորանոր ձեռագրերի հիման վրա լրացնել և հարստացնել Նաղաշ Հովնաթանի մասին եղած տվյալները⁷:

Հովնաթանի տաղերի մեզ հասած շուրջ 60 ձեռագիր ընդօրինակությունների գերակշիռ մասը՝ թվով 50⁸, պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 8 օրինակ՝ Վիեննայի, հատուկենտ օրինակներ Վենետիկի, Անթիլիասի⁹ մատենադարաններում:

Կառուցվածքային առումով հետաքրքրություն են ներկայացնում այն ձեռագրերը, որոնցում Հովնաթանի տաղերը հանդես են գալիս շարքերով և տրամաբանական ամբողջություն են կազմում:

Դրանք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) հմրք. 3263, 4426, Վիեննայի հմրք. 537, 647 ձեռագրերն են, որոնք ընկած են Հովնաթանի տաղերի հրատարակությունների հիմքում: Բոլորն ընդօրինակված են XVIII դ., հիմնականում գրվել են ազուլեցիների պատվերով և գրեթե ամբողջությամբ ամփոփում են հեղինակի՝ երկու շարքից բաղկացած ծավալուն տաղաշարքերը:

Ըստ ձեռագրական փաստերի՝ այդ բաժանումը հեղինակային է. «Ցանգ գրոյն ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ Մէջլիսի կամ **սիրոյ ուրախութեան տաղերի**» և «Ցանգ վասն **Ուրախական եւ ծիծաղական**

⁶ Ա. Դոլուխանեան, Արշակ Չօպանեանը եւ հայ հին գրականությունը, Երևան, 2004, էջ 95-99:

⁷ Ն. Ակինեան, Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատությունք, Վիեննա, 1911; Գ. Լևոնյան, Աշուղը (գրախոսություն), Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1911, հտ. XXI, էջ 228; Մ. Մկրտչյան, Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957, էջ 7-17:

⁸ Այդ ձեռագրերի ցանկը տե՛ս Նաղաշ Հովնաթան, Տաղեր, էջ 296-297:

⁹ Անթիլիասիներ, ինչպես վերը նշվեց, կորած է:

ռոտանաւորի ասացեալ ի Նաղաշ Յովնաթանէ» (Վիեննայի հմր. 537, Ցանկ, 125ա):

Ա. Չոպանյանը, Ն. Ակինյանը, Շ. Նազարյանը, Աս. Մնացականյանն ու մյուս ուսումնասիրողները համակարծիք են, որ տաղաշարքերի բաժանումը հեղինակային է, այլ ոչ հետագայի, և իրենց աշխատություններում պահպանել են շարքերի թեմատիկ բաժանումը¹⁰:

Ըստ այդ բաժանման՝ ունենում ենք հեղինակի տաղերի երեք թեմատիկ շարք՝ սիրո, ուրախության և ծիծաղական:

Կառուցվածով և թեմատիկ ընդգրկմամբ մի այլ խումբ է ներկայացնում Հովնաթանի **խրատական** տաղերի ժողովածուն: Այդ ժողովածուի միակ ձեռագիրը ժամանակին Գ. Լևոնյանին պատկանող և այժմ Մատենադարանում պահպանվող 1890 թ. գրված հմր. 10585 ձեռագիրն է¹¹՝ «**Բանք եւ խրատք շահաւէտ եւ օգտակար հոգոյ եւ մարմնոյ, վասն տղայոց, երիտասարդաց եւ ծերոց, թէ որպիսի բարւոք քաղաքավարութեան շարժել պարտ են ի ուտել եւ ի յըմպելն, ի յառեւտուր իւրեանց: Շարադրեալ ի Նաղաշ Յովնաթանէ**»¹² խորագրով:

¹⁰ Ն. Ակինեանը հիշատակում է երկու շարք (Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, էջ 66), Ա. Չոպանյանը՝ երեք (Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 12-13)՝ կրօնական ու խրատական տաղեր, երգիծական քերթուածներ եւ սիրոյ ու խրախճանքի երգեր: Աս. Մնացականյանը՝ 4 շարք (Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Սիրո երգեր, էջ 5-76, Խոհախրատական երգեր, էջ 79-93, Երգիծական երգեր, էջ 97-154, Խնճուկի երգեր, էջ 157-188):

¹¹ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ., կազմեց Ա. Մալխասեան, խմբագրութեամբ Ա. Տէր-Ստեփանեանի, Երևան, 2007, էջ 127:

¹² Գ. Լևոնյան, Աշուղը (գրախոսություն), էջ 228:

Ձեռագիրս, ի թիվս աշուղական 7 դաֆտարի, Գ. Լևոնյանն ստացել է Ալեքսանդրապոլում¹³: Այս ժողովածով հայտնի դարձան Հովնաթանի նոր խրատական տաղեր, որոնք հրատարակեց Գ. Լևոնյանը «Ազգագրական հանդեսում»¹⁴:

Աս. Մնացականյանն ու Շ. Նազարյանն այս ձեռագրի մասին իմացել են Նաղաշ Հովնաթանի տաղերի լիակատար ժողովածուի հրատարակությունից հետո և կատարել որոշ շտկումներ՝ ըստ Մատենադարանի հմր. 7057 ձեռագրի¹⁵, որ խրատական տաղերի նույն շարքն ունի: Այս երկու՝ 10528 և 7057 ձեռագրերի համադիր քննության արդյունքում պարզ է դառնում, որ Գ. Լևոնյանի Տաղարանն իրականում պարունակում է նաև Լիակատար ժողովածուից բացակայող նորահայտ 6 միավոր. «Լուարուք դուք ամենքն Հարք և եղբարք պատուական», «Վասն հատուցանելոյ գերախոտիս աշխատաւորաց», «Վասն երախտամոռաց մարդոյ», «Վասն ջանալ և խաբեբայ մարդոյ», «Վասն էհտիպար ցուցանելոյ», «Վասն քսու, սուտ և չարախօս մարդոյ»¹⁶:

Գ. Լևոնյանի Տաղարանն ուշագրավ է ոչ միայն Հովնաթանի նորահայտ տաղերով. 11բ թերթում ընդօրինակված է հեղինակային ուշագրավ հիշատակարան, ըստ որի՝ Հովնաթանն իր Տաղարանը ավագ որդի Հակոբի նկարագրողումներով նվիրում է կրտսեր որդուն՝ Հարությունին: Հիրավի, ընտանեկան արարումի գեղեցիկ օրինակ.

¹³ Նույն տեղում. «...Ալեքսանդրապոլում մեզ բերին աշուղական ձեռագիր երգարանների (դաֆտարների) մի մեծ կապոց, որի մէջ գտանք և Նաղաշ Յովնաթանի մի տետրակը»: ԳԱԹ-ում պահպանվում է «Պետ-թանգարանի վարչության լրացուցիչ տեղեկություններ իմ ներկայացրած դավթարների մասին» հաշվետվություն, ըստ որի՝ Գ. Լևոնյանը, կարևորելով այս ձեռագրում առկա Նաղաշ Հովնաթանի ցարդ անտիպ տաղերը, ձեռագրերը հանձնել է թանգարանին 06.04.1927 թ., տե՛ս ԳԱԹ, Հայ աշուղներ, 54, էջ 1:

¹⁴ Գ. Լևոնյան, Աշուղը (գրախոսություն), էջ 230-232:

¹⁵ ՄՄ հմր. 7057, էջ 1ա-8ա:

¹⁶ Աս. Մնացականյան, Շ. Նազարյան, Նաղաշ Հովնաթանի անտիպ տաղերը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1954, թ. 7, էջ 75-80:

«Գծագրեցի զայս տաղարան՝
 Խաղ եւ տաղեր ազնուական,
 Խրատք եւ խօսք ծիծաղական,
 Եւ ծաղկեցաւ նման զարնան
 Ձեռամբ որդւոյ իմ **Յակոբեան**
 Պատկերներով տնօրինական,
 Ծաղկօք եւ թռչնօք զանազան՝
 Ի վայելումն **Յարութեան**՝
 Փոքր որդւոյն իմ սիրական»¹⁷:

ՄՄ-ում պահպանվող ձեռագրերը և հեղինակի որոշ տաղեր կրում են Հովնաթանի **ինքնագիր Տաղարանի** հետքերը:

«Տաղարան Յովնաթանի» արտահայտությունը թե՛ ցանկի խորագրերում, թե՛ հիշատակարանային նշումներում ցույց են տալիս, որ տաղերի ձեռագիր ընդօրինակությունների հիմքում եղել է Հովնաթանի ինքնագիրը: Այդպիսի ուշագրավ տեղիներ պահպանել է ՄՄ հմր. 4426 ձեռագիրը. խորագիր՝ «Գիրք, որ կոչի **Տաղարան Յովնաթանի**» (1ա), ցանկի խորագիր՝ «Յանկ Տաղարանիս, **որ է Յովնաթանի**» (115բ), գրչի հիշատակագրություն՝ «Ես... Հայրապետս գրեցի այս **Յովնաթանի Տաղարանս**» (128ա)¹⁸: «Պիտի կարծել, որ այդ բոլորը, չնչին բացառությամբ, Ն. Հովնաթանի ինքնագիր երգարանի արձագանքներն են», - եզրակացնում է Աս. Մնացականյանը¹⁹:

Այսպիսով, ինչպես վկայում են ձեռագրերը, Նաղաշ Հովնաթանն ինքն է հյուսել և նկարագրողել իր Տաղարանը, ինքն է որոշել իր Տաղարանի կառուցվածքը և տաղերը բաժանել է շարքերի՝ սիրային,

¹⁷ Ձեռագիրս ԳԱԹ-ից տեղափոխվել է ՄՄ: ՄՄ-ում այն հայտնաբերելու և ուսումնասիրելու գործում մեծապես աջակցել են ՄՄ-ի Ձեռագրատան գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության բաժնի վարիչ, պ.գ.դ. Գ. Տեր-Վարդանյանը և Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող ա.գ.թ. Դ. Ղազարյանը, որոնց հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

¹⁸ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, էջ 304:

¹⁹ Նույն տեղում:

ուրախության կամ խնջույքի, երգիծական կամ ուրախական, խոհա-
խրատական: Հովնաթանի տարբեր ձեռագրերի հիմքում ընկած է կա-
ռուցվածքային հենց այդ տրամաբանությունը, որը և ընդունվել է տա-
ղերի բնագիրը կազմողներ Աս. Մնացականյանի և Շ. Նազարյանի
կողմից:

Եթե Հովնաթանի տաղերի ընդօրինակությունների (ոչ մեկ-եր-
կու տաղի) հիմքը **Հովնաթանի** ինքնագիր Տաղարանն է, ապա հարց է
ծագում՝ արդյո՞ք պահպանված ձեռագրերի շարքում կան Նաղաշ Հով-
նաթանի ինքնագրեր:

Պահպանված են Հովնաթանի երկու ինքնագիր. Վենետիկի
մատենադարանում է Հովսեփ Երրայեցու «Յաղագս պատերազմի
հրէից ընդ հռովմայեցոց» (թրգմ. Ստ. Լեհացի) երկի 1682 թ. Ագուլի-
սում Հովնաթանի ձեռքով արված ընդօրինակությունը՝ գրչի հիշատա-
կարանով: Այս հիշատակարանի նմանահանությունը հրատարակել է
Ղ. Ալիշանը «Միսական» աշխատության մեջ²⁰՝ առանց ձեռագրի
գտնվելու վայրը նշելու, այդ պատճառով ուսումնասիրողներին հայտ-
նի է Ալիշանի մեջբերումով. «...Արդ, գրեցաւ զսա ձեռամբ **Յովնաթան
ղայրի**, ի **գեղէն Շոռթոյ**, եւ հայրն իմ **գտէր Յոհանն**՝ հանգուցելն ի
Քրիստոս եւ զծնօղսն իմ յիշեսցիք ի մի բերան, յիշողսդ յիշեալ լիջիս ի
Տեառնէ»²¹: Պարզել ենք, որ «Միսականի» նմանահանությունն արված
է Վենետիկի հմր. 1407/ցուց. 1626 ձեռագրից²²: Վերոնշյալից բացի ինք-

²⁰ Ղեւոնդ Ալիշան, Միսական: Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, Վենետիկ,
1893, էջ 331:

²¹ Ա. Չոպանյանն այս հիշատակարանի մասին իմացել է Պոտուրյանից և իր
գրքում մեջբերել է վրիպակներով (տե՛ս Ա. Չոպանեան, Նշվ. աշխ., էջ 10-11,
ծնթ. 2), իսկ Ն. Ակիկյանին հայտնի է եղել «Միսականից» (տե՛ս Ն. Ակիկեան,
Նշվ. աշխ., էջ 55, ծնթ. 1), որից էլ քաղում է Հովնաթանի հոր անունը:

²² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վե-
նետիկ, հտ. Ը. Թարգմանութիւնք նախնեաց, Վարք հարանց, Բժշկարան, յորի-
նեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան ի Մխիթ. ուխտէն, Վենետիկ, 1998, էջ 502-504:
Ձեռագիրը Մատենադարան մտել է 1783 թ.:

նագրում կան նաև հիշատակարաններ, որոնք ներկայացվում են առաջին անգամ.

268բ «Ես Յովնաթանս զսա գրեցի,

եղբայրք իմ զձեզ աղաչեցի,

եւ վասն տառիս խոշորութեան

թողութիւն ի ձէնջ խնդրեցի.

*չո չտ բնվ դլտվ կբյլ բօբտյլ (Ով որ այս գիրս հանի
աֆարին ես գաթանըս հանեցի ամայ դըր պէ...)»²³:*

221ա «Աղաչեմ զհանդիպօղսդ յիշել զտառապեալ **Յովնաթան գրիչս** եւ հայրն իմ **գտէր Յոհանն**²⁴, եւ դուք գիրն կենաց յիշեալ լիջիք»:

245ա «Արդ, աղաչեմ զհանդիպօղսդ կարդալով կամ օրինակելով, յիշեսցիք **Շոռոթեցի Յովնաթան դպիրս, տառապեալ գրիչ** յայսմ տառի, եւ զհայրն իմ զտէր Յոհանն եւ զծնօղսն իմ, եւ դու յիշ(եալ լիջիք)»:

Մատենադարանի հմր. 3628-ը նույնպէս Հովնաթանի ինքնագիրն է՝ գրված 1862 թ., հավանաբար՝ Ագուլիսում: Բանաստեղծությունների ժողովածուն ընդգրկում է Ստեփանոս Օրբելյանի, Կարապետ վարդապետի, Առաքել Բաղիշեցու, Ներսէս Լամբրոնացու չափածո ծավալուն գործերը և պահանված է հետևյալ հիշատակարաններով.

545բ «Յիշեսցիք **զգրիչ Յովնաթանս** և դուք յիշեալ լիջիք, թվ. ՌՃԼԱ. (1682)»:

557բ «Ես Յովնաթան զայս գրեցի

Եւ ընթերցողսդ աղաչեցի,

Զի վասն տառիս խոշորութեան

Թողութիւն ի ձէնջ խնդրեցի»²⁵:

²³ Այս հիշատակարանի մասին Աս. Մնացականյանը չգիտեր. նրան հայտնի էր միայն «Միսականի» նմանահանությունը:

²⁴ Հովնաթանի հոր մասին կարծիքներ տե՛ս Մ. Մկրտչյան, Նշվ. աշխ., էջ 26-30:

²⁵ Հմմտ. Նաղաշ Հովնաթան, Տաղեր, էջ 312:

Դժվար չէ նկատել, որ թե՛ Վենետիկի, թե՛ Մատենադարանի ձեռագրերի վերոբերյալ հիշատակարանները նույնն են և պատկանում են Նաղաշ Հովնաթանի գրչին:

Այսպիսով, պահպանված ինքնագրերը ցույց են տալիս, որ ստեղծագործական կյանքի վաղ շրջանում՝ 1682 թվականից սկսյալ, Հովնաթանը զբաղվել է գրչությամբ, ունի հիշատակարաններ հյուսելու օրինաչափություն. կիրառում է կաղապար-հիշատակարան, արձակ ու չափածո հիշատակարանները համադրում է: ***Թերևս հենց 1682 թ.՝ հիշատակարանները չափածո հյուսելու շրջանին են վերաբերում Հովնաթանի բանաստեղծական առաջին փորձերը:***

Միջնադարյան ցանկացած բնագրի հրատարակում Աս. Մնացականյանի համար նշանակում է հնարավոր բոլոր գրչագրերի, արխիվային նյութերի, պարբերական մամուլում երբևէ հրատարակված ամեն առանձին պատառիկի խորքային և համակողմանի քննություն:

Աս. Մնացականյանի և Շ. Նազարյանի հրատարակած Նաղաշ Հովնաթանի տաղերի համահավաքը լիակատար ժողովածու է և գիտական ամփոփ խոսքի նշանակություն ունի: Երբ հետևում ենք Նաղաշ Հովնաթանի տաղերի ուսումնասիրության, հրատարակության պատմությանը, պարզ է դառնում, որ Աս. Մնացականյանը չի սահմանափակվել տաղերի հրատարակումով: Որպես հայ մշակույթի փայլուն գիտակ՝ նա վստահ է՝ անգամ մեկ նորահայտ ձեռագիրը կարող է հետաքրքիր անակնկալներ մատուցել, իսկ այդպիսի ձեռագրերը կարող են ի հայտ գալ անսպասելի²⁶:

²⁶ 1954-1956 թթ. բեղուն էին. հաջորդաբար հրատարակվում են Նաղաշ Հովնաթանի նորահայտ տաղերը. Աս. Մնացականյան, Շ. Նազարյան, Նաղաշ Հովնաթանի անտիպ տաղերը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1954, թ. 7, էջ 75-80. հրատարակվում է 6 նորահայտ տաղ; Մ. Մկրտչյան, Նաղաշ Հովնաթանի մի անտիպ տաղը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1955, թ. 8, էջ 101-104. «Նոր սիրելիք համար ունեմ շատ հաւաս...» տաղն ըստ Վրաստանի թանգարանի հմր. 205 ձեռագրի. գրչության թվական՝ 1795:

1956 թ. լույս է տեսնում Ռ. Աբրահամյանի «Նաղաշ Հովնաթանի մի անհայտ բանաստեղծությունը» խորագրով հոդվածը: Հեղինակը ներկայացնում է Նաղաշ Հովնաթանի «Ողբերգություն յաղագս մահուան Մահդասի Շահպազին Արզրումեցույ, զոր ի Թավրեզ քաղաքի հանգեաւ ի Քրիստոս, 1161 թուոջ» խորագրով նորահայտ տաղը՝ գաղափար օրինակի լուսանկարով²⁷, որն արված էր «Լումայ»-ում հիշատակված Հովհ. քին. Մկրյանին պատկանող, Անթիլիասի մատենադարան 1932 թ. մտած և այսօր անհետացած Ստեփանոս Դաշտեցու և Նաղաշ Հովնաթանի տաղեր պարունակող ձեռագրից²⁸: Ռ. Աբրահամյանի հաղորդած տեղեկությունների հետքերով Աս. Մնացականյանը որոնումներ է արել ԳԱԹ-ում, հայտնաբերել ձեռագրի հետ կապված ուշագրավ վավերագրեր²⁹, հասկացել, որ այդ ձեռագիրը պարունակում է Հովնաթանի նորահայտ տաղե, անմիջապես գրել Հայկ Բերբերյանին՝ խնդրո առարկա ձեռագիրը և նրանում ընդօրինակված Հովնաթանի տաղերը գտնելու հույսով: Վերջինս, փորձելով օգնել Աս. Մնացականյանին գտնել անհետացած ձեռագրի հետքը, 1962 թ. Ջարեհ կաթողիկոսին ուղղած նամակում ուղիղ մեջբերում է Աս. Մնացականյանի խնդրանքը. «(Աս. Մնացականյան) Մեզ մոտ մի քանի տարի առաջ ստացվեցին այդ ձեռագրից (իմա՝ Անթիլիասի) որոշ լուսանկարներ և տպագրվեցին, ուր և ահա այդ ձեռագիրը հիշատակված է որպես Անթիլիասի թիվ 32 (իսկ մի այլ տեղ էլ թիվ 36) ձեռագիր: Նաղաշ Հովնաթանի ուղածս տաղերը, որ կան այդ ձեռագրում, 7 հատ են և անտիպ. «ԱՆԱՀԻՏ»ում

²⁷ Ռ. Աբրահամյան, Նաղաշ Հովնաթանի մի անհայտ բանաստեղծությունը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1956, թ. 1, էջ 96:

²⁸ Հոդվածագիրը վրիպում է՝ նշելով, թե «Լումայում» հրատարակվեց Նաղաշ Հովնաթանի երկու տաղ, իրականում հրատարակվածները երեքն էին. նույն տեղում, էջ 95:

²⁹ Կարևորագույնը Հովհ. Մկրյանին պատկանած ձեռագրի՝ Ս. Միմոնյանի նկարագրությունն էր: Այդ վավերագրերից որոշներն ունենք ձեռքի տակ, որոնց մտադիր ենք անդրադառնալ առաջիկայում:

դրանք չեն տպագրվել³⁰... Գոնե այդ 7 ոտանավորներն ստացվել: Նույնիսկ կարելի էր դրանից առաջինն էլ չխնդրել, մի օրինակ մեզ մոտ կա, բայց մնացածները (2-7) խիստ անհրաժեշտ են: Որոնումների համար գուցե օգնի խորագիրը . «Տօմար Ագարիայի եւ պարզասօմար... եւ տաղք եւ ոտանաւորք... հաւաքեալք ի բազում տեղեաց: Ժամանակը 1754 թ., վայրը՝ Բանկալա: Ինչ խոսք, որ շատ լավ կլինէր ամբողջ ձեռագրի միկրոթապաւենն ստանալ»³¹:

Նամակից դժվար չէ կռահել պրպտող միջնադարագետի անհանգստությունը նոր նյութի որոնումների ճանապարհին: Տասնյակ տարիներ անց՝ Աս. Մնացականյանի որոնած տաղերը հրատարակելիս, ի պատասխան այս նամակի Ս. Սիմոնյանն իր գրքում ցավով ծանոթագրում է հետևյալը. «Երան. Տ. Զարեհ Կաթողիկոս, երբ 1962 թուին ստացավ Հայկ Պէրպէրեանէն այս նամակը, անշուշտ իր ծանօթագնութեամբ ուզեց ընթացք տալ, բայց դժբախտաբար Ձեռագրատան մէջ **չգտաւ** (ընդգծումը՝ Ս. Սիմոնյանի) արժեքաւոր այս ձեռագիրը»³²:

Նաղաշ Հովնաթանի տաղերի մեզ հասած գրչագրերի քննությունը վկայում է՝ միջնադարյան բնագրերի անգամ լիակատար հա-

³⁰ «Անահիտում» տպագրելու նպատակով Ս. Սիմոնյանը Ա. Չոպանյանին Ստեփանոս Դաշտեցու տաղերի հետ ուղարկել էր նաև Նաղաշ Հովնաթանի նորահայտ տաղերի ընդօրինակություններ: Ա. Չոպանյանը մեզ համար անհասկանալի պատճառով հապաղել է: Տե՛ս ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, 5690, 96, II, Սիմոնյան Սիմոն Չոպանյանին, 8 նամակ: Ցավոք, Ս. Սիմոնյանին ուղղված Ա. Չոպանյանի պատասխան նամակները գտնել առ այժմ չի հաջողվել, դրանք տեղ չեն գտել նաև Ա. Չոպանյանի նամակների մէջ. հմմտ. Արշակ Չոպանյան, Նամակների, կազմեց և ծանոթագրեց Գոհար Ազնավուրյան, Երևան, 1980:

³¹ Աս. Մնացականյանի նամակը տե՛ս Ս. Սիմոնեան, Նշվ. աշխ., Պէրյութ, 1981, էջ 126:

³² Նույն տեղում, էջ 127: Ըստ Ռ. Աբրահամյանի՝ ձեռագրի ֆոտոներն ստացել է Ա. Աբրահամյանը. Լիբանանում եղած ժամանակ՝ 1956 թ., նյութի ընտրության և «լուսանկարման» գործում նրան աջակցել են Ս. Սիմոնյանն ու Շ. Աճեմյանը. կնշանակի՝ տակավին 1956 թ. ձեռագիրը եղել է տեղում:

մարվող հրատարակումով բնագրի պատմությունը չի ավարտվում: Նոր ձեռագրեր են հայտնաբերվում, թվայնացվում, կազմվում են գիտական ընդրաձակ ձեռագրացուցակներ, և չի բացառվում, որ առաջիկայում, մի նորահատ ձեռագրով կրկին լույս աշխարհ գան Նաղաշ Հովնաթանի նոր տաղեր: Այսօր, գրեթե 100 տարի անց, իր այժմեականությունը չի կորցրել Ա. Չոպանյանի գնահատականը Նաղաշ Հովնաթանի բնագրերի վերաբերյալ. «Այս հատընտիր սիրերգերէն իւրաքանչիւրը՝ բաժակ մը ազնիւ գինիի բուրումն ու տաքութիւնը կը շնորհէ ընթերցողին, կամ ցօղաթուրմ քնքշութիւնը դաշտէն նոր փրցուած խուրձ մը կը ծաղկի: Եւ ատի աւելի քան բաւական է որպէս զի մենէ մէկը փութար այդ սիրուն տաղերն ու զանոնք հիւստղ երգչին անունը լոյս արել հանել անարդար մոռցումի մը խաւարէն»:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԸ ԵՐԳԻԾԱԲԱՆ

Նաղաշ Հովնաթանի բանաստեղծական ժառանգության մեջ առանձին տեղ են զբաղեցնում երգիծական ոտանավորները: Դրանցում կա և՛ սարկաստիկ, սպանիչ ծաղր, և՛ թեթև հումոր:

Փաստորեն, հայ միջնադարյան քնարերգության առաջին մեծ երգիծաբանը եղել է Նաղաշ Հովնաթանը:

Երգիծանքը հայ մտածողության մեջ դեռևս հեթանոսական ժամանակներից ունի իր վաղնջական դրսևորումները: Բարեբախտաբար Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ գետեղել է հայ հին վիպասքի որոշ հատվածներ, որոնցից մեկում տեսնում ենք երգիծանքի դրսևորում: Այն կապվում է մեր նախնիներից Շարայի հետ, որը Արագածի հովանու տակ գտնվող արգավանդ դաշտում է հաստատվում, և դաշտն աչքի է ընկնում հացահատիկի առատությամբ: Շարայի անունով դաշտը կոչվում է Շիրակ: Շարան էլ աչքի էր ընկնում շատակերությամբ, որի համար հին վիպասքում մտերմականք հումորով ասվում է. «Թե քո Շարայի որկորն է, ասեն, մեր Շիրակա ամբարքն չեն»¹:

¹ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Թիֆլիզ, 1913, էջ 43:

XIX և XX դարերի հայ բանահավաք-բանագետներ բազում երգիծական հյուսվածքներ են գրառել ժողովրդական ասացողներից, որոնք թվում են առավել նոր ժամանակների դրսևորումներ: Նրանցում հայ մարդը ծաղրում է ծուլությունը, ապաշնորհությունը, ամուսինների անհամերաշխ լինելը և նման երևույթներ: Գ. Սրվաձառյանցի «Ծույլ հնձողք» զավեշտալի հյուսվածքը դրա վառ ապացույցն է: Ալեքսան անունը հուշում է, որ ոտանավորը ստեղծվել է հենց XIX դարում: Ալեքսանն իր տասնինը փեսաներով գնում է արտը հնձելու, սակայն վերջում պարզվում է, որ ծույլերը կերել են, պառկել, նստել ու ոչինչ չեն արել:

<i>Ալեքսան</i>	<i>Պառկեն,</i>
<i>Ու իր տըսննին փեսան,</i>	<i>Քաղեն,</i>
<i>Քրսան գերընդի,</i>	<i>Փոծխեն,</i>
<i>Քառասուն հեսան,</i>	<i>Կապեն,</i>
<i>Նըստեն,</i>	<i>Բարդեն,</i>
<i>Սըրեն,</i>	<i>Հետին անգամ տեսան</i>
<i>Ուտեն,</i>	<i>Բարդեն պակաս էր քսան²:</i>

Ոսկեդարի պատմիչ Փավստոս Բուզանդը, որը բանահյուսությունն առավել լայն չափերով է օգտագործել իր «Հայոց պատմության» մեջ, մեզ է ավանդել Հովհան Եպիսկոպոսին սպանիչ ծաղրով մերկացնող երեք զրույցներ, որոնք զվարճալի պատմություններ են: Դրանցում խիստ քննադատվում է Հովհանի ազահությունը, չարությունը, հոգևոր բարձր պաշտոնին անհարիր վարքագիծը³:

Զանազան երգիծական քնարական երգեր կան նաև Կոմիտասի ու Մ.Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» ժողովածուում⁴:

² Գ.Սրվաձառյանց, Երկեր, հտ.1, Երևան, 1978, էջ 538-539:

³ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, աշխատասիրությամբ Սո. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 405-411:

⁴ Տե՛ս Հազար ու մի խաղ: Ժողովրդական երգարան, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Երևան, 1969:

Հայ միջնադարյան ձեռագրերում ևս, սկսած XVI դարից, տեսնում ենք հատուկենտ երգիծական ոտանավորներ՝ հեղինակային և անանուն: Երգիծանքն առկա է հատկապես Վարդան Այգեկցու առակներում և դարձյալ առավելապես նոր ժամանակների հետ կապվող իրապատում հեքիաթներում, որոնք մեծ հաջողությամբ մշակել է Հ. Թումանյանը: Այդ հեքիաթներից են «Բարեկենդանը», «Սուտլիկ որսկանը», «Անբան Հուռին», «Քաջ Նազարը», «Կիկոսի մահը»⁵:

Բնականաբար երգիծանքի տարբեր տեսակներն իրենց արտացոլումն են գտել նաև «Սասնա ծռեր» հերոսական վեպում:

Այսպիսին էին երգիծանքի դրսևորումները հայ գրականության մեջ մինչև Նաղաշ Հովնաթանի ասպարեզ իջնելը: Նա իր երգիծական ոտանավորները գրել է XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին:

Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգության առաջին գիտական անդրադարձը կատարել է Արշակ Չոպանյանը՝ 1910 թ. Փարիզում հրատարակելով նրա տաղերի ժողովածուն⁶:

Ժողովածուում գետեղված առաջաբանում Ա. Չոպանյանը բացատրում է, թե ինչու Հովնաթանի տաղերից հատկապես չի տեղադրել երգիծանք պարունակող մի շարք գործեր: Նա դրանք համարել է անարվեստ, նույնիսկ գռեհիկ: Սա այն դեպքում, երբ Նաղաշ Հովնաթանի մյուս տաղերը շատ բարձր է գնահատում: Բոլոր դեպքերում ժողովածուում Չոպանյանը ներառել է մի քանի երգիծական ոտանավորներ՝ հետևյալ նկատառումներով. «Երգիծական կտորները տասնէն աւելի են. ասոնց մէջ կան մէկ քանիներ, այնքան կոպիտ ու անհամ (հաւանաբար ժամանցի համար թեթևօրէն գրուած), որ աւելորդ համարեցայ հրատարակել զանոնք, նկատելով, որ այդ այնքան երկար, որքան գռեհիկ կտորները բանաստեղծին աւելի վնասել կարող են, քան ու է հրապոյր աւելցնել իր գործին: Բայց այդ շարքին այն

⁵ Հ. Թումանյան, Ընտիր երկեր, հտ. II, Երևան, 1985, էջ 136-147, 152-165:

⁶ Տե՛ս Ա. Չոպանյան, Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչ, Փարիզ, 1910:

էջերը, զոր հրատարակած են՝ արժեքէ զուրկ չեն, ցոյց կուտան սրամտութիւն մը՝ որ՝ զեղջուկ ու պարզուկ, բայց համեղ է և մերթ ուժեղ ու կծու: «Ի վերայ կատուին և մկանցը», «Տաղ ի վերայ մածունի՞ն», «Գովասանութիւն Երևանայ քաղաքին»ը, և մանաւանդ, «Վարք հաւասար Մոնթերին»ը, տգէտ, աղտոտ, կոպիտ, կռուական փոքրաւորներու խայթիչ հեգնանկար, շահեկան են՝ ու կրնան նկատուիլ հայ նոր երգիծական բանաստեղծութեան նախափորձեր՝ Աբովյանէն իսկ առաջ»⁷:

Չհավանելով որոշ երգիծական ոտանավորների պարզունակությունը՝ Ա. Չոպանյանը շատ բարձր գնահատական է տալիս իր հավանած հովնաթանյան երգիծանքին, երբ դրանք համեմատում է ազգի ցավով ապրող, ազգի ինքնագիտակցությունն արթնացնող, ազգի թերությունները քննադատող Աբովյանի երգիծական բանաստեղծությունների հետ: Չէ՞ որ նա Աբովյանին համարում էր հավերժորեն կենդանի ու հաղթական՝ իբրև մեծագույն հիշատակարաններից մեկը հայ հանճարի բարձրության ու հայ սրտի գեղեցկության⁸:

Ի տարբերություն Չոպանյանի՝ Աս. Մնացականյանը Հովնաթանի տաղերի քննական բնագրերը կազմելիս դրանցում ներառում է իր ձեռքի տակ եղած բոլոր երգիծական ոտանավորները՝ արժևորելով դրանց ճանաչողական ու դաստիարակչական բնույթը: Աս. Մնացականյանի կազմած Նաղաշ Հովնաթանի տաղերի ժողովածուում երգիծական ոտանավորների թիվը ոչ թե տասն է, ինչպես նշում է Չոպանյանը, այլ քսանմեկը:

«Երգիծական տաղեր» խորագրի ներքո զետեղված տաղերից առաջինը «Տաղ ի վերայ սուտ մեռեալ կատվին, զոր մկներն տանին թաղեն, ի Նաղաշ Հովնաթանէ ասացեալ» ոտանավորն է, որ շատ է հավանել Չոպանյանը և որը Վրաստանի կինոգործիչները դարձրել են հաջողված մուլտիպլիկացիոն կինոնկար:

⁷ Ա. Չոպանյան, Նշվ. աշխ., էջ 13:

⁸ Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 411:

Այս երգիծական ոտանավորը խորիմաստ է և ունի համամարդկային հնչեղություն: Այն վերաբերում է մարդկային հասարակության մեջ հաճախ հանդիպող այն իրողությանը, երբ հասարակական կյանքը ճիշտ ուղիով տանող ուժեղ անհատները հանկարծ անհետանում են, ու երկրորդական մարդիկ ցնծությամբ ասպարեզ են մտնում:

Կատուն սուտմեռուկ է ձևանում, իսկ մկները հոգեհացի պատրաստություն են տեսնում: Սակայն կատուն արթնանում է, ու մկները սարսափահար անհետանում են.

*Ես կատու եմ, ոտքս արագ,
Մկանց ես խիստ եմ հակառակ...
Չարուխ շինեմ Ղարաբաղի՝
Ով որ եկել է ինձ թաղի...⁹*

Ինչպես գիտենք, Սյունիքը սկսվում էր Շուշիից և ավարտվում Գողթն գավառով, ուր նաև գտնվում էր Նաղաշ Հովնաթանի Շոռոթ ծննդավայրը: Սա ևս փաստ է Ղարաբաղի հայկական լինելու վավերության:

«Գովասանություն Երևանայ քաղաքին» տաղն իրականում ներկայացնում է Երևան քաղաքի շուկան: Տաղից իմանում ենք, որ քաղաքում ապրել են նաև թուրքեր, որոնք կրոնական ըմբռնումներից ելնելով՝ նեղել են հայերին.

*Ո՛չ աղբյուր կա և ո՛չ վտակ,
Թուրքի յահէն դռներըն փակ¹⁰:*

Հայտնի է, որ XVIII դարի սկզբներին Երևանը, ընդհանրապես Արևելյան Հայաստանը, մտնում էր Պարսկաստանի կազմի մեջ: Իսկ

⁹ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 98:

¹⁰ Նույն տեղում, էջ 100: Այսուհետև այս գրքից բերվող տաղերի մեջբերման էջերը կնշվեն վերևում – Ռ.Դ.:

այդ ժամանակ Պարսկաստանը զարգացած չէր: Անդրկովկասում զարգացած քաղաք էր Թիֆլիսը, որը խիստ հայաշատ էր: Այդ հայաշատությունը կար նաև 1909 թ., երբ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերն այցելեց Թիֆլիս: Նա գրում է. «Չնայած Թիֆլիսը վրաց թագավորության մայրաքաղաքն է, սակայն բնակչության մեծ մասը հայեր են: Վրաստանի քաղաքները բնակեցված են հայերով, այն դեպքում, երբ վրացիներն ապրում են գյուղերում: Ռուսական տիրապետության ժամանակ հայերը մեծ թիվ էին կազմում, և քաղաքապետարանի անդամների երեք քառորդը հայեր էին: Ողջ առևտուրը, ինչպես և տեղական արդյունաբերությունը հայերի ձեռքում էր»¹¹:

Նաղաշ Հովնաթանը ներկայացնում է Երևանի շուկայի կեղտը, առևտրի անազնիվ լինելը և թանկությունը.

Աշխարհս՝ էժան, Երևան՝ թանկ: (էջ 101)

Ա. Չոպանյանի հավանած երգիծական ոտանավորներից է «Վարք հաւասար մոնթերուն Շօռթօւ» տաղը:

Ոտանավորի առաջին տողերից երևում է, որ հոգևոր բնագավառը ընտրած տղաները շատ թույլ են մտավոր կարողություններով.

*Գրէ եկին էշի քարվան,
Մեր մոնթերի վրայ փալան:
Գլխէն արած զարի դարման,
Զոգոալով բերան բանան: (էջ 119)*

Մոնթերը տգետ են, սակայն շտապում են դառնալ հոգևորական և այդ կոչումը դիտում են որպես եկամտաբեր պաշտոն.

*Ինչպէս որ լոկ աշխարհական,
Ո՛չ գիտեն սաղմոս, շարական: (էջ 119)*

Նրանց տգիտությունը ժողովրդական ասացվածքի համաձայն է պատկերված.

¹¹ Ա. Դոլուխանյան, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011, էջ 149:

*Թէ մէկ թագի ձգես փորն,
Չի գտնիլ մէկ եչն ու երն:* (Էջ 120)

Մոնթերը մտածում են ոչ թե հոգևոր գիտելիքների մասին, այլ համեղ ուտելու.

*Հացով ուտեն մեղր ու կարագ,
Էն վախտն գան ի պատարագ:* (Էջ 121)

Հայտնի է, որ Գողթն գավառն աչքի էր ընկնում իր մրգատու այգիներով: Դրա համար էլ այն կոչվել է գինեվետ գավառ, ուր ընտիր խաղողի տեսակներ են աճեցրել և գինի պատրաստել: Բողոքելով հոգևորական դառնալ ցանկացողների բազմաքանակությունից՝ բանաստեղծն ասում է.

*Էժան են քանց չամիչ, փշատ,
Տիրացուն քանց ժողովուրդն շատ:* (Էջ 123)

Ամենասարսափելին մոնթերի նյութապաշտությունն է.

*Աղքատ մեռելէն խռովին,
Հարստին վրայ ժողովին:* (Էջ 123)

Խիստ ուշագրավ է «Տաղ ի վերայ մածունի, զոր ընծայ բերին Նաղաշ Յովնաթանին» ոտանավորը: Տաղում տեսնում ենք մարդու առողջության համար մածունի օգտակարության գովքը: Հայտնի է, որ հայերը հնագույն ժամանակներից օգտագործել են մածունը ու դրանից ստացվող թանը: Դրանք եղել են հայի հիմնական կերակրատեսակներից: Մածունը նաև համարվել է նվեր տանելու հարմար ընծա ու հարգված միջոց: Բանաստեղծը ցնծում է, երբ իրեն մածուն են նվիրում. այդ նորությունը նրան ավետիս է թվում.

*Յանկարծ լուայ աւետեաց ձայն,
Թէ «Ուրախ լէր, դու, Յովնաթան,
Ձի եկեալ է մածուն ու թան...»*(Էջ 128):

Մածունը բանաստեղծը համարում է արքայական ուտելիք, այն համեմատում է արեգակի լույսի հետ: Հետաքրքիր է, որ մածունը նա համարում է նաև մարմնի դեղ ու այնպիսի ուտելիք, որը չկա Ֆռանգստանում: Նշում է մածունի բուժական հատկությունները՝ այն համարելով «մահիլամ բժշկական» (էջ 129):

Լինելով լուսավորության պաշտպան՝ Նադաշ Հովնաթանը հեզնում է տգետ մարդկանց: «Տաղ ի վերայ Ագուլեցի Թումանին, զոր քառասուն ամաց սկսաւ կարդալ» ոտանավորում կան զավեշտալի բառախաղեր: Որոշ մարդկանց համար գիրք կարդալը կրակ է: Քառասունամյա Թումանը հասարակ բառերն անգամ կարդալ ճո կարող.

*Առանց վարդապետ
Ո՞նց դառնայ վարպետ,
Գրինք «Կարապետ»,
Կու կարդա «կարպետ»:* (էջ 132)

Ինչպես երևում է, Հովնաթանն ունեցել է հակառակորդներ, որոնցից մի քանիսին ծաղրում է իր ոտանավորներում: Դրանցից մեկը մի աբեղա է, որը նույնիսկ փորձել է ոտանավորով ծաղրել Հովնաթանին, և ինքը նրան տալիս է չափածո պատասխան.

*Ունիս գեղ մի, որ Վերի գետ,
Ո՛չ հիւր կերթայ, ո՛չ վարդապետ,
Երկու երեց՝ խռով իրերաց հետ
Եւ մեկ քան զմէկ տրգէտ:* (էջ 133)

«Անարգանք ինքնահաւան մարդոյ վերայ է ասացեալ Յովնաթանն» տաղում բանաստեղծը սպանիչ ծաղր է ուղղում ինքնահավան մարդկանց: Այդպիսի մարդիկ համեմատվում են հոտած դարմանի, անլվա ամանի, կոտրած աղամանի, խելագարի, տխմարի, դառը բանջարի, զոռացող էշի, շիլ ոչխարի, մրոտած մարդու հետ: Նման վիրավորական բնութագրերի տարափ է թափում բանաստեղծը ինքնահավանի գլխին: Ոտանավորը սկսվում է այսպես.

*Անգետ եւ տգէտ,
Սարի փտած փէտ:
Վիթ-վիթ եւ անմիտ,
Խակ եւ փթամիտ: (Էջ 133)*

Սպանիչ է Վարդան ժամհարին ուղղված ծաղրը: Ոտանավորն ունի գավեշտախառն վերնագիր՝ «Վասն Վարդան ժամհարին, որ վասն իւր քնատ լինելոյն, եկեղեցոյ որձակն սպանեց, ասելով, թե «Ի՞նչ բան ունէս հետ օտար հաւերի»:

Բանաստեղծին հատկապէս մտահոգել են այն հոգևորականները, որոնք, ինչպէս Գրիգոր Նարեկացին կասեր «անկնդրուկ» են: Նա հեզնում է ժամկոչ Վարդանին, որը քարոզը չի ուղղում ժողովրդին պատշաճ ձևով, այլ անտարբեր ու փութանակի: Նման հոգևորականն էլ տաղում պատկերվում է խայտառակ նկարագրով.

*Պօյրդ նման է ծուռ նետի,
Ձեռքդ եւ ոտքդ՝ խուշկած փետի,
Աչքդ ու բերանըդ է նման
Կատվի, մկան եւ առնետի: (Էջ 136)*

Բանաստեղծը կրկին շեշտում է հոգևոր հոր նյութապաշտությունը.

*Գիշեր, ցերեկ աղօթք կանես,
Թէ՛ Տէր Աստուած, ո՞վ կու մեռնի: (Էջ 137)*

Հոգևոր հորը նա կոչում է շէթ (հիմար, գիժ), որն իր համար է մորթել աքլորին, որովհետև բկլիկ է, խոնարհվում է գառան մսի ու փլավի առաջ: Մինչդեռ հոգևոր հայրը պետք է հիշեր, թե ինչ էր ասում Ղուկաս ավետարանիչը, և, ի վերջո, անհրաժեշտ է միշտ հիշել վերջին դատաստանի օրը Քրիստոսի ատյանի առաջ.

*Տէրն Քրիստոս գայ ի յատեան,
Ջմեզ ժողովել յըշտեմարան,
Մեծ դատաստան լինելոց է,
Հոգիդ՝ մտնելոյ քաւարան: (Էջ 141)*

Տաղում բանաստեղծը նկարագրում է, թե տեր Վարդանին ինչ է սպասվում դժոխքում: Մա այն պատկերացումներից է, որ միջնադարում ընդհանրապես հայ քրիստոնյան ուներ դժոխքի մասին: Տեր Վարդանը շարունակ դժոխքի կրակներում աղաղակելու է, իսկ նրա բերանը փակելու են «կայրածիթով».

*Աչացդ կու տան կարմիր շամփուր,
Բերանդ կածեն արձիճ եւ հուր,
Փորդ ծակվի, ողբաս անդուր,
Չայն ելանէ որպէս սանթուր: (Էջ 142)*

Հոգևորականները ոչ միայն շատակեր ու ագահ են, այլև հարբեցող: Այդ մասին է պատմում «Տաղ ի վերայ հաւին, զոր բարեկենդանին տեր Գրիգորն սեղանէն մէկ հաւ ետուր ժամհարին, թե մուրթուճում շինէ, ժամհարն առեալ գնաց, գինովցաւ, հաւն գողանալ ետուր»: Մանրամասն ծանոթագրություն հիշեցնող տաղի վերնագրից իմացվում է, թե ինչ է կատարվել, և այդ է ընկած Հովնաթանի զավեշտալի երգիծանքի հիմքում: Տեր Գրիգորը ժամհարին պատվիրել էր հավի հատուկ ճաշ պատրաստել ու բերել.

*Տէր Գրիգոր եղբայրասէր
Ժամհարին էտուր պատուէր,
Ասաց. «Քեզ մեծ վարձք է եւ խէր,
Հաւն մուրթաճամ եփէ, բեր»: (Էջ 143)*

Ժամհարն չի կատարում տեր Գրիգորի պատվերը, որովհետև հարբում է, իսկ հավն էլ գողանում են:

Խիստ ուշագրավ տաղ է Շահվերտունց տեր Աբրահամին ուղղվածը: Տեր Աբրահամը Հովնաթանի հակառակորդներից էր, նա Շոռթի խոջայական դասից էր և նույնիսկ եղել էր Փարիզում: Ֆրանսիայից վերադառնալուց հետո այլևս ոչինչ տեղական չի հավանում: Նա նույնիսկ ծաղրական ոտանավոր էր գրել Հովնաթանի մասին և

հավանաբար տարածել: Սա զայրացրել է բանաստեղծին, ու նա սարկազմով տալիս է իր պատասխանը.

*Վեր ես կացել հիմի էլ նոր,
Դու՝ ինձ գրել ոտանաւոր.
Այժմ միտք արա բարակ, խոր,
Թե իմ ձեռնէն ո՞նց կուտէս չոր: (Էջ 111)*

Բանաստեղծն իրեն համեմատում է գայլի, իսկ տեր Աբրահամին գառան հետ, ինքը կրակ է, իսկ իր հակառակորդը՝ չոր փուշ, որը կրակից անմիջապէս կայրվի ու կոչնչանա: Տաղում մատնացույց է արվում տեր Աբրահամի բարոյական անկումը: Նա Ֆռանգստանում մեծ քանակի փողեր է ծախսել, հաճախել է անառակատներ: Վերադարձել է հայրենիք, սակայն իր բեռները չի բացել: Տեր Աբրահամը երկու որդի ուներ, որոնք հարուստ էին ու գործունյա, սակայն հայրը նրանց փողերը վատնել է Ֆռանգստանում: Իրականում տեր Աբրահամը բավարար կրթություն չունի, դրա համար էլ ոչ կարգին քարոզ է կարդում եկեղեցում, ոչ սաղմոսներ գիտի, Յայսմավուրքն էլ կարգին չի հասկանում, որի պատճառով նրան բամբասում են: Տեր Աբրահամը Ֆրանսիայից վերադառնալուց հետո այլևս տեղական գինի չի խմում, նախընտրում է ֆրանսիականը.

*Խիզուտոյ գինին, որ լաւ սոյ է,
Նա չի խմիլ, թե՛ «թթու է»,
Քացախ գինին խմէ, գովէ,
Կասէ «Ֆռանկի կարփո է»: (Էջ 114)*

Նա ծաղրում է նաև տեր Աբրահամի հորը, որի դուռը միշտ փակ էր աղքատների համար: Ըստ երևույթին, տեր Աբրահամի և Հովնաթանի թշնամանքը հին պատմություն ունի, սակայն երկար ժամանակ Հովնաթանը ցուցաբերել է բարություն ու հանդուրժողականություն: Երբ տեսել է, որ երեցն անցել է բոլոր սահմաններն ու իրեն ուղ-

դել է ծաղրական ոտանավոր, ահա ինքն էլ տալիս է արժանի պատասխան:

Հովնաթանը երգիծական ոտանավորներ ունի նաև կանանց մասին:

Հայ միջնադարի նշանավոր փիլիսոփա Գրիգոր Տաթևացին իր «Գիրք քարոզութեան» «Ձմերան հատորում» հայ կանանց տալիս է նման խորհուրդ. «Իմաստուն կինը պարտավոր է աչքն ամուսնու վրա պահել, շարժվել նրա կամքով, ամուսնու սիրուց չհեռանալ և թույլ չտալ, որ ամուսինը հեռանա իր սիրուց»¹²:

Կանանց նվիրված տաղի վերնագրից արդեն պարզ է դառնում, որ Հովնաթանը կանանց ծաղրում է մտերմական ու սրտացավ հումորով: Ոտանավորի վերնագիրն է՝ «Տաղ ծիծաղական ի Նաղաշ Հովնաթան է ասացեալ վասն կանանց»: Քարոզելով աշխատասիրություն՝ բանաստեղծը ցավով է նշում, թե կանայք արհեստականորեն երբեմն խուսափում են աշխատանքից.

*Իրիկունը կասեն հուր է,
Բան չեն անիլ, թե հաւկուր է: (Էջ 163)*

Տաղը պարունակում է բազում ազգագրական նյութեր: Օրինակ՝ ինչ են անում կանայք քրիստոնեական տոների՝ Վարդավառի, Համբարձման, Զատիկի ժամանակ: Նրանք ամուսիններին զգուշացնում են, որ դատարկ օրորոցը չի կարելի շարժել, ոտքի թմբելն անցնելու համար հարկավոր է յոթ պառավի անուն տալ: Բանաստեղծը խորհուրդ է տալիս հեռու մնալ սին հավատալիքներից.

*Կանանց բանն է ծաղրական,
Վնաս, սուտ եւ մեղանշական: (Էջ 106)*

Մեկ այլ երգիծական ոտանավորում Հովնաթանը չի մոռանում նշել, թե հաճախ որքան շատ հոգսեր ունի հայ կինը: Հաճախ տան տանիքը կաթում է, տանը այլուր, վառելիք չկա. կնոջ վիճակը ծանրա-

¹² Գրիգոր Տաթևացի, Թևակոր խոսքեր և ասույթներ, Երևան, 2009, էջ 21:

նում է, երբ աղջիկ է լույս աշխարհի բերում: Կանայք տան հոգսերը թեթևացնում են իլիկ և ջահրա մանելով: Այդ ատոմին երկու գործիքներով փորձում են փակել պարտատիրոջ պարտքերը:

Տաղի վերջին տան մեջ բանաստեղծը հայտնում է ինքնակենսագրական կարևոր փաստ.

*Կանանց դարդէն Յովնաթանն
Գնաց դէպ Թիֆլիզու Խանն,
Կամի այնտեղ դնել վաթանն,
Թող ազատվի կանանց բերնէն,
Նոցա տնագ ու սուտ քանէն: (էջ 110)*

Երգիծական ոտանավորներում կան երկու շարականներ: Դրանցից մեկը դափանցի երեցի անունից է, իսկ մյուսը կոչվում է «Օրհնութիւն գեղացի երեցի» (Այս վերագրեալ շարականին օրհնանքն է): Դափանցի երեցի տաղը գրված է գրաբարով և հիշեցնում է XII-XVII դարերին պատկանող ձեռագրական ընդհանուր կանոնով, գրեթե նույն բառերով ու բովանդակությամբ հոգևոր բովանդակություն ունեցող կանոնիկ մի գործ: Ահա մի հատված.

*Ի քեզ եմք ապաւին, Քրիստոսի մայր Աստուծոյ,
Զքեզ մեծացուցանեմք, օրհնեալդ ի կանայս.
Փա՛ռք հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ... (էջ 126)*

Գյուղացի երեցի օրհնանք-շարականը հավանաբար երեցները երգելով ասել են տնօրհնեքի ժամանակ: Այդ օրհնության խոսքում հայ գեղջուկի կենցաղի հետ կապված ոչ մի կենդանի կամ իր չի մոռացվում: Օրհնվում են խեցեղենն ու պղնձեղենը, յուղամանն ու ձիթամանը, մեղրամանն ու թթխմորի ամանը, պանրամանըն ու թանամանը, գինու ամանն ու ձկան ամանը, սրահն ու տունը, մառանն ու փայտանոցը, կուժն ու քրեղանը, հանդն ու անդաստանը, չիմանն ու բոստանը, գոմն ու մարագը, այգին ու բաղչեն, կարասն ու կճուճը, բիրարն ու

աղը, ապրանքն ու մալը, սուփրեն ու շալը, բողկն ու տակը, էշն ու ջորին, դարմանն ու գարին, նաև.

<i>Ցորենն ու հացն,</i>	<i>Աղբիւրն ու նովն,</i>
<i>Փէտն ու ցանն,</i>	<i>Հողն ու քարն,</i>
<i>Ամբարն ու հնձանն,</i>	<i>Էծն ու ոչխարն,</i>
<i>Եզն ու կովն,</i>	<i>Դուռն ու հայաթն,</i>

Հիմն ու բունհաթն: (Էջ 128)

Ինչպէս տեսնում ենք գյուղացու կենսապայմանների հետ կապված ամեն ինչ թվարկվում է:

Նաղաշ Հովնաթանի երգիծական տաղերը պատկերում են XVII դարի վերջի XVIII դարի սկզբի հայ կյանքի բազում երևույթներ, որոնք մերթ մերժողական ծաղրով, մերթ մտերմական կշտամբանքով քննադատել է Հայաստանն առաջընթացի մեջ տեսնելու մղումով կենսասեր բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՄԵՐԸ

Նադաշ Հովնաթանի տաղերի թեմատիկան բազմաշերտ է: Աս. Մնացականյանը կատարել է այդ տաղերի բովանդակային-թեմատիկ բաժանումը և դրանց մի խումբն առանձնացրել է «Խոհա-խրատական տաղեր» խորագրի ներքո: Նման տաղերից առաջինը կոչվում է «Տաղ Շուռութեցի Նադաշ Յովնաթանէ ասացեալ վասն հոքոյ»: Տաղը շոշափելի աղերսներ ունի Աստվածաշնչի Հին ու Նոր Կտակարանների և անդրաշխարհի պատկերացումների հնագույն հավատալիքների հետ, սակայն հիմքում բարոյախոսական ու դաստիարակչական բովանդակությունն է:

Քրիստոնյա հավատացյալին, ընդհանրապես մարդուն աստվածաշնչային պատվիրանների շրջանակում պահելու համար Հովնաթանը հիշեցնում է հին աշխարհի երկու նշանավոր պետական գործիչներին՝ Սողոմոն թագավորին և Ալեքսանդր Մակեդոնացուն: Սողոմոն արքան Հին Կտակարանի երևելի դեմքերից է, որի կյանքը և նրան վերագրվող գրվածքները գիտեին հայ միջնադարի կրթված մարդիկ:

Ըստ Հին Կտակարանի՝ Աստված քնի մեջ երևում է Սողոմոնին և առաջարկում, որ նա խնդրի իրենից կամ երկար կյանք, կամ հարստություն, կամ իմաստություն: Սողոմոնը խնդրում է վերջինը. «Եվ Տերն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թե կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր իսելաստություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք. այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել և ո՛չ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի»¹: Նա Սողոմոնին տալիս է և՛ հարստություն, և՛ երկար կյանք:

Ալեքսանդր Մակեդոնացու կյանքը հիանալի գիտեին Ոսկեդարի հայ մատենագիրները: Նա Մովսես Խորենացու սիրելի պատմական դեմքերից էր. հայ Պատմահորն է վերագրվում Ալեքսանդրի «Վարքի» առաջին թարգմանությունը:

Վիեննայի միաբանության անդամ Հ. Տաշյանը Մակեդոնացուն չի համարել սովորական նվաճող. «Մարդկային իրավահավասարության մասին պատկերացումը, որ խորթ էր իր ժամանակակիցների հսկայական մեծամասնությանը, նրան թելադրեց համաշխարհային պետության գաղափարը, ըստ որի՝ նրանում չեն լինելու ո՛չ հաղթողներ, ո՛չ պարտվողներ»²: Ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենը գրում է. «Անցած ճանապարհին Ալեքսանդրն ամենուր թողնում էր իր հանճարի ապացույցները: Նա չէր կործանում, նա հիմնադրում էր նոր կայսրություն»³:

Ալեքսանդրի կերպարն արտացոլվել է ողջ միջնադարյան գրականության մեջ: Դրա լավագույն ապացույցը նրա ժողովրդական դարձած վարքի բազում խմբագրություններն են, որոնք կան հայկա-

¹ Թագավորություններ, Գ 3, 11-12:

² Պատմություն Ալեքսանդր Մակեդոնացույ, աշխատասիրությամբ Հ. Միմոնյանի, Երևան, 1989, էջ 11:

³ Ա. Դոլուխանյան, Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014, էջ 82:

կան ձեռագրերում: Նրա կերպարը դարձել է բանաստեղծության նյութ:

XIV դարում Խաչատուր Կեչառեցին վերարտադրում է Ալեքսանդրի առասպելացված կերպարը չափածո կաֆաներով: Այդ կաֆաներում Ալեքսանդր Մակեդոնացուն հիշեցնում են աշխարհի և հարստության ունայնության մասին.

*Խրատ տամ հրգօր արքայ,
Դու ականջ կալ՝ և ինձ հաւատայ,
Զինչ շինի՝ քակի ամեն,
Սողոմոն տեսաւոյն է վկայ⁴:*

Անշուշտ, Նաղաշ Հովնաթանը ծանոթ էր հայկական ձեռագիր մատյաններում եղած Ալեքսանդր Մակեդոնացու «Վարքին», և ինքն էլ իր հերթին ժամանակակիցներին զգուշացնում է չազահանալ, որովհետև հին աշխարհի երկու մեծերն իրենց հետ ոչիչ անդրաշխարհ չեն տարել.

*Սողոմոն թագաւոր և Ալեքսանդր,
Հիմի ու՞ր է մեծ մարդ քանց նոքա ծանդր,
Չտարան յաշխարհէս մէկ հիլալ սանդր,
Զանք արա՛, ժառանգէ՛ երկնից չարբաղն⁵:*

Հին Կտակարանի Սողոմոն Իմաստունի կողքին Հովնաթանի տաղում հանդես է գալիս Ավետարանի աղքատ Ղազարոսը, որը մահվանից հետո վայելում է հոգու անմահությունը: XIII դարի բանաստեղծ Ֆրիկը «Ի վերայ մեծատան եւ աղքատ Ղազարին» տաղում պատկերել է աղքատ Ղազարոսի վիճակը մահվանից հետո.

*Մեռաւ, զընաց աղքատ Ղազար,
Տեղն է կանաչ, սագ ու պայծառ,*

⁴ Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Երևան, 1988, էջ 65:

⁵ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 164:

Անմահութեան աղբիւրն առջին՝

Շուշան, ծաղկունք հարիւր հազար⁶:

Հովնաթանը պատկերում է, թե ինչպէս շատ մարդիկ տանջվում ու տառապում են նոր շէնքեր, նոր հարստություն ձեռք բերելու համար, սակայն կյանքից հեռանալուց հետո չեն արժանանում աղքատ Ղազարոսի երջանիկ ճագատագրին.

Շատ մարդիկ աւելի աշխատեն, գանձեն,

Նոր շինութեան համար միտք անեն, տանջեն,

Էս գիշեր հոգիդ ի բաց պահանջեն,

Ետոյ չեկալ Ղազարոսի ծիծաղն⁷:

Հայ միջնադարի մտածողության մեջ դեռ կենդանի էին այն հավատալիքները, որ մարդու մահից հետո նրա հոգին անդրաշխարհի անցման ժամանակ փորձաքննության է ենթարկվում: Այս երևույթը խիստ տեսանելի է պատկերված զրադաշտական կրոնի գաղափարախոսությամբ ստեղծված Արտա Վիրապ նամակ Յուշտի Ֆրիան գրքում: Մահից հետո մարդու հոգին պետք է անցնի Չինվաթ կամուրջը: Եթե մարդը մեղսագործ է, Չինվաթ կամուրջը մարդու մազից էլ բարակ է դառնում, և մեղավորի հոգին կամուրջը չի կարողանում անցնել, ընկնում է դժոխք: Իսկ եթե արդար մարդ է, ապա Չինվաթ կամուրջը լայնանում է 9 նիզակի չափով, և արդարը դյուրությամբ, հաջողությամբ, հաղթական անցնում է կամուրջը ու գնում դրախտ⁸:

Հարուստ ու փողատեր մարդկանց բանաստեղծը հիշեցնում է, որ նրանք մերկ իջնելու են գերեզման: Նրանց չեն օգնելու ոչ ոսկե քամարը և ոչ էլ ողջ ունեցվածքը, որովհետև պետք է պատասխան տան իրենց կատարած մեղքերի համար.

⁶ Ֆրիկ, Տադեր, աշխատասիրությամբ Ա. Տ. Ղանալանյանի, Երևան, 1982, էջ 93:

⁷ Նաղաշ Հովնաթան, Նշվ. աշխ., էջ 165: Այսուհետև այս գրքից բերվող տաղերի մեջբերման էջերը կնշվեն վերևում – Գ.Մ.:

⁸ Արտա Վիրապ նամակ, Յուշտի Ֆրիան, պահլավերենից թարգմանեց, ծանոթագրեց Ռ. Թ. Աբրահամյան, Երևան, 1958, էջ 51:

*Կապել ես ոսկեղեն դուրդաշ քամարն,
Ո՞նց ես անց կենալու հրեղեն կամարն,
Տալոյ ես քո մեղաց թիւ և համարն,
Քո հալն ո՞նց կլնի, եարաբ, էն չաղն: (էջ 165)*

Իսկ ինչպե՞ս պետք է ապրի մարդը, որ դժոխքի բաժին չդառնա: Նա շիտակ հողագործի նման պետք է մշակի ու ցանի հողը, նույն ձևով շիտակ պահի հոգին, որում իշխի սերը մարդու նկատմամբ, երբեք չնախանձի որևէ մեկին, այնժամ կարժանանա դրախտում հայտնվելու բախտին.

*Դու շիտակ հողագործ մարդոյ նման ես,
էն կու հնձես՝ ինչ որ ձեռօք սերմանես,
Սրտումդ սէր տնկես, նախանձն հանես,
Շուտով կերթաս դրախտի այգեքաղն: (էջ 165)*

Ավետարանական պատգամները կրկնվում են Հովնաթանի տաղերում: Անհրաժեշտ է աղքատախնամ լինել, կերակրել քաղցած մարդուն, ծածկել նրա մերկությունը: Այս նույն ցուցումը կա նաև հանճարեղ Սայաթ-Նովայի «Արի ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ» խրատական խաղում, որում պատվիրան կա՝ սիրել աղքատին, հյուրին ու տարաշխարհիկ մարդուն.

Ա՛ղքատ սիրէ, դո՛ւնաղ սիրէ, տա՛ր սիրէ՞:

Ահա նույն ձևով, սակայն Սայաթ-Նովայից ավելի առաջ, Հովնաթանը մարդկանց պատվիրում է.

*Աղքատն տար տունդ, կշտացրու փորն,
Մերկութիւնն ծածկէ, հաքցրու շորն... (էջ 166)*

⁹ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, աշխատասիրությամբ Մ. Հասրաթյան, Երևան, 1963, էջ 28:

Դաստիարակչական մեծ արժեք է հետևյալ պահանջը, որը գուցե ամենակարևորն է: Անհրաժեշտ է գնահատել մարդու աշխատանքը, ծերացած ծնողներին խնամել, ինչպես խնամում են վարդն ու նարգիզը, հարևանների հետ պահպանել բարիդրացիական հարաբերություններ.

*Մարդ աշխատանք մի՛ մոռանար հարգիզ,
Քո ծնողն պահե՛ղ զինչ վարդ և նարգիզ...
Քո դրկիցն է քեզ պետք ու քո օյմադն¹⁰: (Էջ 166)*

Նաև կարևոր է այն, որ բանաստեղծը խստագույնս քննադատում է ստախոսությունն ու հայիռյանքով խոսելը:

Հին Կտակարանի Սողոմոնի առակներից քաղվածքներ կան Հովնաթանի տաղերում: Նա բողոքում է, որ իսկական արվեստը թերագնահատվում է: Շուկայում տեղացիները չեն գնում իր բարձրարվեստ նկարները, որոնք նկարված են ֆրանսիական ներկերով, գնում են անարվեստ, անճաշակ կտավներ, որոնց գինը էժան է: Սողոմոն Իմաստունի խոսքն այստեղ հնչում է տեղին, ու դրան գումարվում է հայկական ժողովրդական ասացվածքը.

*Էշն ի՞նչ գիտե, զինչէ տօմարըն,
Եւ խոզն ի՞նչ գիտե մարգարտի շարն: (Էջ 167)*

Տգետի ու անգետի խնդիրը, որը եղել է, կա ու կլինի մարդկային հասարակության մեջ, մշտապես կատարելով իր ավերիչ դերը՝ մտահոգել է Հովնաթանին:

Ավելորդ հպարտությունը, իր առավելությունը շրջապատի նկատմամբ շեշտելը, սուտ առաքինի ձևանալը դատապարտում են քրիստոնեական սրբազան գրքերը, նրանց ձայնակցում է նաև Հովնաթանը.

*Մարդ կայ, որ «սուրբ» է և «ծաղկանց դաշտ» է,
Անուամբ «ճգնաւոր», «աստուածապաշտ» է,*

¹⁰ Օյմաղ-մերձավոր, հարազատներ:

*Բայց յոյժ մեծամիտ և կամապաշտ է,
Նա դիւաբնակ և կռապաշտ է: (Էջ 170)*

Սարսափելի է, երբ ոչինչ չարարող մարդիկ, որոնք դուպն-ինչ քարիք չեն ստեղծում հասարակության համար, ստեղծողների նկատմամբ լցված են նախանձով, շարունակ բամբասում են նրանցից ու մահվան որոգայթներ փորում:

*Մարդ կայ, որ ինքն չանել մեծություն
Եւ ոչ գործակալ փոքրաւորութիւն,
Անողին հետ կանէ նախանձ, չարութիւն
Բամպասէ, փորէ յորոգայթ մահուն: (Էջ 171)*

Հատկապես խոհա-խրատական տաղերում մերժվում են տգիտությունը և այդ երևույթի կործանարար հետևանքները: Լայնորեն օգտվելով հայ ժողովրդական բանահյուսությունից՝ Հովնաթանն իր տաղերում օգտագործել է հայ ժողովրդական առած-ասացվածքների հարուստ շտեմարանը:

*Մարդ կայ, որ մեկ է և հազար աժէ,
Հազար մարդ էլ կա, որ մեկ մի չաժէ:
Ապա էն մէկն, որ հազար աժէ,
Անգետ մարդուն մօտ նա փող մի չարժէ: (Էջ 169)*

Սողոմոն Իմաստունի պես Նադաշ Հովնաթանն իմաստությունը համարում է թանկագին պարզ: Խելքն ու իմաստությունը առավել թանկ են, քան ոսկին, զմրուխտը, ողջ հարստությունը:

Բանաստեղծը տղաներին հիշեցնում է, որ պետք է ապրել նամուս ու դայրաթով¹¹: Ամեն երեկո՝ քնելուց առաջ, մարդը պետք է մտածի իր վարքագծի ու անելիքների մասին: Խելացի մարդն իր ընտանիքը պահում է փաշայի ապահովության մակարդակով, իսկ անխելք մարդն իր ընտանիքին թողնում է մերկ ու քաղցած:

¹¹ Նամուս ու դայրաթ - պատվախնդրություն ու ջանասիրություն:

Ծույլ մարդը հարբում է, ուրախանում հիմար երևույթների վրա, կարող է սուտ երդվել և դրանով վնաս հասցնել ուրիշներին: Սոդոմոն Իմաստունն առականերում ասում է.

*Ծուլությունը հատուկ է թուլամորթին,
և գործ անել չսիրող մարդը քաղցած կմնա¹²:*

Սոդոմոն Իմաստունն առականերում ունի «խուսափել ծուլությունից» կոչվող հատուկ բաժինը, ուր մարդուն խորհուրդ է տալիս նմանվել մրջյունին ու լինել նրանցից ավելի: Մրջյունն ամռանը պատրաստում է իր ուտելիքը, հնձի ժամանակ ամբարում իր պաշարը: Կամ պետք է լինել մեղվի նման, որը գործում է ջանասիրաբար ու իր վաստակը մատուցում թագավորներին և տնանկներին՝ բժշկության համար¹³:

Տգետ մարդիկ չեն լսում իմաստուն մարդկանց խրատները, իսկ երբ ընկնում են փորձության մեջ, այնժամ հիշում են այդ խրատները, որոնց չեն հետևել.

*Տգետն խրատես՝ չէ լսել բանի,
Քանի որ հեշտ է՝ բարի անուանի,
Յորժամ փորձութեան մեջն անկանի,
Յանժամ խրատն յիշէ, փռշմանի: (Էջ 178)*

«Վասն փրնթի եւ անհոգ մարդոյ» տաղում խիստ մանկավարժական արժեք է ներկայացնում փնթիության մերժումը: Որպեսզի մերժի փնթի մարդկանց, Հովնաթանը համեմատում է մաք-րասեր ու փնթի մարդուն: Մաքրասեր մարդը նման է պարզ ու մաքուր ջրի, ոսկու նման փայլում են նրա բակը, տունը, կտուրը: Նման մարդը գովասանքի է արժանի, իսկ փնթի մարդը չունի բարոյական մաքրություն:

Մտածելով հայ հասարակության բարոյական ու կրթական մակարդակի խնդիրների մասին՝ Հովնաթանը հատուկ տաղ է գրել բո-

¹² Առականեր 19, 16:

¹³ Առականեր 6, 6-8:

լորի համար: Ակամայից հիշում ես XII դարի հոգևոր գործիչ, մեծ հայրենասեր ու բանաստեղծ Ներսես Շնորհալուն, որը Հայաստանի հոգևոր առաջնորդն էր և հատուկ ուղերձով դիմեց համայն հայության բոլոր խավերին՝ իր նշանավոր «Թուղթ ընդհանրական» գործում: Հովնաթանի տաղը կոչվում է «Խրատ պետքական հասարակաց»: Այնքան արդարամիտ է սկսվում տաղը, որ տրամադրում է այն ուշադիր լսել կամ կարդալ մինչև վերջ.

*Ո՛վ մարդ, որ կամիս կեանքդ երկարի.
Եւ խաղաղ մընաս վերայ աշխարհի,
Թող չար խօսելոյ լեզուդ դադարի,
Փախիւր ի չարէ և արա զբարի:* (էջ 175)

Ավետարանական վարդապետությունն անմիջապես զգացվում է տաղում: Ավետարանում կարդում ենք. «Ինչու՞ քո եղբոր աչքի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում. կամ ինչպե՞ս քո եղբորն ասում ես՝ թո՛ղ որ հանեն այդ շյուղը քո աչքից, և ահա քո աչքում գերան կա»¹⁴:

Ավետարանական այս իմաստությունը հայ մատենագրության մեջ գալիս է դեռևս V դարից: Ղազար Փարպեցին ստախոս արեղաներին մերկացնող «Թղթում» Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանին բացատրում է. «Դարձեալ իբրև զլցեալսն պիղծ և վատթար գործովք, որոց չհայեցեալ իւրեանց գերանն՝ յայլոց մատուցեալ՝ զննել հանել շիւղ»¹⁵:

Միքայել Նալբանդյանը, որը հիացած էր Փարպեցու «Թղթի» քննադատական, ճանաչողական ու դաստիարակչական բովանդակությամբ, նկատում է. «Շատ տեղ էլ Ս. Գրքից ձևեր և ոճեր է փոխ առնում Փարպեցին, մենք այդ տեղերն էլ ցույց տվինք»¹⁶: Հարկ է, որ մենք

¹⁴ Մատթեոս է, 1-5:

¹⁵ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն: Թուղթ առ Վահան Մամիկոնյանին, աշխատասիրությամբ Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 466:

¹⁶ Նույն տեղում, էջ 323:

էլ, հետևելով մեծ Նալբանդյանին, Հովնաթանի տաղերում առանձնացնենք քրիստոնեական սրբազան մատյաններից բերվող մեջբերումները, որոնք վկայում են բանաստեղծի անկեղծ բարեպաշտությունը և հնարավորինս աստվածաշնչային պատվիրաններով առաջնորդվելը: Նա հիանալի յուրացրել է Ավետարանի «Մի դատի՛ր» հատվածը¹⁷.

*Թէ քոյ ընկերին դու չար կամենաս,
Չարն քեզ կու գայ, անճար կու մընաս...,
Աչացդ գերանն տե՛ս, որ գղջանաս: (Էջ 175)*

Կարևոր ցուցում է տալիս բանաստեղծն ազգին ու մարդուն: Անհաշտ թշնամուն չի կարելի հավատալ, իսկ բարեկամին էլ մի հեռացրու քեզնից: Բարեկամիդ եթե բամբասես, նա ընդմիշտ կհեռանա: Այդ հատվածում Հովնաթանը օգտագործում է ժողովրդական իմաստուն խոսքը՝ «Թրի կտրածը լավանում է, լեզվինը՝ ոչ».

*Անհաշտ թշնամուն դու մի՛ հաւատար
Եւ բարեկամըն բնաւ ձեռաց մի տար,
Թէ զնա բամպասես՝ էլ քեզ մոտ չի գար,
Սրի եարէն կու գայ, լեզուինը չի գար: (Էջ 176)*

Կարևոր զգուշացում ունի Նաղաշ Հովնաթանը մարդուն, որն ասված է բոլոր ժամանակների համար: Չի կարելի բամբասել մի երևույթի մասին, որը քո աչքով չես տեսել: Եթե ունես որևէ գաղտնիք, ուրեմն փորձիր, որ այն քո տանից դուրս չգա: Ընտանեկան գաղտնիքները պետք է պահել տան ներսում, այլապես դրանցով կարող է խայտառակվել քո ընտանիքը, եթե հարևանն այդ մասին իմանա: Նա վերստին խորհուրդ է տալիս իմաստունների կողքին քաղցած մնալ, քան տգետների հետ ուտել ու մասնակցել խրախճանքների:

Խոհական ու բարոյախոսական իր դասերը Հովնաթանը մատուցում է ըստ քրիստոնեական սուրբ գրքերի՝ նպատակ ունենալով

¹⁷ Մատթեոս, գլուխ է:

այդօրինակ փաստերով դաստիարակել մարդկային հասարակությա-
նը: Նա ներկայացնում է իրական կյանքում գոյություն ունեցող մարդ-
կային վարքագծի հակադիր տեսակները: Կան մարդասպաններ, գողի
ընկերներ, կան ինքնասպան մարդիկ, կան մարդիկ, որոնց գործած
մեղքերը ծովի նման են, որոշ մարդիկ էլ փորձում են շարունակ
ապաշխարել.

*Մարդ կայ՝ մարդասպան է և ընկեր գողի,
Մարդ կայ՝ իւր կամաւ աշխարհս կու թողի,
Մարդ կայ՝ մեղաց մէջ տալիս է լողի,
Մարդ կայ՝ արտասուօք մեղքն կողողի:* (էջ 178)

Հետաքրքիր համեմատություն է կատարում բանաստեղծը:
Եթե մարդը շատ հարստացել է ու կորցրել իր գթասրտությունը, ապա
նա կնմանվի մարմարե աղբյուրի, որը սակայն ցամաքած է ու ջուր
չունի:

Ահա նրա վերջնական պատգամն՝ ուղղված մարդուն.

*Գընա՛ պատարագ, գտեառնէ՛ գոհացիր,
Մահացու մեղաց փախի՛ր, հեռացի՛ր,
Կուգես մեծանաս՝ շատ խոնարհ կացիր,
Դու փոքր խօսէ՛ և շատ իմացի՛ր:* (էջ 179)

Մեծախոսության արատը, որը դատապարտված է համայն
մարդկության կողմից, քննադատում է նաև ուշ միջնադարի հայ բա-
նաստեղծը: Անգլիացի նշանավոր դրամատուրգ և բանաստեղծ Թո-
մաս Միդլթոնը (1580-1627) մի առիթով ասել է. «Մեծ խոսք ասողները
երբեք մեծ գործ անողներ չեն»¹⁸:

Դաստիարակչական կարևոր խրատներ ունի իր մեջ «Լուա-
րուք դուք ամենեքեան» տաղը: Ակամայից հիշում ես Հ. Թումանյանի
«Թմբկամերդի առումը» պոեմի «Նախերգանքը».

¹⁸ В. Вахмистров, Читай и говори по-английски=Read and speak, Москва, 1973, с. 64.

*Հէ՛յ, պարոննե՛ր, ականջ արեք
Թափառական աշուղին,
Միրու՛ն տիկնայք, ջահե՛լ տըղերք,
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին¹⁹:*

Հովնաթանը նույնպես բոլորի ուշադրությունը հրավիրում է լսելու իր կարևոր ասելիքը.

*Լուարուք դուք ամենեքեան,
Հայրք և եղբայրք պատուական,
Զի ասացի քանի մի բան,
Բրբն խրատ ինչ օգտութեան (էջ 180):*

Պարզվում է տաղն իր ժամանակի քաղաքավարական կանոնների ուսուցման փոքրիկ դասագիրք է: Նման դասագրքեր այժմ գրվում են թե՛ մանուկների, թե՛ մեծերի համար: Օրինակ՝ «My little golden book of Manners» գիրքը գրված է մանուկների համար, և այն սովորեցնում է երեխաներին՝ ինչպես օգտվել սեղանից, ինչպես դրսևորվել հյուր գնալիս, հասարակական վայրերում և այլն:

Նմանատիպ խորհուրդներ է տալիս իր հայրենակիցներին Հովնաթանը XVIII դարի սկզբին: Նա բացատրում է, որ իր խրատները վերաբերում են թե՛ ընտանեկան միջավայրին և թե՛ օտարների հետ շփումներին: Օտարի տուն մտնելիս նախ պետք է դուռը թակել և ներս գնալ հրավերից հետո: Օտարի տանը չպետք է խուզարկու հայացքով նայել տան իրերին, առավել ևս երբեք չի կարելի դրանց ձեռք տալ: Երբ սեղանի մոտ են հրավիրում, ապա կարողացիր գինու գավաթից ճիշտ օգտվել: Եթե մարդկանց շրջապատում ջուր ես խմում, ապա խմիր առանց փնչացնելու, եթե ծիծաղում ես, ապա ձիու նման մի խրխնջա, եթե հասարակական վայրում ես, ապա մի ննջիր.

¹⁹ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. IV, Երևան, 2020, էջ 61:

*Թէ ջուր խմես պինդ մի՛ փնջալ,
Երբ ծիծաղիս՝ մի՛ խրխնջալ,
Ի մէջլիսին դու մի՛ ննջալ,
Փոքր բանի մի՛ տրտնջալ: (էջ 181)*

Եթե հյուր ես գնում մի նստիր քո ուզած տեղում, սպասիր, որ քեզ նստեցնեն: Հյուրերի մոտ մի զբաղեցրու մեծ տեղ և ընկերոջդ մի տուր փոքր տեղ: Զրուցիր ցածր ձայնով, միայն դու մի խոսիր, թող որ ընկերդ էլ իր խոսքն ասի:

*Դու մի նստիր լայն ու զարեղ,
Ընկերիդ տեղն թողուլ նեղ,
Ցած խօսիր, փոքր և համեղ,
Թող ընկերդ էլ խօսի մէկ ծեղ:*

Ճաշի սեղանի մոտ քեզ պահել իմացիր, օգտվիր միայն քո ամանից:

Ամերիկյան մանուկների քաղաքավարության կանոնների գրքում էլ նման խորհուրդներ կան.

*Ծամիր ուտելիքը փակ բերանով:
Երբեք մի խոսիր, երբ բերանումդ ուտելիք կա²⁰:*

Իր տաղերում բանաստեղծը քննադատում է հարբեցողությունը, գինով տարվելը: Հարբած մարդն այլևս չի կարողանում կառավարել իրեն, ինչ մեղք ասես, որ չի գործում: Հարբածը և հարբեցողը չի կարող օրինակելի ընտանիքի հայր լինել. նրա երեխաները քաղցած կմնան.

*Գինեսերն խելաց դառնայ,
Զինչ մեղք որ ասես՝ գործէ նայ,
Ինքն իւր պակասն չիմանայ,
Երեխերն քաղցած կու մնայ: (էջ 182)*

²⁰ My little golden book of Manners, By Peggy Parish, The Walt Disney Company, 1962, p. 5.

Բավական է այս տողերը կարդալ և անմիջապես հիշում ես Նար-Դոսի «Հոգուն վրա հասավ» պատմվածքի հարբեցող նախշքար Դավթին, որի երեխաները քաղցած էին: Նույն զգուշացումներն ունի նաև XV դարի նշանավոր տաղասաց Հովհ. Թլկուրանցին «Քեզ հոգևոր խրատ մի տամ» տաղում, որում ներկայացնում է հարբած մարդու անկումը, բերում նրա զագրելի վարքագծի բազում օրինակներ և վերջում բացատրում, թե գինին կարելի է խմել, սակայն չափավոր.

*Գինի մարդոյ ամոթ բերէ
Եւ ի լեզու չար արկանէ.
Քան զգինին յետն հացին
Երկու լ' իրեքն այլ շահ չէ²¹:*

Մանկավարժական խորհուրդներն ակնհայտ են «Վասն հատուցանելոց գերախտիս աշխատաւորաց» տաղում: Հարկավոր է լավ արհեստ իմանալ կամ խորանալ գիտութան մեջ, և դա կօգնի կյանքում չունենալ դարդ ու կարիք.

*Լաւ արուեստ ուսիր և շատ գիտութիւն,
Որ չքաշես դարտ և պակասութիւն: (Էջ 184)*

Բանաստեղծը վերստին հիշեցնում է ծնողների նկատմամբ հոգատար լինելու պահանջը, նաև ուսուցիչների, որոնք անձաձիր սովորեցնում են մարդկանց: Այս կերպ ապրելով մարդը առողջ կլինի մարմնով ու պայծառ հոգով.

*Քո ծնողացն, որ քեզ են պատճառ
Եւ վարպետացըն գործով շնորհափառ,
Լաւ պատիւ արայ, օրհնութիւն առ,
Որ լինիս հոգով և մարմնով պայծառ: (Էջ 184)*

Շարունակ պատգամելով, որ մարդը լինի երախտագետ՝ բանաստեղծը չի մոռանում քննադատել երախտամոռ մարդկանց: Այդ

²¹ Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվագյանի, Երևան, 1960, էջ 186:

խնդրին նվիրել է հատուկ տաղ՝ «Վասն երախտամոռաց մարդոց» վերնագրով:

Մարդիկ կան, ովքեր դիմացինից մեծ օգուտներ են ստանում, նրանց շնորհիվ հարստանում են, սակայն նրանց կույր հոգիները երախտիքի զգացմունք չունեն իրենց բարերարների նկատմամբ: Մարդիկ էլ կան, որ քծնանքով օգուտներ են ստանում, սակայն օգուտից հետո կարող են բարև չտալ, նույնիսկ վնասել:

*Պետք եկած օրն շուտ գայ ետևըդ,
Քեզ մատաղ կլնի, որ օրհնէ արևըդ,
Գալ օրն կուզէ, որ կտրէ թևըդ,
Խօսիս՝ չի խօսիլ, չառնել բարևըդ:* (Էջ 186)

Խաբեությունը ասելի է բանաստեղծի համար, մի շարք տաղերում նա մերժում է մարդկության կյանքում այնքան մեծ տեղ զբաղեցնող խաբեությունը: «Վասն ջանջալ²² եւ խաբեբայ մարդոց» տաղում Հովնաթանը գրում է այնպիսի մարդկանց մասին, որոնք կարող են պարտք վերցնել ու այլևս չվերադարձնել, ամանեղեն տանել ժամանակավոր, սակայն յուրացնել ընդմիջո: Կան նաև հատուկ խաբեբաներ, որոնք աճպարարությամբ կողոպտում են դուրահավատ մարդկանց: Երբեմն այդպիսիները խաբում են անգամ իրենց ընկերներին՝ չհասկանալով, որ ընկերն ամեն ինչ կռահում է: Մի՞թե խաբեբան ու ազնիվ մարդը ստեղծված են նույն արարչից՝ զարմանում է Հովնաթանը:

Լուսավորությունը համարելով կյանքի առաջընթացը՝ բանաստեղծը բացատրում է, որ չկարդացող մարդու միտքը խավարի մեջ է, մինչդեռ կարդացող մարդը ունի պայծառ ու սուր միտք:

*Չկարդացող մարդըն խաւար է ու կուր,
Կարդացողին միտքըն պայծառ է և սուր:* (Էջ 188)

²² Զանջալ – դանդաղ, պարտքի վճարումը ձգձգող, թույլ, մի քիչ տկար:

«Վասն էհտիպար²³ ցուցանելոյ» տաղում Հովնաթանը բացատրում է կյանքի բարդությունները, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է շրջահայաց ու զգույշ լինել: Մարդը պետք է օգնի ուրիշին, եթե կարող է, իսկ եթե չի կարող, ապա թող ազնվաբար խոստովանի.

*Մէկ մարդ, որ սիրով քեզ ասէ. «Եղբա՛յր,
Ե՛կ, մէկ բան շինէ դու ինձ համար»,
Եթէ կարող ես՝ շուտով յանձն առ,
Թէ՛ չէ՛ պարզ ասայ. «Ես չեմ կարենալ»:* (էջ 189)

Ընկերոջը վստահելը երբեմն ողբերգական ավարտ կարող է ունենալ. ընկերոջը դավաճանելը հավասար է դառնալ մատնիչ Հուդա.

Պիղծ է քան զՀուդայ, մատնիչ է և գող: (էջ 188)

Հովնաթանը նաև խիստ խոսքեր է ասում քսու մարդկանց մասին, որոնք աղավաղում են մարդկային կերպարը:

Նաղաշ Հովնաթանի մանկավարժական ու դաստիարակչական դասերը գրեթե նույնությամբ կրկնվում են բանաստեղծի խնջույքի և ուրախության երգերում:

Աշխարհիկ կյանք վարող, Վրաստանի արքայական պալատում ընդունված աշուղը, բանաստեղծը, նկարիչը ոչ միայն ինքն է ապրել աստվածաշնչային պատվիրաններով, այլև նման պատգամները ցանկանում է տեսնել համայն մարդկության մեջ:

²³ Էհտիպար – վստահություն, փոխաբ. – զգուշություն:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
«Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարանի գիտական քարտուղար
Բանասիրական
գիտությունների թեկնածու*

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ՀՐԱՊԱՐԱՆԿՈՒՄՆԵՐԸ

Հայ միջնադարյան գրականության անդաստանում բացառիկ երևույթ է Նադաշ Հովնաթանը, որի գրական ժառանգության մեզ հասած հատվածը¹ փաստում է, որ մեծն տաղերգուի համար բանաստեղծությունը իրականության խորքային ու գունագեղ դրսևորումներն արտացոլելու լավագույն միջոցն է:

Նադաշ Հովնաթանի երգերը գրի են առնվել², արտացոլվել են տարբեր տաղարաններում, ձեռագրերում, սակայն տպագիր տարբերակով չեն ներկայացել բավական երկար ժամանակ:

Հովնաթանի տաղերը ներառող ձեռագրերն իրենց տեղն են գտել Վիեննայի, Վենետիկի, Էջմիածնի (հետագայում արդեն Մաշտոցյան Մատենադարանի) Մատենադարաններում³, ինչպես նաև

¹ Ըստ Մ. Թ. Ավդալբեգյանի՝ մեզ է հասել 100 տաղ: Տե՛ս Մ. Թ. Ավդալբեգյան, Հայ նոր գրականության նախանշանները XVI-XVII դարերի տարեգրության մեջ և Նադաշ Հովնաթանը, Պատմաբանասիրական հանդես, 1962, թ. 1, էջ 89:

² Պահպանվել են բանաստեղծի երկու ինքնագիր ձեռագրեր Վենետիկում և Մաշտոցյան Մատենադարանում:

³ Տե՛ս Մ. Մկրտչյան, Նադաշ Հովնաթան, Երևան, 1957, էջ 7:

մասնավոր հավաքածուներում, որոնցից, օրինակ, Հովհաննես ա. քին. Մկրյանին պատկանող ձեռագիրը 1932 թ. հանգրվանել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Մատենադարանում⁴: Նրա տաղերը ընդօրինակվել են բազմիցս: Նշենք դրանցից մեկը՝ 1765 թ. ընդօրինակումը: Ձեռագրի գրիչներն են ագուլեցի Հայրապետը և նրա եղբայրը՝ մահտեսի Հակոբը⁵: Հետագայում Ա. Չոպանյանի, Ն. Ակինյանի, Մ. Մկրտչյանի, Մ. Աբեղյանի և այլոց ջանքերի, ուսումնասիրությունների արդյունքում արդեն 20-րդ դարի սկզբին Նաղաշ Հովնաթանի անունը և գրական ժառանգությունը դարձել է ժողովրդի սեփականությունը: Արժևորելով միջնադարյան տաղերգուի ստեղծագործության գաղափարական ու գեղարվեստական ինքնատիպությունը՝ ներկայացնենք նրա տաղերի հրապարակումները ժամանակագրական կարգով:

Նաղաշ Հովնաթանի երգերի տպագրությունը սկսվում է 19-րդ դարի առաջին կեսից: Առաջին հրապարակումներն արտացոլվում են մամուլում կամ ժողովածուներում: Դրանք ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված հատուկ ենտ երգերն են, որոնք ուսումնասիրողները հանձնում են հայ ընթերցողների լայն շրջանակին և որոնց հրապարակումը գիտական նպատակ չէր հետապնդում: Այդ հրապարակումներն ավելի շատ հայ ընթերցողին Հովնաթան բանաստեղծի հետ ծանոթացնելու միտումն ունեին: Բանաստեղծի կյանքի, գործունեության, տաղերի գիտական ուսումնասիրություններն ի հայտ են գալիս 20-րդ դարի սկզբից: Ենթադրում ենք, որ հետագա ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է հայտնաբերվեն ընթերցողին անհայտ նոր տաղեր:

⁴ Այս ձեռագրի պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Միմոնեան, Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի: Ուսումնասիրութիւն եւ տաղեր: Յաւելուած՝ Նաղաշ Հովնաթանի եօթը անտիպ տաղերը, Պէյրութ, 1981, էջ 7-8:

⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4426; Ձեռագրի մասին հիշատակումը տե՛ս Ա. Բ. Գևորգյան, Մի լրացում Հովնաթանյան տոհմաձագին, Պատմա-բանասիրական հանդես, 1996, թ. 1-2, էջ 377:

Ինչո՞վ էր պայմանավորված Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգության նկատմամբ հետաքրքրության առաջացումը: Նախ, 18-րդ դարից սկսած, իսկ 19-րդ դարում հատկապես, գրեթե բոլոր հայագիտական կենտրոններում, Մատենադարաններում, խոշոր գրադարաններում ձեռագիր մատյանների ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունն աճում է: Հետազոտական աշխատանքների ընթացքում ի հայտ են գալիս հայ հին և միջնադարյան գրականության նոր էջեր, որոնց ուսումնասիրությունը խիստ կարևոր էր գիտական շրջանակների համար: Երկրորդ գործոնն այն էր, որ Նաղաշ Հովնաթանի տաղերը հայ միջնադարյան գրականությունն արտացոլող ստեղծագործություններ են, որոնց հրապարակումները հնարավորություն ընձեռեցին ամբողջացնելու այդ ժամանակաշրջանի գրական կյանքի պատկերը: Դրանք նորություն էին իրենց տեսակով, բովանդակությամբ, տաղաչափական արվեստով:

Նաղաշ Հովնաթանի առաջին բանաստեղծությունը հրապարակվել է 1830 թ. Կալկաթայում⁶: Խոսքը «Վրաստանայ զօգալներն» վերնագրով բանաստեղծության մասին է, որը տարբեր ձեռագրերում, ինչպես նաև տպագիր տարբերակներով արտացոլվել է տարբեր վերնագրերով: Ավելի ուշ՝ 1882 թ., այս ստեղծագործությունը ներառվել է Ա. Տեկանցի կազմած «Հայերգ: Մեղեդիք, տաղք եւ երգք» ժողովածուի մեջ⁷՝ «Տաղ ի վերայ Թիֆլիզու» վերնագրով, իսկ 1951 թ. բանաստեղծի տաղերի ամբողջական ժողովածուում ներկայացել է բոլորովին այլ վերնագրով՝ «Տաղ ի վերայ Գուրջիստանայ զօգալներին»: Տաղը տարբեր ձեռագրերում ունեցել է նաև այլ վերնագրեր, որոնք բոլորն արտացոլվել են 1951 թ. ժողովածուի մեջ⁸: Նշենք նաև, որ արդեն 20-րդ

⁶ Տե՛ս Սիրակարկաջ որ է հանդիսարան հայերեն, պարսկերեն եւ հնդստաներեն երգոց, հաւաքեալ աշխատասիրութեամբ Ստեփաննոսի Ջնթումեան Աւետեանց, Կալկաթա, 1830, էջ 69-70:

⁷ Տե՛ս Հայերգ: Մեղեդիք, տաղք եւ երգք, հաւաքեաց եւ հրատարակեաց Արիստակէս վրդ. Տեկանց ուխտէն Վարագայ, Թիֆլիս, 1882, էջ 122-123:

⁸ Նաղաշ Հովնաթան, Նշվ. աշխ., Երևան, 1951, էջ 11:

դարում երգի ռուսերեն թարգմանությունը ներառվել է «Антология армянской поэзии»⁹ գրքում, իսկ վրացերեն թարգմանությունը Ի. Գրիշաշվիլու ժողովածուի մեջ (1933 թ.):

Մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը գիտական ուսումնասիրությունների մեջ առաջին հրապարակված տաղ համարվել է «Յորժամ եղել գարուն...» վերնագրով բանաստեղծությունը, որի մասին կխոսենք հաջորդիվ: «Վրաստանայ զօգալներն» բանաստեղծության մասին եղել են բազմաթիվ վկայություններ, սակայն այն չի հիշատակվել՝ որպես Նաղաշ Հովնաթանի առաջին տպագիր ստեղծագործություն: Ավելին, չի հիշատակվել նաև այն ներառող երգարանը՝ «Սիրակարկաջ»-ը, որի մատենագիտական նկարագրությունն արտացոլվել է «Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ¹⁰: Վերջինիս ծանոթագրության մեջ արձանագրվել է բանաստեղծության վերնագիրը: Այս գրքի մասին կան նաև այլ վկայություններ¹¹, սակայն դրանք հիմնականում առնչվում են երգարանի տպագրությանը:

Առաջին հրապարակումից քսանյոթ տարի անց Գամառ Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» ժողովածուում տպագրվում է Հովնաթանի «Յորժամ եղել գարուն...» տաղը¹²: Հրատարակելով այս և

⁹ Антология армянской поэзии: с древнейших времен до наших дней, под ред. С.С.Арутюняна и В.Я.Кирпотина, Москва, 1940. - с. 304-312.

¹⁰ Հայ գիրքը 1801-1850 թթ., կազմեց Հ. Դավթյան, Երևան, 1967, էջ 174-175:

¹¹ Գրքի մատենագիտական նկարագրությունը տե՛ս նաև Հայերեն երգարանների մատենագիտություն (1512-1921 թթ.), աշխատասիրությամբ Կարինե Հարոյանի, Երևան, 2014, էջ 1-3, տաղի վերնագիրը՝ էջ 1: Երգարանի մասին տե՛ս նաև Ա. Երևմեան, Հնդկահայ մշակոյթը, Բազմավեպ, Վենետիկ, 1965, թ. Ը.-Ժ., էջ 215-225; Ռ. Նանուկյան, 1810-1820-ական թթ. հնդկահայ գրական շարժման պատմությունից, Լրաբեր հասրակական գիտությունների, Երևան, 1989, թ. 5, էջ 33; Զ. Միրզաբեգեան, Ակնարկներ հնդկահայ գրականության եւ մշակոյթի պատմության 1770-1850, Երևան, 2000, էջ 56-57:

¹² Տե՛ս Ազգային երգարան հայոց, աշխատասիրությամբ Գամառ Քաթիպայի, Մ. Պետերբուրգ, 1857.- էջ 126: Գրքի տպագրության թվականի վերաբերյալ կան իրարամերժ կարծիքներ: Որոշ ուսումնասիրողներ նշել են 1856, սակայն մեզ հայտնի օրինակի տիտղոսաթերթին արտացոլված է 1857:

այլ տաղասացների գործերը՝ հեղինակն ընդգծում է, որ «...երգերից, մանաւանդ ազգային երգերից մենք իմանում ենք մի ազգի ոգին, նորա բարքը, գաղափարը եւ զգացողութիւնը»¹³: Տաղը լույս է ընծայվում ժողովածուի 85-րդ համարի ներքո՝ առանց տաղասացի անվան առանձին ընդգծումի: Երգի հեղինակի մասին վկայությունը վերջին քառյակն է, ուր նշված է «Նախաշով Ադամ»: Ստեղծագործությունն աքրոստիկոս է. յուրաքանչյուր տան առաջին տառով կազմվում է «Յովնաթան» անունը: Նաղաշ Հովնաթանի երգերի գիտական հրատարակության մեջ տողատակում նշվել են նաև երգի այլ տարբերակներ, տարընթերցումներ, վերնագրեր՝ «Տաղ մէջլիսի», «Տաղ գինոյ» և այլն¹⁴: Հետագայում երգը ներառվել է նաև «Եղբայրասեր» խմորատիպ լրագրի¹⁵ և «Քնար հայկական» ժողովածուի մեջ¹⁶:

1861 թ. հրապարակվում է Նաղաշ Հովնաթանի «Տաղ ուրախութեան» երգը¹⁷՝ տողատակի փոքրիկ ծանոթագրությամբ: Բանաստեղծությունը կրկին աքրոստիկոս է. յուրաքանչյուր տան առաջին տառերով կազմվում է տաղերգուի անունը՝ «Նաղաշէ»: Սակայն սույն հրապարակման ծանոթագրության մեջ խմբագիրը՝ Մսեր Մսերյանցը, նրան շփոթում է 15-րդ դարի տաղերգու, նկարիչ, հոգևոր գործիչ Մկրտիչ եպս. Բաղիշեցու՝ Ամիդի առաջնորդի հետ, որին նկարչության մեջ հմուտ լինելու պատճառով տվել են Նաղաշ անունը:

Տաղը և համապատասխան ծանոթագրությունները նույնությամբ, առանց փոփոխությունների ներառվում են նաև «Քնար հայկական» ժողովածուի մեջ¹⁸: 1898 թ. տպագրվում է Կ. Կոստանեանցի

¹³ Նույն տեղում, էջ 1:

¹⁴ Տե՛ս Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 159:

¹⁵ Նաղաշ Յովնաթան, Յորժամ եղեւ գարուն..., Եղբայրասեր, Կալկաթա, 1863, թ. 31, էջ 251:

¹⁶ Քնար հայկական, խմբագրեց Մ. Մ. Միանսարեանցի, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 387:

¹⁷ Տե՛ս Տաղ ուրախութեան ասացեալ ի Նաղաշէ, Ճռաքաղ, Մոսկվա, 1861, թ. ԺԳ, էջ 216:

¹⁸ Քնար հայկական, էջ 427:

«Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը» ժողովածուն, որտեղ ներառվում է նաև այս տաղը՝ ծանոթագրությամբ, որ այն նախապես տպագրվել է «Ճռաքաղ»-ում և «Քնար հայկական»-ում: Սակայն միևնույն ժամանակ Կ. Կոստանյանը հակասում է ինքն իրեն՝ հիշատակելով Հ. Տաշյանի ձեռագրերի ցուցակը¹⁹, ըստ որի՝ տաղի հեղինակը Հովնաթանն է²⁰:

Ձեռագիր տաղարաններում սույն տաղն ունի ևս մեկ տուն, որը սկսվում է «Ամեն պարոնայք և ցանկալիք...» տողով: Այն արտացոլված է բանաստեղծի տաղերի ժողովածուում, սակայն այս տունը չի արտացոլվել ո՛չ «Ճռաքաղ» ամսագրում, ո՛չ էլ «Քնար հայկական» ժողովածուում: Քանի որ որոշ ձեռագրերում այս տունը բացակայում է, հավանաբար սույն տպագրություններում վերարտադրվել է այդպիսի մի ձեռագրի բովանդակությունը:

«Քնար հայկական» ժողովածուի (1868 թ.) հավելվածում ներառված են Նաղաշ Հովնաթանի ևս երկու տաղեր՝ «Տաղ ի վերայ կատուի...» և «Օրհնութիւն գեղացի իրիցի» վերնագրերով: Ըստ խմբագրի տեղեկատվության՝ բանաստեղծի ստեղծագործությունների 1705 թ. ձեռագիրն ինքը ստացել է, երբ գիրքն արդեն պատրաստ է եղել տպագրության, այդ պատճառով այս երկու երգիծական տաղերը ներառվել են հավելվածի մեջ²¹: Անդրադառնալով սույն ծանոթագրությանը՝ Մ. Մկրտչյանը հավելում է. «Թերևս կարելի է ենթադրել, որ ձեռագիրը Նաղաշինն է, քանի որ գրված է նրա կենդանության օրոք»²²: Սակայն նշենք, որ դեռևս 1951 թ., երբ տպագրվում էր Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների ամբողջական ժողովածուն, այս երկու ստեղծագործություններն էլ ներառվում են այստեղ՝ «Տաղ ի վերայ սուտ մեռեալ կատվին...» և «Օրհնութիւն գեղացի երեցի (Այս վերոգ-

¹⁹ Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 1006-1008:

²⁰ Կ. Կոստանեանց, Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը, Վաղարշապատ, 1898, էջ 34:

²¹ Նույն տեղում, Հաւելուած, էջ 46:

²² Մկրտչյան Մ., Նշվ. աշխ., էջ 9:

րեալ շարականին օրհնանքն է)» վերնագրերով՝ հղում տալով «Քնար հայկական» ժողովածուին: Չնայած բոլոր դեպքերում հրապարակումների հիմք է ծառայել 1705 թ. ձեռագիրը, սակայն «Քնար հայկական» ժողովածուում տաղերն ամբողջական չեն, մինչդեռ 1951 թ. ժողովածուի մեջ դրանք ամբողջական են, ներառված են տարբերակները՝ համապատասխան ծանոթագրություններով: Այս ամենը փաստում է, որ 1705 թ. ձեռագրի իսկության վրա կասկածելն անիմաստ է:

Նաղաշ Հովնաթանի «Օրհնութիւն գեղացի իրիցի» երգիծական տաղը չի ներառվել Արշակ Չոպանյանի «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գրքում (Փարիզ, 1910 թ.): Հեղինակը պատճառաբանել է. «Երգիծական կտորները տասնէն աւելի են. ասոնց մէջ կան մի քանիներ, այնքան կոպիտ ու անհամ, որ աւելորդ համարեցայ հրատարակել զանոնք»²³: Ա. Չոպանյանի նշված գրքի գրախոսության մեջ²⁴ Գ. Լևոնյանը հակադարձում է նրան՝ նշելով, որ Նաղաշ Հովնաթանին նվիրված գիտական ուսումնասիրությունն անպայման պետք է ներառեր բոլոր գործերը:

Մեր ուսումնասիրության ընթացքում Նաղաշ Հովնաթանի տաղերի 1870-ական թվականների տպագրություններ չկարողացանք գտնել: Բացակայում են նաև դրանց վերաբերյալ հիշատակումները: Միայն 1880-ական թվականներից հետո նորից պարբերական մամուլում կամ առանձին ժողովածուներում սկսում ենք հանդիպել բանաստեղծի տաղերի տպագրություններին:

1885 թ. Հ. Հարությունյանի նախաձեռնությամբ և առաջաբանով Կ. Պոլսի «Մասիս» լրագրում հրատարակվում են Նաղաշ Հովնաթանի չորս տաղերը, որոնցից միայն մեկն էր «Յորժամ եղև զարուն...» խորագրով հայտնի ընթերցողին: Մյուսները բանասիրական որոնումների արդյունք էին: Տաղերին նախորդող փոքրիկ առաջաբանում Հ.

²³ Ա. Չոպանեան, Նշվ. աշխ., էջ 13:

²⁴ Գ. Լևոնեան, Աշուղը, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1911, հտ. XXI, էջ 232-233:

Հարությունյանը գրում է. «Փշուր մը ասոր երգածներէն ձեռք բերինք հին ձեռագիր երգարանէ մը, որ կը կարծենք դեռ լոյս չէ գտած տպագրութեամբ հայ բանասիրաց կողմէ», իսկ հետո ավելացնում. «Որպէս զի օր մը կարելոր ամբողջութեան մը հանդիպէինք... սկսած ենք ետեւէ լինիլ ասոնց փշրանքներէն ձեռուրնիս անցածը հրատարակութեան տալու...»²⁵: Հ. Հարությունյանը չի նշում, թե որ ձեռագրից է ինքն օգտվել, որտեղ է այն հայտնաբերել կամ ինչ ճակատագիր է հետո ունեցել: «Մասիս» լրագրում առաջին անգամ տպագրված տաղերը խորագրված են «Այսօր ցնծամք պարելով», «Եկայք այսօր ժողովեցէք...», «Ի միասին ամենեքեան...», որոնք բոլորն էլ հետագայում ներառվում են բանաստեղծի տաղերի ամբողջական ժողովածուի մեջ, երկուսը՝ այլ վերնագրերով՝ «Տաղ ուրախութեան ի վերայ սեղանոյ...»²⁶, «Տաղ ուրախութեան ի Նաղաշ Յովնաթանէ»:

1899 թ. «Լումայ» հանդեսի առաջին համարում հրատարակվում են ևս երեք տաղեր՝ «Ջուղայեցւոց հայրենի պարզ լեզուն...», «Վասն Վարդան ժամահարին...», «Գովասանք Գուրջստանայ»): Տաղերին կից հանդեսի խմբագրությունը ծանոթագրում է. «Այս երեք ժողովրդական բանաստեղծությունները մենք հանել ենք մի գրչագրից, որ գտնուում է արժ. Հ. Յովհաննէս աւ. քահ. Մկրեանի մօտ»²⁷: Խոսքը նույն այն ձեռագրի մասին է, որը հետագայում հանգրվանում է Անթիլիասի մայրավանքում և որի մասին խոսել ենք հոդվածի սկզբում: Հանդեսում երեք բանաստեղծություններն էլ ներկայացված են առանց հեղինակի մասին որևէ տվյալի: Մա բացատրվում է նրանով, որ ձեռագրում ևս հեղինակային որևէ ընդգծում չի եղել: Սակայն այս ստեղծա-

²⁵ Գիներգութիւնք Նաղաշ Յովնաթանի, Մասիս, Կ. Պոլիս, 1885, թ. 3755, 2 փետրուարի, էջ 657:

²⁶ Նշենք, որ այս ստեղծագործությունը նույնությամբ վերահրատարակում է Թլկատինցին «Մասիս» լրագրի 1908 թ. համարներից մեկում: Տե՛ս Նաղաշ Յովնաթանի գիներգութիւնները (Գաւառական բանաստեղծութիւն), Մասիս, Կ. Պոլիս, 1908, թ. 12-13, 16 փետրուարի, էջ 244:

²⁷ Տե՛ս Լումայ, Թիֆլիս, 1899, թ. Ա., էջ 275-282:

գործությունները վերագրվել են Նաղաշ Հովնաթանին, քանի որ ունեն ոճական, գաղափարական ու գեղարվեստական նմանություններ ձեռագրում ներառված նրա մյուս տաղերի հետ: Հետագայում նույն տրամաբանությամբ արտացոլվել են նաև տաղերի ամբողջական ժողովածուի մեջ:

Գարեգին Լևոնյանը 1892 թ. տպագրում է «Հայ աշուղներ» ժողովածուն, ուր ի թիվս այլ աշուղների, հիշատակվում է նաև Նաղաշ Հովնաթանը, որից ներկայացված է երկու տաղ: Առաջինը՝ «Յորժամ եղեւ զարուն...», արդեն ծանոթ էր ընթերցողին, իսկ երկրորդը՝ «Երգը» վերնագրով, առաջին անգամ էր ներկայացվում: Սակայն Գ. Լևոնյանը չի նշում աղբյուրը, թե որտեղից է ինքը քաղել մինչ այդ անհայտ համարվող բնագիրը: Նշենք, որ 1951 թ. այն ներառվում է բանաստեղծի ամբողջական ժողովածուի մեջ «Տաղ սիրոյ ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ բանս» վերնագրով²⁸:

19-րդ դարի վերջից սկսած մինչև հաջորդ դարավերջի առաջին տասնամյակը այլևս որևէ հրապարակում հայտնի չէ: 1910 թ. լույս է տեսնում «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» աշխատությունը, որը համարվում է Նաղաշ Հովնաթանին նվիրված առաջին գիտական ուսումնասիրությունը: Չնայած տարբեր կարծիքներին և գրախոսություններին, որոնց մեջ նշվում են գրքի թերությունները, այնուամենայնիվ հենց այս աշխատությամբ սկիզբ է դրվում տաղերգուի կյանքի և գործունեության գիտական ուսումնասիրությունը, որն ունենում է իր տրամաբանական շարունակությունը:

Մինչև 20-րդ դարը տպագրված բոլոր հրապարակումները փոքրիկ նմուշներ են միջնադարյան տաղերգուի մեծ գրական ժառանգությունից, ու թեև դրանք հրատարակվում էին մամուլի տարբեր անուններում, աշխարհի ամենատարբեր վայրերում (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Կալկաթա, Կ. Պոլիս և այլն), այնուամենայնիվ բավարար չէին Նաղաշ Հովնաթանի անունը գիտական հանրությանը հասու

²⁸ Տե՛ս Նաղաշ Հովնաթան, Նշվ. աշխ., էջ 19-20:

դարձնելու կամ ընթերցող հասարակության մեջ տարածելու համար: Այդ տաղերը պարզապես փոքրիկ հիշեցումներ էին բանաստեղծի անվան և գրական ժառանգության մասին: Դրա վառ վկայությունն է այն, որ Գ. Լևոնյանը, որը հայ մշակույթի ու գրականության բանիմաց անձնավորություններից մեկն էր, հակասում է ինքն իրեն 1892 թ. իր տպագրած «Հայ աշուղներ» ժողովածուի մեջ: Գրքում ներառված տաղերից բացի հեղինակը հայանցիկ ներկայացնում է հեղինակին՝ որպես երկրորդական դեր ունեցող մի աշուղի: «Յորժամ եղեւ գարուն...» տաղից առաջ գրում է. «Աղամ-Նաղաշով. Աղամ Նաղաշեանց կամ Ներկարբեանց. եղել է դարաբաղի, ածել է սագի վրայ»²⁹, իսկ «Երգը» տաղին նախորդում է հետևյալ ծանոթագրությունը. «Նաղաշ-Յովնաթան (կարճիկ Յովնաթան), յայտնի չէ թե՛ որտեղացի և որ թուականին է եղել: Ունեցել է շատ հայերեն երգեր»³⁰: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու ստեղծագործությունները նա ներկայացրել է իրարից անջատ, ինչպես նաև Նաղաշ Հովնաթանին տրված նրա երկու տարբեր բնութագրումները՝ կարող ենք վստահ ասել, որ Գ. Լևոնյանը երկու տաղերը վերագրել է երկու տարբեր հեղինակների:

20-րդ դարից հետո Նաղաշ Հովնաթանը ներկայանում է գիտական լույսի ներքո: Ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված նոր տաղերը հրապարակվում են գիտական փոքրիկ ծանոթագրություններով, ի հայտ են գալիս բանաստեղծի գրական ժառանգությունը լուսաբանող տարաբնույթ ուսումնասիրություններ, ինչի շնորհիվ մինչ այդ քիչ հայտնի կամ անհայտ միջնադարյան տաղերգուի տաղերը դառնում են հայ գրականության մնայուն արժեքներ, թարգմանվում են և ներկայանում նաև օտարազգի ուսումնասիրողին:

«Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» աշխատության մեջ, բացի բանաստեղծի կյանքին և ստեղծագործությանը նվիրված գիտական ուսումնասիրությունից, ներառ-

²⁹ Հայ աշուղներ, աշխատ. Գ. Զ. Լևոնեան, Ալեքսանդրապոլ, 1892, էջ 67:

³⁰ Նույն տեղում, էջ 79:

վում են նրա տաղերը, որոնց գերակշիռ մասը մինչ այդ անհայտ էր հայ ընթերցողին և հետազոտողին: Դրանք Ա. Չոպանյանը, ինչպես ինքն է խոստովանում, հայտնաբերել էր 1898 թ. Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահպանվող ձեռագրերի ուսումնասիրության ժամանակ³¹: Հեղինակի համար աղբյուր են հանդիսացել նաև Վենետիկի, Ս. Էջմիածնի Մատենադարանների ձեռագրերը, մինչ այդ տարաբնույթ ժողովածուներում և պարբերականներում հրապարակված նյութերը, որոնց մասին արդեն խոսել ենք նախորդիվ: Գրքում ներառվել է 48 երգ՝ համապատասխան ծանոթագրություններով, առաջաբանով և բառարանով: Առաջաբանից, գրքի արձագանքներից հասկանում ենք, որ հեղինակը ընտրողաբար է ներկայացրել տաղերը՝ նախապատվությունը տալով «սիրուն, քնքուշ, շնորհալի քնարերգութեանը»: Մինչդեռ «կոպիտ, անհամ» տաղերը չի ներառել՝ մտածելով, որ «...գռեհիկ կտորները բանաստեղծին աւելի վնասել կարող են, քան հրապույր աւելցնել իր գործին»³²:

Ա. Չոպանյանի գիրքը և դրա արձագանքները³³ աշխուժացնում են Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգության նկատմամբ հետաքրքրությունը՝ ներգրավելով նաև օտարազգիներին: 1916 թ. Վալերի Բրյուսովի ջանքերով ընթերցողին են հրամցվում Նաղաշ Հովնաթանի տաղերի առաջին ռուսերեն թարգմանությունները³⁴: Գրքի առաջաբանում Վ. Բրյուսովը ներկայացնում է Նաղաշ Հովնաթանին, իսկ բուն ժողովածուի մեջ ներառում է նրա երեք սիրո տաղերի

³¹ Տե՛ս Չոպանեան Արշակ, Նշվ. աշխ., էջ 8:

³² Նույն տեղում, էջ 13:

³³ Ա. Չոպանյանի գրքի վերաբերյալ տե՛ս Ն. Ալիսեան, Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենք աշխատութիւնք, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1911-1912 (հոդվածաշար); Գ. Լեւոնեան, Աշուղը, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1911 (հոդվածաշար); Յ. Թումանեան, Նաղաշ Յովնաթանը եւ նրա, Քուչակ Նահապետի ու ՍայաթՆօվայի սերը, Թիֆլիս, 1911, 32 էջ, վերատպությունը՝ Թիֆլիս, 1916, 32 էջ:

³⁴ Տե՛ս Поэзия Армении: с древнейших времен до наших дней, под редакцией Валерия Брюсова, Москва, 1916, с. 239-242.

ռուսերեն թարգմանությունները: Առաջին անգամ Նաղաշ Հովնաթանի տաղերը հասու են դառնում ռուս ընթերցողին, իսկ թարգմանության որակը չի զիջում բնագրին: Նշենք նաև, որ ռուսերեն թարգմանությամբ բանաստեղծը և նրա ժառանգությունը ներկայանում են նաև 1940 թ. «Антология армянской поэзии»³⁵ ժողովածուում՝ Վ. Բրյուսովի, Ս. Սպասկու, Վ. Ռոժդեստվենսկու թարգմանությամբ: Բանաստեղծը ներկայացվում է որպես միջնադարյան տաղերու, իսկ ներառված 7 տաղերը հիմնականում սիրո, բնության, զարնան և խնջույքի երգեր են:

1920-ական թվականներից հետո Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունները ներառվում են ամենատարբեր ժողովածուների մեջ, որոնցից առանձնացնենք Մ. Մկրյանի կազմած «XIII-XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն» ժողովածուն (Երևան, 1938 թ.): Առաջաբանի մեջ հակիրճ ներկայացնելով Հովնաթանի կյանքն ու ստեղծագործությունը՝ բուն ժողովածուի մեջ ներառում է նրա տաղերից 22-ը՝ առանց ծանոթագրությունների: Բոլոր տաղերն արդեն հայտնի էին գիտական հանրությանը: Սույն ժողովածուն պարզապես ներկայացնում է Հովնաթանին՝ որպես ուշ միջնադարի տաղերգու:

1947 թ. Անթիլիասի «Հասկ» ամսագրում հրապարակվում է ևս մեկ նորահայտ տաղ՝ «Տաղ եւ գովասանութիւն սրբոյ եկեղեցւոյն Շոռոթ գեղջին եւ բարձրաբերձ Կաթողիկէին, որ կառուցեալ է ի վերայ նորա» վերնագրով: Հրապարակողը՝ Սիմոն Սիմոնյանը, տաղին նախորդող առաջաբանում նշում է, որ նորահայտ տաղը, ինչպես նաև ևս յոթ անտիպներ, պահպանվում են Անթիլիասի Ձեռագրատան մի գրչագրում: Նա նկարագրում է այդ ձեռագիրը և նորահայտ տաղը³⁶:

³⁵ Антология армянской поэзии, с. 20, 304-312:

³⁶ Տե՛ս Ս. Սիմոնեան, Անտիպ տաղ մը Նաղաշ Յովնաթանէ, Հասկ, Անթիլիաս, 1947, թ. 4, Ապրիլ, էջ 90-92: Յոթ տաղերից մեկը ավելի վաղ նա հրապարակել էր «Սեւան» պարբերագրքում: Տե՛ս Սեւան, Հալէպ, 1946, էջ 103-104: Եվս մեկ անտիպ տաղ նույն գրչագրից նա հրապարակում է «Հասկ» ամսագրի 1947 թ.

1949 թ. Լ. Մելիքսեթ-Բեկը ընթերցողին է ներկայացնում «Պատկեր մի տեսի լուսնի նման» երգի տարբերակներից մեկը³⁷: Նա օգտվում է ոչ թե տաղի՝ Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագրից, այլ Վրաստանում պահվող ձեռագիր տարբերակներից, ուր տաղերը ներկայացված են Թբիլիսիի բարբառի խմբագրությամբ՝ բաղկացած 50 տողից: Հետագայում երգն իր բոլոր տարբերակներով ներառվում է բանաստեղծությունների ամբողջական ժողովածուի մեջ, իսկ 1940 թ. թարգմանվում է ռուսերեն³⁸:

Մինչ 20-րդ դարի առաջին կեսի ավարտը, ինչպես ասացինք նախորդիվ, Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգությունն ուսումնասիրվել է մասնակի: Միակ առավել ամբողջական ժողովածուն կազմվել էր 1910 թ. Ա. Չոպանյանի ջանքերով: Եվ ահա 1951 թ. ընթերցողի սեղանին է դրվում Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների ժողովածուն՝ Մաշտոցյան Մատենադարանի գիտաշխատողներ Աս. Մնացականյանի և Շ. Նազարյանի աշխատասիրությամբ: Գիրքը լույս է տեսնում որպես «Գրական հուշարձաններ» մատենաշարի երկրորդ հատոր: Այս աշխատասիրությամբ և ժողովածուով գրեթե ամբողջանում են Նաղաշ Հովնաթանի կյանքի և գործունեության վերաբերյալ բոլոր մանրամասները, ինչպես նաև նրա տաղերը: Չնայած հետագա տասնամյակներում երբեմնակի հայտնաբերվում էին որոշ տաղեր, սակայն սույն ժողովածուն առավել ամբողջական և հիմնավորված տալիս է բոլոր հարցերի պատասխանները: Այն կազմվում է հիմնականում Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր ժառանգության հիման վրա: Ի տարբերություն Մ. Թ. Ավդալբեգյանի՝ կազմողները

մայիսի համարում: Ավելի ուշ Ս. Սիմոնյանը յոթ անտիպ տաղերը ներառում է 1981 թ. տպագրած իր ժողովածուի մեջ:

³⁷ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, XVIII-XIX դ.դ. հայ բանաստեղծների երկերի մի շարք օրինակներ ևս վրացատառ գրությամբ (Նյութեր Թբիլիսիի հայոց բարբառի պատմության համար), Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1949, թ. 4, էջ 31-33:

³⁸ Տե՛ս 1940 թ. ռուսերեն անթոլոգիան:

տաղերի քանակը նշում են 80³⁹: Դրանք ներկայացվում են ըստ բաժինների՝ բոլոր տարբերակների համադրումով: Ներառվում են ինչպես նախկինում տպագրված ստեղծագործությունները, այնպես էլ տաղեր, որոնք երբևէ չէին հրապարակվել: Հաստատվում և գիտական շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ կենսագրական և ստեղծագործական փաստեր, որոնք մինչ այդ երկփեղկված էին: Ըստ Մ. Մկրտչյանի՝ այս ժողովածուում չեն ներառվել միայն Գրական թանգարանում (այժմ՝ Ե. Չաբենցի անվան գրականության և արվեստի թանգարան) առկա տաղարանի երգերը⁴⁰: Բացը լրացնելու համար կազմողները 1954 թ. այդ տաղերը՝ թվով 6-ը, հրատարակում են ԳԱ «Տեղեկագիր»-ում՝ համապատասխան ծանոթագրությամբ⁴¹:

1955 թ. Մ. Մկրտչյանը հայ ընթերցողին է մատուցում մի անհայտ տաղ, որը նրա որոնումների արդյունքում հայտնաբերվել էր Վրաստանի պետական թանգարանի ձեռագրերի մեջ⁴²: «Նոր սիրոյ համար ունեմ շատ հաւաս...» տողով սկսվող սիրո այս տաղը, ի թիվս այլ չորս տաղերի, պահպանվում է, հայկական ձեռագրերում: Մնացյալ չորս տաղերն, ըստ հողվածագրի, արդեն գիտական հանրությանը հայտնի ամբողջական տաղերի տարբերակներն էին, իսկ վերը նշված տաղը դուրս էր մնացել ուսումնասիրությունից:

Եվս մի անհայտ բանաստեղծություն նորից ՀՀ ԳԱԱ Տեղեկագրում հրատարակում է Ռ. Աբրահամյանը⁴³: Տաղը Հովհաննես քին. Մկրյանին պատկանող հայտնի ձեռագրից է, որը, սակայն, նախկինում դուրս էր մնացել ուշադրությունից և շրջանառության մեջ չէր

³⁹ Տե՛ս Նաղաշ Հովնաթան, Նշվ. աշխ., էջ X:

⁴⁰ Տե՛ս Մ. Մկրտչյան, Նշվ. աշխ., էջ 19:

⁴¹ Տե՛ս Շ. Նազարյան, Աս. Մնացականյան, Նաղաշ Հովնաթանի անտիպ տաղերը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1954, թ. 7, էջ 71-80:

⁴² Տե՛ս Մ. Մկրտչյան, Նաղաշ Հովնաթանի մի անտիպ տաղը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Երևան, 1955, թ. 8, էջ 101-104:

⁴³ Տե՛ս Ռ. Աբրահամյան, Նաղաշ Հովնաթանի մի անհայտ բանաստեղծությունը, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1956, թ. 1, էջ 95-100:

դրվել: Վերնագրված է «Ողբերգութիւն յաղագս մահուան Մահդասի Շահապաղին Արգրոմեցոյ, զոր ի Թարեզ քաղաքի հանգեաւ ի Քրիստոս 1161 թուոջ», բաղկացած է 20 տնից: Բուն տաղին նախորդում է հողվածագրի ընդարձակ առաջաբանը՝ տաղի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ:

1957 թ. Նաղաշ Հովնաթանի կյանքն ու որոշ տաղեր ներառվում են Գ. Թարվերդյանի կազմած «Հայ գուսաններ» ժողովածուում⁴⁴, սակայն այս տաղերն արդեն հայտնի էին ընթերցողին նախկին մի շարք հրապարակումներից:

Գիտական հանրության համար արժեքավոր էր Ս. Սիմոնյանի տպագրած գիրքը՝ վերնագրված «Նորայայտ տաղասաց մը Ստեփանոս Դաշտեցի: Ուսումնասիրութիւն եւ տաղեր: Յաւելումս՝ Նաղաշ Յովնաթանի եօթը անտիպ տաղերը» (Պէյրուք, 1981 թ.): Գրքի առաջաբանում Ս. Սիմոնյանը մանրամասն ներկայացնում է աղբյուրը, որից օգտվել է ինքը և որի մեջ ներառված էին նաև Նաղաշ Հովնաթանի անտիպ տաղերը: Հովհ. ավ. քին. Մկրյանին պատկանող ձեռագրի ողիսականը և դրանից պահպանված փշրանքները նոր լույս են սփռում բանաստեղծի գրական ժառանգության վրա՝ ավելի ամբողջական դարձնելով նրա գրական ժառանգությունը⁴⁵: Բոլոր բանաստեղծությունները ուղեկցվում են ծանոթագրություններով:

1951 թվականից հետո, երբ տպագրվում է Հովնաթանի ստեղծագործությունների քննական բնագիրը, հետագա երեք տասնամյակների ընթացքում հայտնաբերվում են տասնհինգ տաղեր, որոնք դուրս էին մնացել քննական բնագրից: Մա, ինչպես նաև այլ հանգամանքներ, պատճառ են դառնում, որպեսզի 1983 թ. Երևանում տպագրվի Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների առավել ամբողջական ժողովածուն՝ Աս. Մնացականյանի աշխատասիրությամբ: Առաջաբանում վերջինս նշում է, որ «... Հովնաթանի գրական ժառանգութ-

⁴⁴ Տե՛ս Հայ գուսաններ, կազմեց Գ. Թարվերդյան, Երևան, 1957, էջ 3-16:

⁴⁵ Ս. Սիմոնեան, Նշվ. աշխ., էջ 7-8, 126-127:

յան երկրորդ խմբից պահպանվել ու մեզ է հասել ավելի քան ինը տասնյակ բանաստեղծություն»⁴⁶։ Բոլոր իննսուն տաղերը (ևս մեկը՝ Հավելվածով, այսպիսով իննսունմեկ) նա ներառում է ժողովածուի մեջ՝ համապատասխան թեմատիկ բաժանումով և բառարանով։ Նույն այս ժողովածուն՝ Աս. Մնացականյանի առաջաբանով և նույն կառուցվածքով, 2015 թ. հրատարակում է Աշոտ Գաբրիելյանը⁴⁷ «Իմ գրադարան» մատենաշարով։

Ամփոփելով՝ նշենք, որ Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգությունն այսօր գրեթե ամբողջական է և ուսումնասիրված, սակայն ձեռագիր մատյանների հետ ամենօրյա տքնաջան աշխատանքի արդյունքում կարելի է ենթադրել, որ այդ ժառանգությունը կարող է համալրվել։

⁴⁶ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 7։

⁴⁷ Տե՛ս Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Ա. Գաբրիելյանի, Երևան, 2015, 232 էջ։



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

*Խ. Արտյունի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի հայցորդ*

«ՈՂԲ»-Ի ԺԱՆՐԸ

ՆԱԳԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐՈՒՄ

Ողբն իր բազմազան տեսակներով հայ հին և միջնադարյան գրավոր մշակույթի մի կարևոր բաժինն է կազմում և որպես ժանր ծնունդ է առել մեր մատենագրության սկզբնավորման շրջանում՝ հարատևելով մինչև նոր ժամանակները: Ողբի զարգացումը պայմանավորված է եղել օտար նվաճողներին ենթակա հայության պատմության եղերական ընթացքով՝ ավերումներ, կեղեքումներ, սպանություններ, գաղթ ու գերեվարություն:

Ողբասացությունը բանահյուսական ժանրերից մեկն է, քանզի այն գոյություն է ունեցել դեռևս գրավոր խոսքին նախորդող ժամանակաշրջանում, բանավոր փոխանցվել է սերնդեսերունդ՝ պատկերելով մարդկանց տխրությունը, մորմոքն ու սուգը: Առաջին ողբերը հայ բանահյուսության մեջ հանդես են եկել իբրև ժողովրդական ծեսեր, թաղման արարողությունների անմասն բաղադրիչներ՝ ուղեկցվելով շարժումներով, տխուր մեղեդիներով ու երաժշտությամբ: «Ամրապնդվելու և ավանդական դառնալու ճանապարհին թաղման ծեսի ժամանակ կատարվող մահենքի ողբը հետզհետե ձեռք է բերել իր կատարողներին՝ ողբասաց կանանց, որոնք մեր հին մատենագիրների վկայությամբ

յամբ՝ հատկապես հեթանոսական և վաղ-քրիստոնեական դարերի հայ ժողովրդի կյանքում, բանարվեստի մյուս ստեղծագործողների հետ միասին, կարևոր դեր են ունեցել»¹: «Գրական հնագույն հուշարձաններից հայտնի է դառնում, որ միշտ էլ մահն ամենամեծ դժբախտությունն ու չարիքն է մարդու համար: Բոլոր ժամանակներում մահը մեծագույն ողբերգություն է եղել թե՛ մեռնողի և թե՛ նրա արյունակից հարազատների համար»²: Սգո և հուղարկավորության ժամանակ հյուսված երգերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Հովհան Մանդակունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Գրիգոր Նարեկացու, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Թլկուրանցու և այլ մատենագիրների ու ստեղծագործողների աշխատություններում:

Հայ մատենագրության մեջ հնագույն ողբի նմուշ կարող ենք համարել 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ շարադրված Գնել Արշակունու սպանության կապակցությամբ հիշատակությունը, որտեղ ողբասաց կանայք ժողովրդական ծեսի համաձայն ողբում էին երիտասարդի մահը՝ Արշակ արքայի հրամանով, որն էլ հենց հրամայել էր սպանել Գնելին. «Ապա հրաման եղև յարքայէն. Ամենայն մարդիկն որ իցեն ՚ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի զսպանեալն»³: «Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ՚ի լսելիս ամենեցուն և ՚ի ձայնարկութն ամենայն, եղև նա մայր ողբոցն, և ձայնարկունքն ամենայն ՚ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւն զհնարս մահու նիւթել, զսպա-

¹ Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 6:

² Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 175:

³ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, բնագիրը Բ. Պատկանյանի, աշխատասիրությամբ Ստ. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 188:

նումն, ձայնիւքն մրմնջոցն 'ի վերայ սպանելոյն 'ի մեջ կոծոյն բարբառելին գեղգեղեալ խանդաղատութեամբ»⁴:

Վախճանվածի հիշատակին նվիրված ժողովրդական սգո երգերի համար հայ մատենագրության մեջ գործածվել են «ողբ», «ողբոց երգ», «լալեաց բանաստեղծութիւն», իսկ նրանց հորինող-կատարողների համար՝ «ձայնարկու», «լալական», «գուսանք ողբերգակք» և այլ անվանումներ:

Ողբերի հորինող-կատարող կարող ենք համարել նաև հայ միջնադարյան բանաստեղծ, աշուղ, նկարիչ, ծաղկող Նաղաշ Հովնաթանին, ում թողած հարուստ գրական ժառանգության՝ մոտավորապես հինգ տասնյակ ձեռագրերի մեջ հանդիպող ստեղծագործություններում առկա են մի քանի՝ ողբի ժանրի բոլոր առանձնահատկությունները կրող տաղեր: Սույն հոդվածում կանդաղատանսնք դրանցից երեքին՝ «Ողբերգութիւն վասն մահուան Միմեոնի աստուածաբան վարդապետին, առաջնորդին Երնջակայ Սուրբ Կարապետի վանից՝ ի Նաղաշ Յովնաթանէ շարադրեալ», «Ողբերգութիւն յաղագս մահուան Մահդասի Շահպազին Արգրոմեցիոյ, գոր ի Թարիեզ քաղաքի հանգեալ ի Քրիստոս 1161 թուոջ» և «Ողբերգութիւն յաղագս մահուան տեառն Յոհաննու աստուածաբան վարդապետին՝ առաջնորդին Գողթնեաց նահանգին՝ ի Նաղաշ Յովնաթանէ շարադրեալ»:

Նաղաշ Հովնաթանն ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում, եղել է Վրաստանի Վախթանգ VI թագավորի պալատական երգիչն ու նկարիչը: Նրա բանաստեղծությունները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ սիրո և ուրախության, զարնան, երգիծական, խոհական-խրատական, կրոնական: Վերջին թեմայով տաղերի մեջ առանձնանում են իր ժամանակի հայտնի հոգևորականների մահվան կապակցությամբ գրված սգո երգերը՝ ողբերը, որոնցում հեղինակը արտահայտել է մարդկային զգացմունքներ ու տրամադրություններ՝ տարբերվելով միջնադարյան տաղերգուների համաբնույթ երգերից իրենց երած-

⁴ Նույն տեղում, էջ 190:

տականությամբ, տաղաչափական նուրբ արվեստով և հանգավորված բանաստեղծականությամբ: Առաջին տաղը՝ «Ողբերգութիւն վասն մահուան Սիմեոնի աստուածաբան վարդապետին, առաջնորդին Երևջակայ Սուրբ Կարապետի վանից՝ ի Նաղաշ Յովնաթանէ շարադրեալ», ինչպես վերնագիրն է հուշում, նվիրված է Սիմեոն վարդապետի՝ Սուրբ Կարապետ վանքի առաջնորդի մահվանը: Սիմեոն վարդապետին այս դեպքում չպետք է շփոթել հայտնի հոգևորական Սիմեոն Երևանցու հետ, քանի որ, ժամանակագրական առումով Նաղաշ Հովնաթանը չէր կարող ծանոթ լինել 1710-1780 թթ. ապրած Հայոց կաթողիկոս, 18-րդ դարի հայ ականավոր աստվածաբան, մատենագիր, մշակութային և քաղաքական գործիչ Սիմեոն Ա Երևանցու մահվան մանրամասներին: Ինչպես հայտնի է, Նաղաշ Հովնաթանը ապրել է 1661-1722 թթ.: Սուրբ Կարապետ անվամբ էլ Հայաստանի տարբեր շրջաններում եղել են մի շարք եկեղեցիներ, որոնցում, հնարավոր է հոգևոր ծառայություն է կատարել Նաղաշ Հովնաթանի հիշատակած Սիմեոն վարդապետը: Աշխարհագրական և կենսագրական տեղեկությունների մեջ չխորանալով և դա առանձին ուսումնասիրության նյութ թողնելով՝ տաղի բովանդակությանը ծանոթանալով միայն կարող ենք ասել, որ հեղինակը անձամբ ծանոթ է եղել տվյալ հոգևորականին ու գործունեությանը և սրտի խոր կսկիծով է նկարագրել նրա մահը.

*Ողբամ արտասուօք, սրտիւ հեծութեան,
Հառաչամք ձայնիւ, կոծով տխրութեան,
Ջի այսօր լուաք համբաւ դառնութեան,
Թէ վախճանեցաւ Սիմեոն վարդապետ⁵:*

Ողբի բովանդակությունից կարող ենք եզրակացնել, որ Սիմեոն վարդապետը եղել է առաքինի հոգևորական, եկեղեցաշեն ու խո-

⁵ Նաղաշ Հովնաթան, Տաղեր, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1983, էջ 195: Այսուհետև այս գրքից բերվող տաղերի մեջբերման էջերը կնշվեն վերևում – Շ. Ս.:

հեմ գործիչ, որի գործունեությունը նպաստել է քրիստոնեական հավատքի ամրապնդմանն ու հավատացյալ ժողովրդի սերն ու հարգանքն է վայելել.

*Աշխատող եղեր աննինջ և անքուն,
Կազմելով վասն եղբարց խուղ և տուն,
Այլն՝ բարձրաբերձ նոր զանգակատուն,
Շնորհ աթոռոյ, Միմէն՝ն Վարդապետ:* (էջ 195)

Պահելով ողբի ժանրի ավանդույթները՝ Նաղաշ Հովնաթանը նշում է վարդապետի կատարած աստվածահաճո գործերը՝ համեմելով բանաստեղծական խոսքը բազմաթիվ ածականներով, մակդիրներով ու համեմատություններով.

*Ընտիր քարոզիչ, բերան քաղցրահունչ,
Հեզ և համբերող, կալով անմոռունչ,
Թեմ և ժողովուրդ մնաց անտերունչ,
Քաջ հուլի բարի, Միմէն՝ն վարդապետ:* (էջ 197)

Հաջորդ տան մեջ հեղինակը գտնում է, որ ժողովուրդը նրա մահից հետո տխուր է, կարոտ Վարդապետի քաղցր խոսքին և քարոզին.

*Քեզ կու վայելեր թագ և շուրջառն,
Ժողովուրդք մնաց տխուր և դառն,
Քարոզ ասելոյ քո քաղցր բառն
Այլ չենք լսելոյ, Միմէն՝ն վարդապետ:* (էջ 197)

Այս հատվածում կարող ենք մամնություններ տեսնել պատմահայր Մովսես Խորենացու Ողբի հետ, որտեղ 5-րդ դարի մեծագույն պատմիչը ողբում է իր ժամանակի հոգևոր երկու առաջնորդների՝ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի մահը, որոնց գնալով ազգը որբացավ և կարոտ մնաց նրանց խորհուրդներին ու քարոզներին. «Կորեա՛ւ ժողովողն, թագեա՛ւ նաւահանգիստն, ելի՛ք օգնականն, լռեա՛ց ձայնն յորդորեցուցիչ: Ո՞վ այսուհետև զմերս յարգեսցէ զու-

սումն. ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս. ո՞վ զհայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս»⁶:

Իր ողբի վերջում Նաղաշ Հովնաթանը բացատրում է, թե ինչու է իր տաղը բաղկացած քսանչորս տնից՝ նշելով, որ մաքրասուն այդ անձը «քսան և չորս երիցունցսն է», այսինքն՝ կարող ենք ասել, որ Միմեոն վարդապետը ապրել է 72 տարի (երիցս՝ երեք անգամ (ՀՄ)).

*Շարադրեալ բանքըս քսանչորս տուն է,
Քանզի էութիւն և խորհուրդ ունէ,
Ձի ըաբունիս այս, որ մաքրասուն է
Ընդ քսան և չորս երիցունցսն է: (էջ 198)*

«Ողբերգութիւն յաղագս մահուան Մահդասի Շահպագին Արգրումեցոյ, զոր ի Թաւրիէզ քաղաքի հանգեաւ ի Քրիստոս 1161 թուոջ» բանաստեղծության մեջ, ի տարբերություն նախորդի, Նաղաշ Հովնաթանը ողբացել է արդեն ոչ թե հոգևորական, այլ աշխարհիկ մարդու մահը: Տաղի բովանդակությունից կարող ենք ենթադրել, որ երգրումցի Մահդաս Շահպագը եղել է Թավրիզ քաղաքի հայտնի առևտրականներից մեկը, ում եղբորորդու՝ Սարգսի մեկենասությամբ է Նաղաշ Հովնաթանը շարադրել բանաստեղծությունը: Տաղում բանահյուսական սգո երգերի նմանությամբ հեղինակը նկարագրել է անհատի կյանքի, կատարած առաքինի գործերի, վարքի մասին տեղեկություններ՝ միաժամանակ ավստոսանք է հայտնել, որ ժողովուրդը կարոտ է մնացել նրա խոսքին ու գործին և սգացել է նրա մահը.

*Նա էր արուեստիւ մեծ վաճառական,
Անուամբ և գործով, բանիւ պատուական,
Բազմաց ցանկալի և յոյժ սիրական,
Ամէն քեզ կարօտ, Մահդասի՝ Շահպագ: (էջ 199)*

⁶ Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 361-362:

Նաղաշ Հովնաթանի այս տաղը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ ողբը, որպես բանահյուսական ժանր, նվիրվել է ոչ միայն հոգևորական, եկեղեցուն ծառայող սպասավորներին, այլև ունի մեծ ընդգրկվածություն և կարող է հիշատակել նաև աշխարհիկ մարդուն, որն իր կյանքով ու գործունեությամբ վաստակել է ժամանակակիցների և իրեն ճանաչողների սերն ու հարգանքը: Մահդասի Շահպազը, ինչպես նկարագրում է Նաղաշ Հովնաթանը, ճանաչված անձ է եղել ոչ միայն հասարակ ժողովրդի, այլև իշխանավորների և պաշտոնյաների շրջանում.

*Ծանոթ էր համայն մեծաց իշխանաց,
Բարի հաւատով փոխեալ ի կենաց,
Ինքն պակասեալ՝ անունն մընաց,
Այր երևելի, Մահդասի՝ Շահպագ: (Էջ 200)*

Բանաստեղծության հաջորդ տներում տաղասացը նկարագրում է Մահդաս Շահպազի մահվան բոթը լսող և սգացող մարդկանց, մահացողի հարազատների ապրումներն ու վիշտը.

*Ջրեզ ով տեսեալ է, նա զարմացեալ է,
Եւ անունըդ քո երկիրս լցեալ է,
Բայց տե՛ս, թե քանի անչափ լացեալ է
Ձքո մահ լսողն, Մահդասի՝ Շահպագ:
Այսօր քո բարեկամքն ամէն սուգ առին,
Որպէս գունդք ոչխարաց խառնեալ ընդ գառին,
Կարօտ մնացիր քո գեղ-գաւառին,
Իմ դարիպուկ հայր, Մահդասի՝ Շահպագ: (Էջ 201)*

Վերջին տողերից կարող ենք եզրակացնել, որ տվյալ անհատականությունը երկար ժամանակ հեռու է եղել իր հայրենի գավառից և շատ ժամանակ է անցկացրել երկրից դուրս: Տաղի վերջում Նաղաշ Հովնաթանը, կարելի է ասել, հորդորով դիմում է սգացողներին, ակնարկելով, որ որքան էլ լացեն, միևնույնն է, իրենց սիրելի անձնավորությունը հետ չի գա և պետք է ապավինել Աստծո զորությանը, դիմել

նրան՝ Մահդասի Շահապզին որպեզ արժանի գավակ ընդունելու համար, ողորմի տալով նրան.

*Թէպէտ շատ լացաք՝ ոչինչ շահեցաք,
Դարձեալ առ Աստուած ապաւինեցաք: (Էջ 202)*

Նաղաշ Հովնաթանի տաղերի շարքում կա ևս մեկ ողբ՝ նվիրված Գողթն գավառից հայտնի հոգևորական Հոհան աստվածաբանին, վերնագրված «Ողբերգութիւն յաղագս մահուան տեառն Յոհաննու աստուածաբան վարդապետին՝ առաջնորդին Գողթնեաց նահանգին՝ ի Նաղաշ Յովնաթանէ շարադրեալ»: Տաղը կրկին իր ժամանակի հոգևոր առաջնորդներից մեկի մահվան առիթով է գրվել և ինչպես վերը նշված մյուս ողբերի մեջ, այստեղ էլ ներկայացվել է տվյալ անհատի կյանքի աստվածահաճո գործունեության, մաքուր վարքի մասին պատմությունները, միաժամանակ սգալով վերջինիս վախճանը.

*Վարդապետ և քաջ հովիւ,
Մտեր ի հոռ գերեզմանին.
Այսօր ցրուեցան ոչխարքն՝
Ըստ մարգարէական ձայնիւ: (Էջ 193)*

Նաղաշ Հովնաթանից մեզ հասած այս երեք ողբերի կողքին կարելի է հավասարապես քննել նաև իր իսկ մահից հետո գրված ողբը, որը հեղինակել է նրա ավագ որդին՝ Նաղաշ Հակոբը և որը Նաղաշ Հովնաթանի կյանքի մասին գրավոր միակ աղբյուրն է: Նաղաշ Հակոբը, պահպանելով ողբի ժանրին հատուկ բոլոր առանձնահատկությունները, գեղարվեստականորեն և բանաստեղծական նուրբ ելևեջներով նկարագրել է հոր կյանքի դրվագները՝ ողբալով և ցավ ապրելով նրա մահվան կապակցությամբ.

*Ողբամ արտասուոք, կոծով տիրութեան,
Հառաչմամբ ձայնիւ, սրտիւ դառնութեան,
Այսօր անկայ ես մեղաց մէջ մթան,
Քանզի վախճանեաց հայրն իմ Յովնաթան: (Էջ 225)*

Որբացած Հակոբը ցավ է ապրում, որ կյանքից հեռացել է շնորհալի մի վարպետ, ում ձեռքով զարդարվել են բազմաթիվ սուրբ տներ՝ եկեղեցիներ, մարդ, որը հռչակավոր անուն ուներ, չափազանց ուսումնաստենչ էր, շնորհալի ու բազմաշխատ: Այժմ զրկվել են բոլորը նրա հայրական բարի խրատներից ու խորհուրդներից.

Շարադրող բանիս նուաստ և անպիտան

Որբացեալ Յակոբ, գերիս անարժան,

Ես ծառայ լինիմ միշտ և յավիտեան

Քո գերեզմանին, իմ հայր Հովնաթան: (Էջ 229)

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Նաղաշ Հովնաթանի տաղերից մի քանիսը արտահայտում են հայ բանահյուսության սգո երգերի կամ ողբի ժանրի առանձնահատկությունները, տարբերվելով բանահյուսական երկերից նրանով, որ դրանք հեղինակային են և կարող են զրված լինել որևէ մեկի հանձնարարությամբ կամ պատվերով: Նաղաշ Հովնաթանի ողբի տաղերում, ինչպես բանահյուսական սգո երգերում, առկա է մահացած մարդու փառաբանումը, այդ երգերին հատուկ նույնատիպ մակդիրների կրկնությունը, համանման արտահայտչամիջոցները, կրկնակները, դիմումների ձևերը, ձայնարկությունները, որոնք ուժեղացնում են տվյալ ողբի զգացմունքային կոդմը, նրա ներգործությունը; Նաղաշ Հովնաթանի ողբերը նաև մահացածի հարազատներին սփոփող երգեր են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ էջ 4

ПРЕДИСЛОВИЕ էջ 6

FOREWORD էջ 8

ԱԵԼԻՏԱ ՂՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԸ ՆՈՐԱՐԱՐ..... էջ 10

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ..... էջ 25

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ..... էջ 32

ՌՈՒԶԱՆ ՂՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԸ ԵՐԳԻԾԱԲԱՆ..... էջ 45

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԵՐԸ..... էջ 59

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ..... էջ 75

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

«ՈՂԲ»-Ի ԺԱՆՐԸ ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐՈՒՄ..... էջ 91

ՆԱԴԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

Հոդվածների ժողովածու


Ստորագրված է տպագրության :
Չափսը՝ թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ
Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru

108943



ISBN 978-9939-899-35-0



9 789939 899350

۱۰۸۹۴۳